

«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 2(3)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№2(3)

ԵՐԵՎԱՆ 2019

Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան,
Բագրատ Էսդուգյան (Թուրքիա,Ստամբուլ),
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Համլետ Գևորգյան,
Հովսեփ Աղաջանյան, Մարտին Գիլավյան,
Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

1920 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 – Ի ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Համաձայնագրի նախագիծ, հայ – թուրքական պատերազմ, բանակցություններ, Բորիս Լեգրան, Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Ռուսաստան, խորհրդայնացում, Մուսատֆա Քեմալ, բոլշևիկներ, դաշնակիցներ, պայմանագիր, անկախություն:

1920թ. օգոստոսի 24–ի ռուս–թուրքական համաձայնագրին նվիրված մեր քննական վերլուծության մեջ[1] մենք փորձել ենք ապացուցել, որ այն թեև նպաստեց հայ–թուրքական պատերազմի սկզբնավորմանը, բայց դա ամենևին չէր նշանակում, որ ռուսները հեշտորեն պետք է հանդուրժեին քեմալականների կողմից Հայաստանի գրավմանը: Եվ երբ սեպտեմբերի վերջերին թուրքերն հարձակվեցին Հայաստանի վրա, ռուսները մի կողմից դաշնակիցներին նեղուցներից դուրս քշելու ցանկությամբ պայմանավորված օգնեցին Քեմալին, բայց մյուս կողմից էլ տվյալ պահին դեռևս չհստակեցված սահմաններով

[1] **Աշոտ Ներսիսյան,** 1920թ. օգոստոսի 24–ի ռուս–թուրքական համաձայնագրի նախագծի քննական վերլուծություն, տես «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3(19), Երևան, 2018, էջ 5–15:

Հայաստանի պահպանումը նրանց համար կարևոր նշանակություն ուներ: Դրա վառ ապացույցն են հայ – ռուսական բանակցությունները, որոնք հոկտեմբեր ամսին վերսկսվեցին Երևանում:

1920թ. հայ – թուրքական պատերազմն ընթացքի մեջ էր, երբ հոկտեմբերի 11-ին 47 հոգանոց շքախմբով Երևան է ժամանում Բ. Լեգրանը: Նույն օրն իսկ նա տեսակցություն է ունենում վարչապետ Հ. Օհանջանյանի հետ, իսկ հաջորդ օրվանից սկսվում են բանակցությունները նրա և Լ. Շանթի պատվիրակությունների միջև: Հայաստանի կառավարությանը բազմիցս են մեղադրել արևմտամետ կողմնորոշման համար, այն հիմքով, որ դեռևս 1920թ. մայիսից նրա խորհրդայնացումը կարող էր կանխել գալիք արհավիրքները և Հայաստանն ավելի շատ տարածքներ կարող էր շահել: Այս տեսակետը չի հիմնավորվում: Բայց, կարծում ենք, որ հոկտեմբերին Հայաստանը կտրուկ կերպով պետք է հրաժարվեր արևմտամետ կողմնորոշումից, քանզի Դաշնակիցներն արդեն նրան որևէ կոնկրետ օգնություն չէին ցուցաբերում թուրքերի դեմ պատերազմում, ավելին՝ իրենք էին ձգտում նորմալ հարաբերությունների քեմալականների հետ: Հայաստանի նման քայլը ձեռնտու էր Ռուսաստանին, որը, խաղաքարտ կունենար իր ձեռքին Թուրքիային զսպելու համար, որը հակառակ պայմանավորվածության չէր բավարարվել դեռևս օգոստոսին Սարիղամիշ-Շահթախտ գծի զիջումով, այլ՝ շարունակում էր առաջխաղացումը: Այս դեպքում միգուցե

հնարավոր լինել զսպելու թրքամետ բոլշևիկներին, ինչում համոզվում ենք Չիչերինի 1920թ. հոկտեմբերի 5-ին Թիֆլիս՝ Բ. Լեգրանին ուղարկած հեռագրից, ուր նա հայտնում է իր մտահոգությունը թուրքական առաջխաղացման նկատմամբ, շեշտելով, թե՝ «մենք չենք կարող թույլ տալ նրան ճզմելու»[1] : Հասկանալի է, որ այստեղ խոսքը վերաբերվում է Հայաստանին: Այս առումով բավական խոսուն է Չիչերինի հետևյալ տեղեկությունն այդ օրերի մասին. «Այդ ժամանակ Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունները ժամանակավորապես մթագնեցին այն բանի հետևանքով, որ թուրքական կառավարությունը չէր ցանկանում թույլ տալ Ռուսաստանի միջնորդությունը Թուրքիայի և Հայաստանի միջև մղվող պատերազմում»[2] : Իսկ այդ միջնորդությունն անհնար էր, քանի դեռ Հայաստանը չէր հրաժարվում Սևրի պայմանագրից: Ահա թե ինչու է Հայաստանի հետ վերջնագրի լեզվով խոսում Լեգրանը Երևանում: Չպետք է նաև անտեսել այն հանգամանքը, որ Բաքվի ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն նույնպես վերջնագրի ձևով դնում էր Հայաստանի վրա կարմիր բանակի հարձակման պահանջը, որին դեմ էին Չիչերինը և Լեգրանը: Հայաստանի կողմից Լեգրանի պահանջների ընդունումը կարող էր զսպել նաև նրանց: Մինչև վերջնագիրը նա հոկտեմբերի 7-ին

[1] **Մ. Վ. Արզումանյան,** Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973 էջ 333:

[2] **Г. В. Чичерин,** Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961, ст. 196.

հետևյալն է հեռագրում Չիչերինին և Օրջոնիկիձեին, որը գտնում էր, որ ժամանակն է օգտագործել Հայաստանում ստեղծված դրությունը և օգտագործել այն՝ այնտեղ խորհրդային իշխանություն հռչակելու համար, կարմիր զորքերով ապահովելով Հայաստանի անձեռնմխելիությունը Թուրքիայից. «Մտադիր եմ առաջարկով դիմել Հայաստանի կառավարությանը՝ պաշտոնապես հրաժարվելու Սևրի պայմանագրի հիման վրա Թուրքահայաստանի մարզերը զինված ուժով գրավելու ամեն ձգտումներից: Թուրքիայի հետ սահմանների տարանջատման խնդրում համաձայնություն տալ Խորհրդային Ռուսաստանի միջնորդությանը, Խորհրդային Ռուսաստանին Հայաստանի երկաթուղիներով ռազմական տրանզիտի իրավունք տալ:

Գտնում եմ, որ այս պայմանները, հայերի համաձայնության դեպքում, լավագույն ելքն են ստեղծված դրությունից դուրս գալու համար: Դա մեզ լրիվ իրավունք կտա պահանջել ու կանգնեցնել թուրքերի ռազմական գործողությունները և մաքրել Հայաստանի տարածքները:

Ինչ վերաբերվում է խորհրդայնացմանը, ապա թուրքերի ներխուժման պահին այն չի կարող վայելել զանգվածների համակրանքը, կբերի դաշնակցական հրոսակախմբերի հետ կատաղի պայքարի, որոնք պարտիզանական պայքարում կարող են լուրջ դիմադրություն ցույց տալ: Մեր կողմից բավարար ուժերի բացակայության պատճառով դժվար կլինի խուսափել այդ նպատակի համար

թուրքական ուժերի օգտագործումից, որը որոշակիորեն աղմկահարույց բնույթ կտա ամբողջ գործողությանը:

Խնդրում եմ, Խորհրդային կառավարության կողմից ինձ լիազորել, **հայերի համաձայնության դեպքում, շարադրված պայմանները ներկայացնել թուրքական հրամանատարությանը՝ պահանջելով դադարեցնել ռազմական գործողությունները և մաքրել Հայաստանի տարածքը»**[1] (Ընդգծումները մերն են – Ա. Ն.):

Հայտնի պատմաբանի աշխատությունից այս մեջբերումից մեկ անգամ ևս կարելի է հետևեցնել, որ, ա) Խորհրդային Ռուսաստանին ամենևին ձեռնտու չէր ամբողջ Հայաստանի թուրքերի կողմից գրավումը, բ) Հայաստանի խորհրդայնացման հարց դեռևս չէր դրվում ուժերի անբավարար լինելու, հնարավոր դիմադրության և թուրքերին այդ նպատակով օգտագործելու աննպատակահարմարության պատճառով, գ) Լեգրանը ձգտում էր հասնել նրան, որ Հայաստանը մաքրվի թուրքական զորքերից:

Սակայն, այս ամենը կախված էր Հայաստանի կառավարության վերաբերմունքից, որին հոկտեմբերի 13 – ին Լեգրանը ներկայացնում է վերջնագիր, որոնք ներառում էին նաև հիշյալ հեռագրում հիշատակված պահանջները: Սա նշանակում է, որ նա ստացել է Չիչերինի թույլտվությունը:

[1] **Լենդրուշ Խուրշուդյան,** Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, էջ 181-182:

Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Հոկտ 13 – ին Լեգրանը ներկայացրեց մի շարք պահանջներ, որոնցից գլխավորներն էին 1) հրաժարվել Սեւրի պայմանագրից, 2) թոյլ տալ խորհրդային զորքերին, իրենց ռազմամթերքով, անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խճուղիներով՝ միանալու համար Մուստաֆա Քեմալի զորքերին, դաշնակիցների հետ կռւելու նպատակով, 3) սահմանավէճը Հայաստանի եւ հարեւանների միջեւ լուծել Խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ»[1]:

Իսկ ի՞նչ է պատասխանում Հայաստանի պատվիրակությունը: Ըստ Ս. Վրացյանի՝ «Հայաստանի պատւիրակութիւնը վճռականապես մերժեց ընդունել առաջին կետը, իսկ մյուս բոլոր կէտերի վերաբերմամբ կայացավ համաձայնութիւն եւ կազմւեց դաշնագրի նախագիծ, որով 1) Խորհրդ. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախութիւնը եւ ներքին անձեռնմխելիութիւնը, Հայաստանի մէջ պիտի մտնէր եւ Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի եւ Նախիջեւանի վիճակը պիտի որոշւեր իրաւարարութեամբ. 2) Խորհրդ. Ռուսաստանը իսկոյն պէտք է միջամտէր՝ կասեցնելու համար պատերազմը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ. 1914թ. սահմանի վրա պէտք է ստեղծւեր չէզոք գոտի եւ հայ – թիւրքական սահմանավէճը լուծւեր Խորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտութեամբ. 3) Հայաստանը համաձայնւում էր թոյլ տալ անցնելու իր

[1] **Ս. Վրացեան,** Հայկաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 458:

ճանապարհներով ռուսական զօրքերին. Հայաստանի վրայով դէպի Թիւրքիա փոխադրուելիք զէնքի 30 տոկոսը պէտք է մնար Հայաստանում իբրեւ ինքնապաշտպանութեան միջոց. 4) Հայաստանն ընդունում էր Խորհրդ. Ռուսաստանի միջնորդութիւնը իր եւ իր հարեւանների հողային վէճերը լուծելու համար. 5) Խորհրդ. Ռուսաստանը պէտք է վճարէր Հայաստանին երկու եւ կէս միլիոն ոսկի ռուբլի, պէտք է բանար նաւթային ճանապարհը, տար երկրագործական գործիքներ, յանձնէր Մոսկւայում գտնուող էջմիածնական գոյքերը, դիւրութիւններ տար Ռուսաստանին մի քանի կենտրոններում հաւաքւած հայ գրենական եւ գեղարուեստական երկերը Հայաստան փոխադրելու, արտօնէր եւ աջակցէր հայ գաղթականների վերադարձին եւ այլն:

Համաձայնութիւնը երկուստեք կայացաւ, - շարունակում է Ս. Վրացյանը, - եւ Լեգրանը մեկնեց Բագու՝ ստանալու համար Մոսկվայի վերջնական հաւանութիւնը, որից յետոյ պիտի վերադառնար Երեւան, ուր եւ պիտի ստորագրուեր բարեկամութեան եւ խաղաղութեան դաշինքը Խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ: Գնաց - եւ այլեւս դաշնագրի խօսքը չլսւեց»[1] :

Ս. Վրացյանը փաստորեն խոսում է հայ – ռուսական համաձայնագրի նախագծի մասին, որը չի ստորագրվում[2]:

[1] Նույն տեղում, էջ 458 – 459:

[2] Այս Համաձայնագրի կետերը որոշ տարբերություններով ներկայացրել են շատերը: Տե՛ս Ալ. Խատիսեան, նշվ աշխ., էջ 261- 262, Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, Պէյրութ, 1956, էջ 70, Հ. Տերտերեան, Շանթի պատւիրակութիւնը,

Հարց է առաջանում՝ ինչու՞: Կարծում ենք հետևյալ պատճառներով. 1) Թեպետ պայմանագրի կետերում այդ մասին չի նշվում, բայց Հայաստանը չի հրաժարվում Սևրի պայմանագրից, 2) Հայաստանի խորհրդայնացման հարցը նույնպես չէր դրվում, բայց առանց դրա Խորհրդային Ռուսաստանը չէր կարող կանխել թուրքական առաջխաղացումը, որը նրան այնքան էլ ձեռնտու չէր, 3) Հայերի՝ Անտանտի դաշնակից ընկալվելու պայմաններում բավական բարդ էր վիճելի տարածքները, թեկուզ և Զանգեզուրը, ճանաչել Հայաստանի մաս: Ընդհանրապես ընդունված է մեր կորուստները կապել օտարների հետ: Բայց պետք է համարձակություն ունենալ խոստովանելու նաև սեփական սխալները: Ընթանում էր թուրք – ռուսական մրցակցություն Հայաստանին տիրելու և այն բաժանելու համար՝ առանց սահմանների վերջնական ճշգրտման: Քեմալականները սոցիալիստի դիմակ էին հագել: Հայկական բանակը չէր դրսևորում անհրաժեշտ մարտունակություն: Ուրեմն, հետևությունը մեկը պետք է լիներ՝ անհրաժեշտ է, որ Հայաստանն էլ կարմիր դիմակ հագնի: Բայց այս ըմբռնումը տակավին չկար և երբ ղեկավար շրջանակներում հասավ որոշակի ընդհանրության, արդեն շատ ուշ էր:

Համաձայնագրի նախագծի կետերը սկզբնաղբյուրներում փոքր-ինչ իրարից տարբերվում են: Ավել

«Հայրենիք» ամսագիր, թիւ 5, 1954, էջ 10-11: Արձանագրության ամբողջ տեքստը տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 632, թ. 1- 5 և 11:

կամ պակաս են ներկայացվում նաև նրա կետերը: Պատմաբան Է. Զոհրաբյանն իր մի աշխատության մեջ առանց աղբյուրը նշելու՝ խոսում է բանակցությունների քննարկման առարկա 17 հոդվածների մասին՝ երկու կից լրացումներով, որոնք փաստորեն չեն ստորագրվում[1]: Հոկտեմբերի 28 - ին ստորագրվում է Եզրափակիչ որոշման արձանագրությունը: Լ. Խուրշուդյանը նույնպես խոսում է քննարկվող նախագծի մասին[2], որը ներկայացնում է Շանթը և որի հետ կապված առաջարկություններ է անում Լեգրանը: Համաձայնագրի նախագծի մասին համաձայնության են գալիս հոկտեմբերի 21 – ին: Այն ուներ հետևյալ հիմնական կետերը.

1. Հայաստանի Հանրապետությանն են թողնվում ամբողջ Երևանի նահանգը, Կարսի նահանգը, Զանգեզուրի գավառը, Ղազախը և Լոռին:

2. Թուրքական զորքերը պարպում են ամբողջ Արևելյան Հայաստանը մինչև 1914թ. սահմանը:

3. Ռուսաստանը Հայաստանին տալու էր նավթ, ապրանքատար վագոններ և այլ անհրաժեշտ պիտույքներ,ինչպես նաև 2,5 մլն. ռուբլի՝ որպես հատուցում պատերազմի վնասների:

4. Հայաստանը Ռուսաստանին տալու էր տրանզիտի իրավունք՝ զենք և ռազմամթերք փոխադրելու դեպի Թուրքիա,

[1] **Է. Ա. Զոհրաբյան,** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922թթ.), Երևան, 1979, էջ 232 – 235:
[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 202 – 203:

Տրապիզոն - Կարին - Մուշ գծից ներս, պայմանով, որ դրանք չօգտագործվեն Հայաստանի դեմ և դրանց 25 տոկոսը մնա նրան:

5. Խորհրդային Ռուսաստանը միջամտելու էր՝ կասեցնելու համար Հայաստանի և Թուրքիայի միջև պատերազմը, իսկ հայ թուրքական սահմանավեճը լուծվելու էր դարձյալ նրա միջամտությամբ:

6. Ղարաբաղի և Նախիջևանի հարցը լուծվելու էր Ռուսաստանի իրավարարությամբ:

7. Հայաստանին էին վերադարձվելու Մոսկվայում և Ռուսաստանի այլ հայաբնակ քաղաքներում պահված Էջմիածնի գույքերը, ինչպես նաև պատմամշակութային նշանակության այլ արժեքների փոխադրությունը Հայաստան:

8. Խորհրդային Ռուսաստանն արտոնում էր առհասարակ բոլոր հայ գաղթականների անարգել ներգաղթը Հայաստան[1]:

Հետաքրքիր է, որ Ա. Տերտերյանի հուշերում ներկայացված համաձայնագրի նախագծի մեջ 4-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը.

«4. Սեւրի դաշնագրից հրաժարուելու դէպքում, խորհրդային կառավարութիւնը պարտաւորւում է ճնշում բանեցնել թուրքերի վրայ՝ Էրզրումի վիլայէթից որոշ հողամասեր զիջելու Հայաստանին»[2]:

[1] Տե՛ս 7 – րդ հղումը:

[2] «Հայրենիք» ամսագիր, թիվ 5, 1954, էջ 10:

Հետաքրքիրն այն է, որ մյուս սկզբնաղբյուրներում այս կետը չկա: Բայց, անկախ այդ հանգամանքից, մի բանի մասին է այդ վկայում՝ ռուսների համար կարևոր նշանակություն ուներ Սևրից Հայաստանի հրաժարումը: Եվ եթե ընդունենք էլ, որ այդ կետը չի եղել, համենայն դեպս, անկախ դրանից Լեգրանը համոզված չի եղել , որ Հայաստանը ձեռք է քաշում Արևմուտքից: Փաստորեն այս կետը եթե եղել է, ապա հակասում է Ս. Վրացյանի այն վկայությանը, որ Սևրից հրաժարվելու Լեգրանի պահանջը կտրուկ կերպով մերժվել է: Սակայն, անկախ այն հանգամանքից՝ եղել է Տերտերյանի հիշատակած կետը նախագծում, թե՝ ոչ, սրա վավերացումն ինքնին նշանակում էր դրանից հրաժարում, որովհետև հայ-թուրքական հարաբերություններին վերաբերվող հիմնական հարցերը հանձն էր առնում լուծել Ռուսաստանը: Անաչառ լինելու համար պետք է պնդել, որ գործնականում Հ. Օհանջանյանի կառավարությունը այնքան էլ հակված չի եղել այս հանաձայնագրի նախագծի իրականացմանը և դարձյալ կողմնորոշված է եղել դեպի Արևմուտքը: Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ կառավարության մեջ այդ օրերից սկսած առկա է եղել երկու քաղաքական ուղղվածություն՝ ա. հավատարիմ մնալ Դաշնակիցներին, որի ջերմեռանդ կողմնակիցը Հ. Օհանջանյանն էր, բ. շարունակել պայքարը թուրքերի հետ՝ հաղթանակի հույսով՝ դաշնակցելով Վրաստանի հետ, որին հիմնականում

ձգտում էր պաշտպանության նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը: Այս ուղղությանն ավելի շատ հակված էին արևմտահայերը, որոնք անկախության պահպանման կողմնակից էին: Անկախության գաղափարին անմնացորդ նվիրված էին նաև Սեպուհը, Սմբատը և մի քանի ուրիշներ: Իսկ արդեն նոյեմբերի սկզբներին ձևավորվում է նաև թուրքերի հետ բանակցելու անհրաժեշտության համոզումը, որի հիմնական կողմնակից հանդես է գալիս Ալ. Խատիսյանը: Ինչ վերաբերվում է Հայաստանի խորհրդայնացմանը հակվածությանը, ապա թերևս կարելի է պնդել, որ այն ունեին Դրոն և ավելի ուշ արդեն Ս. Վրացյանը: Սա ամենևին այն հետևության տեղիք չպետք է տա, որ Դրոն կողմնակից չի եղել կռվելուն: Պատերազմի ժամանակ եթե խոսում ենք հաղթանակներից, ապա դա տարել են միայն Դրոն և Սեպուհը, որի ամբողջ բրիգադը, ցավոք սրտի չդրեցին նրա տրամադրության տակ:

Բայց այստեղ կարևորն այն է, որ պետք է ընտրվեր առավել քիչ զոհողությամբ առաջնորվելու ուղին, որը համենայն դեպս դեպի Դաշնակիցները կողմնորոշումը չէր: Չպետք է նաև անտեսել մի հանգամանք ևս՝ դաշնակիցներն ամեն կերպ ճնշում էին կառավարությանը՝ հայ-ռուսական մերձեցման փորձերի ժամանակ: Այս առումով հետաքրքիր է համաձայնագրի նախագծից հետո Ստոքսի դիրքորոշումը: Անկախ այն հանգամանքից, որ դաշնակիցները դեմ էին Թուրքիայի վերազարթոնքին, նրանց այդ ավելի ձեռնտու էր,

քան միշտ նեղուցներին հավակնող Ռուսաստանի հզորացումը: Նրանք աշխատել են Անդրկովկասը զերծ պահել Ռուսատանի նվաճման վտանգից: Լեգրանը հոկտեմբերի 24-ին Չիչերինին հետևյալն է հեռագրել.«Մեր բանակցությունները գրավել են Անտանտի լարված ուշադրությունը: Եկավ անգլիական կոմիսար Ստոքսը, որը վաղուց չէ, որ մեկնել էր Երևանից: մեզ հասած տեղեկությունների համաձայն Ստոքսը առաջարկել է անդրկովկասյան ֆեդերացիայի պլան, որի մեջ պետք է մտնեն, Հայաստանից և Վրաստանից բացի, նաև Ադրբեջանը, որտեղ Ստոքսի հաշվումներով, մուսավաթականները շուտով կգրավեն իշխանությունը և կապ կհաստատեն Դաղստանի հետ: Երևի այդ կապակցությամբ է, որ Վրաստանի նախկին ռազմական մինիստր Գեորգաձեն մի շարք զինվորականների հետ միասին եկել է Երևան: Սպասվում է, որ ֆրանսիական ներկայացուցիչը ևս ժամանի: Ստոքսը Երևանում թողել է իր մշտական ներկայացուցիչներին, մի բան, որ առաջ չէր անում: Բացի դրանից, այստեղ կան իտալական և ամերիկյան ներկայացուցիչներ»[1]:

Ինչպես համոզվում ենք, Անտանտը չէր հաշտվում Հարավային Կովկասի կորստի հետ, բայց կարծում ենք, որ միջոցառումների մշակման առումով արդեն ուշացել էր և

[1] **Ս. Ալիխանյան,** Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, էջ 148-149:

հայերի համար ճիշտը ԱՄՆ դերծովակալ Բրիստոլի տված խորհրդին հետևելն էր: Մեր ձեռքի տակ է ՀՀ Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի «26 հոկտեմբերի, 1920, թիվ 478» գրությունը արտաքին գործոց նախարարին՝ Հ. Օհանջանյանին, որը նույնպես հաստատում է այդ տեսակետի ճշտությունը: Այն հարկ ենք համարում ամբողջովին մեջբերել, քանզի կարևոր եզրակացությունների տեղիք է տալիս: Բեկզադյանը գրում է.

«Երէկ ցերեկը եւ երեկոյան երկու նիստ ունեցանք Վրաց Դելեգացիայի հետ, որի մեջ մտնում են Ռամիշվիլլի, Սաբախտարաշվիլլի եւ Ս. Գ. Մդիվանին: Երկու նիստերումն էլ նրանք սկսում էին սահմանավեճէրից, իսկ մենք – նրանց մեզ անելիք գործնական աջակցությունից: Վերջինից նրանք շարունակ խուսափում էին, սակայն երկրորդ նիստում /որին նրանք հրաւիրել էին նոյն իսկ գեներալ Զախարիաձէին /Начал. Штаба/ ըստ երեւոյթին սահմանավէճերի մասին նրա կարծիքն էլ ունենալու դիտաւորութեամբ/: Նրանք ստիպւած եղան անցնել մեր դրած հարցին եւ արտայայտւեցին պարզ եւ բնորոշ: Ռամիշվիլլին յայտնեց հետեւեալը: - Այո, վտանգը մենք համարում ենք ընդհանուր եւ գտնում ենք, որ պետք է աջակցէնք Հայաստանին, որ նա կարողանա դիմադրել իր թշնամիներ, դրա համար մենք անում ենք այն ինչ որ կարող ենք ներկայ մոմենտում – ցույց տալ Ձեզ թէ բարոյական թէ նիւթական աջակցութիւն: Բարոյականը – մեր բողոքն է Чичерин – ին եւ այն միտինգը, որտեղ այնպես բուռն

համակրանքով արտայայտվել են մեր ականաւոր ներկայացուցիչները Լոմտատիձեն եւ Ջուգելին, որոնց ճառերի համար մեր Արտաքին Գործերի Նախարարութիւնը ստիպւած է եղել ներողութիւն խնդրել Սովետական ներկայացուցչութիւնից: Նիւթականը – մենք Ձեզ հնարավորութիւն տալիս զինակոչի ենթարկել մեր հպատակ հայերին, տալիս ենք նաւթ, թոյլ ենք տալիս արտահանել եւ ռազմական պիտոյքներ եւ այսպիսով խախտում ենք նոյնիսկ մեր չեզօքութիւնը ի վնաս մեր շահերի յօգուտ ձեզ - վտանգելով մեր յարաբերութիւնները Սովետական Ռուսաստանի հետ: Ինչ եք ուզում ավելին՝ սա արդեն «բարեացակամ չեզոքութիւն» չէ, այլ խախտումն է ամեն չեզոքութեան: Աւելին մեզնից մի պահանջէք – Ռուսաստանի դէմ մենք այժմ չենք կարող կռւել, որովհետեւ պայմանագիր ունինք, որը չենք ուզում խախտել, իսկ Քեմալի հետ մենք սկսել կռիւ չենք կարող, որովհետեւ ունինք թիւրք հպատակներ Աջարիա, Ախալցխայում, որոնց գրգռելու ոչ մի հարկ չունինք գոնէ առայժմս: Բայց մենք միշտ պատրաստ ենք երեք օրւայ ընթացքում յայտարարել մոբիլիզացիա եւ կռիւ սկսել եթէ նրանք յարձակւեն մեզ վրայ: Իսկ Մդիվանին աւելացրեց դրան, որ իր կարծիքով ոչ մի զինւորական գործակցութեան մասին խօսք խոսք լինել չի կարող մինչեւ մինչեւ որ սահմանավեձերը չվճռւեն: Ռամիշվիլլին աշխատեց մեղմացնել մի քիչ այդ հայտարարութեան տպավորութիւնը, բայց իզուր:

Այսպիսով վրացիների դիրքը պարզ է և շահեկան իրենց տեսակէտից: Ռուսական վտանգը մեր դէմ նրանք **լուրջ չեն համարում** , **ուստի եւ չեն վախենում, որ մենք կարող ենք շուտով ընկնել նրանց ազդեցութեան շրջանի մէջ եւ դառնալ «սովետական»**: Իսկ ինչ վերաբերվում է Քեմալին – **նրանից իրանք իրանց վտանգւած չեն համարում** եւ չեն ուզում նրա դեմ կռւել մեզ համար եւ մեզ հետ – թէկուզ, ի հարկէ, բացարձակ չեն ասում որ իրենք իրենց վտանգւած չեն համարում, այլ պնդում են հակառակը: Այդպիսով պարզ պէտք է համարել, որ վրացիները մեզ հետ չեն կռւելու եւ այլեւս նրանց վրա որեւէ յոյս դնելու չէ, եթէ նրանք չխանգարեն մեր մոբլիզացիային եւ տրանզիտին եւ տան իսկապէս դիւրութիւններ որոշ կարեւոր ապրանքներ արտահանելու այստեղից եւ Բաթումից - դա ամենամեծ աջակցութիւնը պիտի համարել, որը նրանք այժմ տրամադիր են մեզ անելու: Զախարիաձեի ասելով մեր դէմ կռւում են 18000 զորք / երեք դիվիզիա/ որից երեքական հազար Օլթիի, / նոր 3 - ая Дивизия- ի մասերը/ Մերդենիկի եւ Իգդիրի շրջանում, մնացածը Ղարսի շրջանում, այդ թիւը համարեա թէ ճշտւեց Ստոքսի տւեալներով, որը այսօր իմ հետ ունեցած տեսակցութեան ժամանակ յայտնեց, որ մեր դրութիւնը շատ ծանր է եւ որ ինքը արդեն երեք շաբաթ է, որ հեռագրել է իր կառավարութեանը եւ ոչ մի պատասխան չունի մինչեւ հիմայ: Բնորոշ էր շատ, որ երբ պնդում էի, Անտանտայի ներկայացուցիչները այստեղ մի կոլեկտիւ

ճնշում գործ դնեն վրացիների վրայ, որպէսզի նրանք գան մեզ օգնելու, նա ինձ համոզում էր որ նպատակայարմար է ավելի որ ես **գրաւոր** ձեւակերպեմ մեր դիմումը, ինչպէս որ պահանջում են վրացիք – չէ որ դրանից ոչ մի վնաս չկայ - աւելացնում էր նա: Մոռացա գրել որ վրացիք առաջարկում էին շուտով մեր վեճերը արբիտրի յանձնել, ընտրելով նրան անմիջապէս եւ սահմանափակելով վեճի առարկան: Մեր կարծիքը հակառակն էր – որ եթէ վէճը պիտի յանձնուի արբիտրի, ապա սահմանափակելու մասին խօսք չը պիտի լինի: Վերջինիս պիտի ներկայացուեն երկու կողմերի պահանջների maxsimum – ը եւ ոչ minimum – ը: Այդ խնդիրը մնաց հետեւեալ ժողովին, որում պիտի կարդացւի նախկին ժողովների արձանագրութիւնը եւ վավերացւի: Եւ դա կլինի այն գրաւոր документ – ը, որին կարծես թէ Ստոքսը այնքան մեծ նշանակութիւն է տալիս:

Ստոքսը ինձ յայտնեց, որ Խատիսեանը իրեն հեռագրել է ու նորից աջակցութիւն խնդրել եւ որ ինքը այսօր անմիջապէս հեռագրել է իր կառավարութեան, որը սակայն չի պատասխանում իրեն: Նա յայտնեց, որ այժմս **նա էլ եկաւ այն համոզմունքի, որ վրացիները մեզ հետ չեն կռւելու եւ մեզ չեն օգնելու**, աւելացնելով դրան նաեւ իր պատճառաբանութիւնը, որ նրանք պիտի նաւթ ստանան Ադրբեջանից եւ պիտի իրենց եգիպտացորենը հաւաքեն արեւմտեան Վրաստանում: Ի դէպ, այսօր մասնաւոր աղբիւրներից իմացա իբր թէ Ստոքսը ասել է որ իր դրութիւնը

բավական անյարմար է այժմս, որովհետեւ նրա կառավարութիւնը նրան կտրուկ «դիրեկտիվներ» չի տալիս բոլշեւիկների վերաբերեալ: Դրա պատճառն այն է, որ Անգլիայի կաբինէտի մէջ երկու հոսանք կայ, մէկը կտրականապէս բոլշեւիկների դէմ – միւսը նրանց հետ համաձայնութեան գալու կողմնակից: Եւ որովհետեւ այդ երկու հոսանքները դեռ մրցում են եւ ոչ մի կողմը դեռ չի յաղթել , ուստի եւ ինքը մնում է առանց որոշ Директив – ների: Այս հանգամանքը պէտք է ի նկատի ունենալ եւ առանձին յոյսեր չդնել նրա խոստումների վրայ:

Դիւանագիտական ներկայացուցիչ՝

(ստորագրություն)»[1]:

(Ընդգծումները՝ Տ. Բեկզադյանի – Ա. Ն.):

Չիչերինին Լեգրանի հեռագիրը և Բեկզադյանի այս գրությունը կարևոր եզրակացությունների տեղիք են տալիս՝ կապված նաև այդ պատճառների հետ: Այդ եզրակացությունները հետևյալներն են.

Առաջին. Փաստորեն Արևմուտքը ամեն կերպ ձգտել է խոչընդոտել կովկասյան ժողովուրդների, այդ թվում, բնականաբար, նաև հայերի դեպի Ռուսաստան կողմնորոշումը: Հայաստանի կառավարությունը չէր կարող դա անտեսել, քանզի նրա նյութական աջակցությամբ էր սպառազինել իր բանակը, վերականգնել երկրի տնտեսությունը և այլն: Սա նշանակում է՝ դյուրին խնդիր

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 1-3:

չէր նրանից հրաժարվելը, մանավանդ Սևրի դաշնագրից, ինչին ձգտում էր Ռուսաստանը: Իսկ Արևմուտքից կառչած մնալը նպաստում էր Թուրքիային, Ադրբեջանին և ՌԿ(բ)Կ թուրքամետ ներկայացուցիչներին խոչընդոտելու այդ համաձայնագրի ստորագրմանը:

Երկրորդ. Վրացիները պարզ հայտարարում էին, որ իրենք չեն դաշնակցելու հայերի հետ ընդդեմ թուրքերի և ռուսների, պատճառաբանելով, որ Հայաստանը չի խորհրդայնացվի և որ իրենք ռուսներ հետ ունեն պայմանագիր: Նրանք Քեմալից էլ վտանգ չէին սպասում, քանի որ նա մինչև Հայաստանի վրա հարձակումը գաղտնի համաձայնության էր եկել Վրաստանի հետ՝ վերջինիս չեզոք մնալու մասին: Այդ մասին Ալ. Խատիսյանն իր գրքում մեջբերում է Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ Կարաբեքիր փաշայի խոստովանությունը. «Դեռ հայերու դէմ պատերազմական գործողութիւններ սկսելէ առաջ, ըսավ ան, Անգորայի ներկայացուցիչները ի դէմս Եուսուֆ Քեմալ բէյի եւ Ալի Ֆուատ փաշայի 1920թ. ամռանը եղան Թիֆլիս և վրաց կառավարութեան հետ դաշն կապեցին, որու զորութեամբ Վրաստանը , հայ – թրքական պատերազմ ծագելու պարագային, պէտք է չէզոքութիւն պահէր եւ ատոր փոխարէն պետք է ստանար Բորչալուի եւ Ախալքալաքի գաւառները եւ Արտահանի շրջանը: Կարաբեքիրը նոյնիսկ ցոյց տուաւ ինձ այն քարտէսը, որուն վրայ գծուած էին Վրաստանի սահմանները, համաձայն

չէզոքութեան մասին կնքուած դաշնագրի»[1]: Ալ. Խատիսյանի այս տեղեկությունը հաստատվում է մեկ այլ նամակով, որը թարգմանաբար մեջ է բերել «Մշակը»: Այնտեղ նույնպես խոսվում է Յուսուֆ Քեմալի առաքելության մասին, որին ընդունում է Գեգեչկորին: «Ինչ էլ չլիներ այս միսիայի հետևանքը, - կարդում ենք այնտեղ, - մի բան պարզ է - ձեռք էր բերուած այն, որ հայ – քեմալական կռուի դեպքում Վրաստանը պիտի բացարձակ չեզոքութիւն պահպաներ»[2] : Հայերը վրացիների հետ բանակցելու ընթացքում այս համաձայնությունից տեղյակ էին, որի պատճառով մերժվեց նաև հայ – վրացական դաշինքի խնդրով Թիֆլիս մեկնած Ռուբենի առաջարկությունը: Այսպիսով, Վրաստանի մերժումը պետք է հիմք հանդիսանար ուժեղացնելու հակվածությունը դեպի Ռուսաստանը, որը դեռևս Թուրքիայի հետ չէր գծել Կովկասյան սահմանները:

Երրորդ. Բեկզադյանի գրությունից պարզվում է, որ փաստորեն Դաշնակիցները չեն կարողանում հասնել կովկասյան հանրապետությունների դաշինքին, գոնե հայ - վրացական և որ շատ կարևոր է՝ նրանք արդեն չունեին հստակ առաջարկներ իրենց կովկասյան ներկայացուցիչներին՝ ընդդեմ բոլշևիկների: Ավելին՝ անգլիական կառավարությունն էլ արդեն երկփեղկվում էր՝ բոլշևիկների հետ համաձայնության առումով: Հայ

[1] **Ալ. Խատիսեան,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 307:

[2] «Մշակ», 11 նոյեմբեր, 1920:

դիվանագիտության պարտության վկայությունն էր այն, որ այն դեպքում երբ Անտանտն էր փորձում լեզու գտնել բոլշևիկների և քեմալականների հետ, դեռևս հույսեր էր կապում այդ նույն դաշնակիցների հետ:

Կարծում ենք, որ մինչև հոկտեմբերի 28–ի թուրքական երկրորդ հարձակումը հայերը պետք է դնեին կամովին խորհրդային կարգեր ընդունելու հարց՝ առանց վախենալու դաշնակիցներից: Իսկ երբ դա արեցին, արդեն բավական ուշ էր: Սրանում առավել համոզվելու համար՝ դիմենք նոր փաստերի: Ա. Տերտերյանը, որը թերևս ժամանակի հայ ամենախելացի և իրապաշտ դիվանագետներից մեկն էր և որը Երևանում դարձյալ մասնակցում էր Լեգրանի հետ բանակցություններին, վկայում է, որ հոկտեմբերին Երևան վերադարձած Հայաստանի պատվիրակության անդամներից մասնավորապես Հ. Քաջազնունին գտնում էր, որ այլևս ոչ Անտանտի և ոչ էլ Ամերիկայի վրա հույս չպետք է դնել, քանի որ այդ տպավորությունն էր ստացել իր բազմաթիվ հանդիպումներից: «Հայաստանի պատվիրակութիւնը այն կարծիքին էր, - գրում է Հ. Տերտերյանը, - որ դաշնակիցները, ինչքան էլ բարեացակամ լինէին դէպի Միացեալ եւ Անկախ Հայաստանի դատը, իսկ Խորհրդային իշխանութիւնն էլ ո'չ բարեացակամ, ամենից առաջ պէտք է հաշւի առնուեր մերկ ու դառն իրականութիւնը»[1]: Իսկ այդ իրականությունը հետևյալն էր՝ Դաշնակիցները հեռու էին Հայաստանի

[1] «Հայրենիք» ամսագիր, թիւ 5, Մայիս, 1954, էջ 6:

սահմաններից, իսկ Ռուսաստանի զորքերն արդեն գտնվում էին նրա սահմաններին մոտ: Ուստի և պատվիրակությունը կառավարությանն առաջարկում էր. «ամեն գնով ու զիջումներով լեզու գտնել Խորհրդային կառավարութեան հետ, անգամ Սեւրից հրաժարւելու պայմանով»[1]:

Փաստորեն Սևրից հրաժարվելու անհրաժեշտության գիտակցումը կար, որը չամրագրվեց համաձայնագրի նախագծում, իսկ խորհրդային կարգեր մտցնելունը՝ ոչ: Բայց որ մինչև թուրքական հոկտեմբերի 28 - ի երկրորդ հարձակումը Հայաստանը խորհրդային հռչակելը կարող էր այն կանխել, երևում է նաև նրանից, որ հոկտեմբերի 12-ի նամակով Չիչերինը Քաղբյուրոյին առաջարկներ է անում, որոնց հավանություն է տալիս Լենինը և որոնք հոկտեմբերի 14-ին ընդունվում են Քաղբյուրոյի կողմից: Այդ առաջարկներն ունեին հետևյալ բովանդակությունը. «1) Համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ, 2) նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար, 3) պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը»[2]:

[1] Նույն տեղում:

[2] **Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 54, էջ 858-859:

Այստեղից հետևությունը մեկն է՝ Հայաստանի խորհրդայնացումը հիմք կհանդիսանար թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար: Սակայն, Հայաստանի կառավարությունը խորհրդայնացման հարց չդրեց, դրա փոխարեն գնալով Լեգրանի հետ համաձայնագրին, որն ինչ-որ տեղ նշանակում էր քաղաքական շրջադարձ դեպի Ռուսաստանը: Սակայն այդ համաձայնագրի նախագիծը կյանքի չկոչվեց և, կարծում ենք, այն հիմնական պատճառով, որ ՀՀ կառավարությունում չդրվեց կամովին խորհրդայնացման հարց: Հարց է առաջանում՝ իսկ ինչու՞ չիրականացավ Չիչերինի առաջարկած, ընդ որում Օրջոնիկիձեի կարծիքի հաշվառմամբ, և Քաղբյուրոյի ընդունած վերոհիշյալ առաջին կետը Հայաստանի խորհրդայնացման մասին: Մեր խորին համոզմամբ պետք է առանձնացնել երկու պատճառ՝ ա) Լեգրանի հետ բանակցությունները, որոնք չէին բացառում Հայաստանի կառավարության կողմից խաղաղ կերպով խորհրդայնանալու հնարավորությունը, բ) Հայաստանում խորհրդային զորքեր մտցնելու դեպքում նրանց դիմադրություն ցույց տալու հնարավորությունը: Այս առումով տրամաբանական է և հետաքրքիր Է. Զոհրաբյանի հետևյալ նկատառումը կապված վերոհիշյալ որոշման չիրականացման հետ: Ըստ նրա էլ՝ որոշման համար հիմք է հանդիսացել «Գ. Օրջոնիկիձեի այն հաղորդումը, որ «դաշնակցական կառավարությունը, հավանորեն

հրաժարական կտա և հնարավորություն կստեղծվի իշխանությունը կոմունիստների ձեռքն անցնելու համար» (իշխանության խաղաղ, անցավազին անցում): Մինչդեռ որոշման առաջին կետում խոսվում է «Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու համար վճռական գործողություններ ծավալելու անհրաժեշտության մասին» (Այդ որոշումը մեջբերեցինք քիչ առաջ – Ա. Ն.): Իսկ թե ինչ բնույթի վճռական գործողություններ պետք է ծավալվեն, այդ մասին որոշումը լռում է : Գուցե հենց դա է պատճառը, որ որոշման իրագործման ղեկի մոտ կանգնած գործիչները (Ստալին, Չիչերին և ուրիշներ) տարբեր կերպ են ընկալել ու մոտեցել խնդրին: Այսպես, եթե Չիչերինը գտնում էր, որ Հայաստանը փրկելու համար պետք է դիմել արագ ու վճռական գործողությունների՝ ընդհուպ մինչև Հայաստանի գրավումը կարմիր բանակի կողմից, ապա Ստալինը՝ հակառակը, բռնել էր սպասողական, զգուշավոր տակտիկայի գիծը և այն հիմնավորելու համար նույնիսկ Մոսկվային վախեցնում էր Հայաստան զորք մտցնելու դեպքում քեմալա - անտանտայական ճակատ ստեղծվելու հնարավոր հեռանկարով»[1]:

Իսկապես, Հայաստանի վրա կարմիրների հարձակումը կարող էր դիմադրությունների տեղիք տալ: Այդ առումով բավական է հիշել կարմիր բանակի դեմ Սեպուհի և Նժդեհի

[1] **Է. Ա. Զոհրաբյան,** Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922թթ.), էջ 238:

հերոսական կռիվները: Սակայն արդեն իրավիճակը փոխվել էր և Հայաստանին անհրաժեշտ էր, ինչպես նշեցինք, խաղաղ խորհրդայնացման որոշման ընդունում: Չանելով դա, նա կանգնում էր ծայրահեղ վտանգի առջև, քանի որ կարմիրները տատանվում էին Հայաստանում խորհրդային կարգերի մտցնելու հարցում, որովհետև նաև վախենում էին Անտանտի միջամտությունից և դեպի նա Քեմալի շրջադարձից, որն ամենևին բացառված չէր: Պատահական չէ, որ Քեմալն անկախ բոլշևիկների հետ բարեկամական կապերից, 1920 - 1921թթ. գաղտնի բանակցություններ է վարել նաև Անտանտի երկրների հետ, իսկ արդեն 1921թ. հոկտեմբերին պայմանագիր կնքեց Ֆրանսիայի հետ:

Ելնելով այս ամենից, դժվար է համաձայնվել պատմաբան Լ. Խուրշուդյանի մի հարցադրման և դրան իր իսկ տված պատասխանի հետ: «Հարց է առաջանում, - գրում է նա, - ինչու Խորհրդային Ռուսաստանը, եթե իրոք անկեղծորեն ձգտում էր փրկել հայ ժողովրդին թուրքական հարձակումից, պաշտոնական նոտայով չդիմեց Թուրքիային՝ պահանջելով անմիջապես դադարեցնել հարձակումը: Գաղտնիք չէ, որ Ռուսաստանի խիստ նոտայի դեպքում Թուրքիան հարկադրված կլիներ անմիջապես դադարեցնել հարձակումը»[1]:

Թերևս իսկապես Ռուսաստանին ավելի շատ հետաքրքրում էին իր քաղաքական շահերը, քան թե հայ

[1] **Լ. Խուրշուդյան,** նշվ. աշխ., էջ 205:

ժողովրդի փրկությունը, բայց տվյալ նոտան հազիվ թե զսպեր քեմալականներին, որոնք ռուսական ոսկով և զենքով ուժեղացած՝ իրենց չափազանց ինքնավստահ էին զգում:

Կարելի է դարձյալ փաստեր բերել՝ ապացուցելու համար, որ Հայաստանի վրա կարմիր բանակի հարձակումը տվյալ իրավիճակում նպատակահարմար չի համարվել, բայց կարծում ենք՝ դրանց կարիքն այլևս չկա: Բայց ցավալին այն է, որ Քեմալին վանելու վախը ստիպեց բոլշևիկներին չվավերացնելու Լեգրանի հետ կազմած համաձայնագրի նախագիծը ևս: Վերևում մեր մեջբերած համաձայնագրի կետերի շուրջը գալով ընդհանուր եզրակացության, բանակցող կողմերը հոկտեմբերի 28-ին ստորագրում են «Եզրափակիչ որոշման արձանագրությունը» որն ուներ հետևյալ բովանդակությունը.

«ՌՍՖՍՀ - կառավարության լիազոր Բորիս Վասիլևիչ Լեգրանը և Հայկական Հանրապետության կառավարության լիազորներ Լևոն Շանթը, Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյանը 1920 թվականի հոկտեմբերի 28-ին իրենց լիազորագրերը փոխանակելով և դրանք գտնելով պատշաճ ու սահմանված ձևի, համաձայնության եկան հետևյալի շուրջը.

1. Մեկ կողմից ՌՍՖՍՀ-ի կառավարությունը և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստանձնում են սույն արձանագրությանը առդրվող հաշտության պայմանագրի նախագիծը և նրան վերաբերող լրացումներն ստորագրելու պարտավորություն, պայմանով՝

1) Որ ՌՍՖՍՀ-ի և Ադրբեջանի ՍՍՀ-ի կառավարությունները ճանաչում են վիճարկելի մարզերի – Նախիջևանի և Զանգեզուրի գավառների – տերիտորիաների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անսասան իրավունքը և այդ գավառների սահմաններից դուրս կբերվեն այն բոլոր զորամասերը, որոնք գտնվում են ՌՍՖՍՀ-ի և ԱՍՖՍՀ-ի հրամանատարության ենթակայության տակ:

2) Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իրեն հերթին, անվերապահորեն կհրաժարվի որևէ պահանջներից այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ, բացառությամբ այն անկյունի, որն առաջացնում են Նոր Բայազեդի գավառի արևելյան սահմանագիծը և Շարուր-Դարալագյազի գավառի արևելյան սահմանագծի և Զանգեզուրի գավառի հյուսիսային սահմանագծի մի մասը՝ Գիկալդաղ սարից դեպի Չիչաքլի սարն ընթացող պայմանական գծով (քարտեզի մասշտաբը՝ 1 մատնաչափում-10 վերստ):

3) Որ ՌՍՖՍՀ-ն ուշադրության առնելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի աղետալի դրությունը, որպես անվերադարձ փոխատվություն տալիս է ոսկով երկու և կես միլիոն ռուբլի:

ll. Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Թուրքական Հայաստանի մարզերում վիճարկելի տերիտորիալ հարցերը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ բարեկամաբար լուծելու

դիտավորություններից, պատրաստ է այդ հարցերի լուծման գործում ընդունել ՌՍՖՍՀ-ի կառավարության օժանդակությունն այն բանից հետո, երբ՝

1) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն իր զորքերը կքաշի մինչև 1914թ. ռուս-թուրքական նախկին սահմանը:

2) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը կհրաժարվի Բրեստ- Լիտովսկի պայմանագրից և Բաթումի կոնվենցիայից:

3) Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությունն անվերապահորեն ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որոնք որոշված են ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրով:

Վերոնշյալ պայմանների կատարումից հետո, ՌՍՖՍՀ-ի բարեկամական օժանդակությամբ, լրացուցիչ կմշակվեն վիճարկելի տերիտորիալ հարցերի խաղաղ լուծման հիմունքները»[1]:

Ժամանակշրջանի իրադարձությունների սառը բանականությամբ վերլուծությունը ստիպում է եզրակացնել, որ այս համաձայնագիրն արդեն ուշացած էր և նրա վավերացման հնարավորությունը խիստ կասկածելի: Ս. Վրացյանը նրան առնչվող գլուխը հետևյալ տողերով է

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828 - 1923), Երևան, 1972, էջ 457-458:

ավարտում. «Համաձայնութիւնը երկուստեք կայացաւ, և Լեգրանը մեկնեց Բագու՝ ստանալու համար Մոսկւայի վերջնական համաձայնութիւնը, որից յետոյ պիտի վերադառնար Երեւան, ուր եւ պիտի ստորագրւէր «բարեկամութեան և խաղաղութեան դաշինքը Խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ»: Գնաց - եւ այլեւս դաշնագրի խօսքը չլսւեց»[1]:

Իսկ ինչու չլսվեց: Այդ հարցին գրեթե պատասխանեցինք, փորձելով ապացուցել, որ Ռուսաստանը, անկախ կայացած որոշումից, քաղաքական առումով նպատակահարմար չէր համարում կարմիր բանակ մտցնել Հայաստան, զգուշանալով Անտանտից և հատկապես Թուրքիայի շրջադարձից դեպի Արևմուտք, ինչպես նաև հայկական դիմադրությունից: Համաձայնագրի կետերի իրականացումն ինքնին կնշանակեր ընդհարում Թուրքիայի և Ադրբեջանի հետ, որը նրան ամենևին ձեռնտու չէր: Այն տպավորությունն էր ստացվելու, որ զինելով Թուրքիային ընդդեմ Դաշնակիցների, Ռուսաստանը պայքար էր մղելու դրանց դաշնակից ճանաչված Հայաստանի դեմ: Այս իսկ պատճառով նրան ինչքան էլ տհաճ լիներ Հայկական տարածքներում Թուրքիայի և Ադրբեջանի ամրապնդվելը, նա չէր կարող խաղաղ կամ զինված միջամտությամբ պարտադրեր Թուրքիային համաձայնագրի կետերը: Այլ

[1] **Ս. Վրացեան,** նշվ. աշխ. էջ 459:

հարց է, եթե Հայաստանը համաձայնագրով ընդուներ խորհրդային կարգեր: Այս դեպքում Թուրքիայի հետ շատ հարցեր միգուցե լուծվեին խաղաղ կերպով և հոկտեմբերի 28-ին նա չսկսեր պատերազմի երկրորդ փուլը, որն աղետալի ավարտ ունեցավ հայ ժողովրդի համար: Գուցե առարկություններ կլինեն, թե դա էլ անհնար էր, որովհետև կար ռուս-թուրքական գաղտնի համաձայնագիր, բայց կրկնում ենք՝ նման համաձայնագիր, որով վերջնականապես հստակեցված էին հայկական տարածքների ռուս, թուրք կամ ադրբեջանական կողմերին պատկանելիության հարցերը, տակավին գոյություն չուներ: Համոզվելու համար, որ անհնար էր հոկտեմբերի 28-ի նախագծի իրականացումը, կարելի է թեկուզ և «Եզրափակիչ արձանագրության» կետերի մեկ առ մեկ վերլուծություններով: Փորձենք այդ ևս կատարել, այս բաժինը փակելուց առաջ:

Առաջին կետում ՌՍՖՍՀ-ն և ԱՍՖՍՀ-ն պարտավորվում են ճանաչել վիճելի տարածքների՝ Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ Հայաստանի անսասան իրավունքը, այնտեղից դուրս բերելով իրենց հրամանատարության տակ գտնվող զորամասերը: Բայց ինչպես դա կարող էր այժմ հնարավոր լինել, երբ օգոստոսի 10-ի պայմանագրով հնարավոր չեղավ, անկախ նույն Լեգրանի և Չիչերինի ջանքերից: Այն ժամանակ դեռ թուրքական հարձակում չկար, իսկ Արևելյան ժողովուրդների

համագումարի որոշմամբ Հայաստանը ճանաչվել էր ի«մպերիալիստական երկիր»:

Երկրորդ կետով Հայաստանի Հանրապետությունն իր հերթին պարտավորվում է հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ պահանջներից՝ որոշ սահմանագծային տարածքներից զատ, որոնք արդեն հիշատակեցինք: Բայց Ղարաբաղի Ադրբեջանին զիջումը վերջինիս համար պայման չէր Նախիջևանից և Զանգեզուրից հրաժարվելու համար:

Երրորդ կետով Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանին նվիրել 2,5 մլն. ոսկի: Բայց չէ որ Ադրբեջանը և Թուրքիան դա կդիտարկեին օգնություն իրենց թշնամուն, դրա համար հիմք ծառայեցնելով նրա հակվածությունը դեպի դաշնակիցները:

Խիստ կասկածելի էր նաև Արձանագրության երկրորդ մասի Թուրքիային վերաբերվող կետերի իրականացումը: Դրանցից առաջինով Ռուսաստանը փաստորեն պարտավորվում էր հասնել նրան, որ Թուրքիան իր զորքերը հետ քաշեր մինչև 1914թ. սահմանները: Սակայն ինչպես էր դա հնարավոր, երբ, կրկին շեշտում ենք, Թուրքիայի համար Հայաստանը Անտանտի դաշնակից էր, իսկ ինքը Ռուսաստանի համար բարեկամ, որը պայքարում էր հանուն «սոցիալիստական հեղափոխության»: Չմոռանանք, որ Շահթախթ - Նախիջևան գծի առումով զիջող կողմն ի վերջո դարձավ Ռուսաստանը:

Եվ վերջապես քաղաքական ռոմանտիզմով տարվել կշանակի հավատալ, որ ԹԱՄԺ-ն կճանաչեր ՀՀ անկախությունը համաձայնագրով մատնանշված սահմաններում, մանավանդ, որ Ռուսաստանը առաջնորդվում էր զգույշ մարտավարությամբ, ձգտելով իրենից չվանել քեմալականներին և հնարավորություն չտալ նրան թեքվելու դեպի Անտանտան, որին նեղուցներից քշելը Ռուսաստանի համար առաջին խնդիրն էր:

Եվ պատահական չէ, որ Բաքվում նոյեմբերի 4-ին կայացած ՌԿ(բ)Կ ԿԿ Կավբյուրոյի և Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի միացյալ նիստը փաստորեն մերժեց համաձայնագրի նախագիծը: Նիստին մասնակցել են քաղբյուրոյի անդամներ Նարիմանովը, Կամինսկին, Հուսեյնովը, Եգորովը, Կավբյուրոյի անդամներ Ստալինը, Օրջոնիկիձեն, Ստասովան, ինչպես նաև Շեյնմանը, Լեգրանը, Գաբրիելյանը և Կարաևը: Մենք ասում ենք փաստորեն, որովհետև այնտեղ թեպետ չկա մերժման խոսք, բայց հավասարազոր է դրան: Այնտեղ մասնավորապես կարդում ենք.

«ա) Մինչև ՌԿԿ Կենտկոմի հետ այդ հարցի շուրջ բանակցություններ վարելը, Հայաստանին ներկայացրած պայմանագրի մասին վերջնական որոշում չկայացնել, բանակցությունների վարելը հանձնարարել ընկ. Ստալինին (վերջինս Ռուսաստանի կոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 20-ի որոշման համաձայն ուղարկվել էր Բաքու, ուր հասել էր

հոկտեմբերի վերջերին, Ռուսաստանի արևելյան քաղաքականության կարգավորման խնդրով- Ա. Ն.):

բ) Միաժամանակ հայտնել Քաղբյուրոյի կարծիքը, որ առաջարկված պայմանագրի՝ Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին տալու մասին կետը օգտակար չէ ո՛չ քաղաքական, ո՛չ ռազմական, ո՛չ էլ ռազմավարական առումով և կարող է կատարվել միայն ծայրահեղ դեպքում:

գ) Անհրաժեշտ համարել ընկ. Լեգրանի մեկնումը Մոսկվա՝ Հայաստանի հետ կապված հարցի պարզաբանման համար…»[1]:

Կավբյուրոն իրավասու չէր կարող լինել համաձայնագրի մերժման որոշում ընդունել, որովհետև նրանից տեղյակ էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն, նաև Չիչերինը և Լենինը: Լեգրանը փոքր մարդ էր՝ ինքնուրույն դրան գնալու համար: Այնպես որ վճռական խոսքը պատկանում էր Մոսկվային: Բայց հիշյալ որոշումը միտված էր նրա ձախողմանը. մասնավորապես բ. կետը: Պատմագրության մեջ այն կարծիքը կա, որ համաձայնագրի չվավերացման գործում կարևոր դերակատարություն է ունեցել Ստալինը, որը համարվում է շեշտված հակահայ: Բայց կարծում ենք, անկախ նրա այդպիսին լինելու կամ չլինելու հանգամանքից, ինքը չէ, որ որոշում էր ռուսական արտաքին քաղաքականության ուղղվածությունը: Չիչերինը նույնպես ձգտելով զսպել թուրքական ախորժակները,

[1] **Լ. Խուրշուդյան,** նշվ. աշխ., էջ 214:

հաճախ հակասական դիրքորոշում էր դրսևորում Թուրքիայի նկատմամբ: Նա, որ հակառակ Ստալինի, ներկայացվում է հայամետ, դարձյալ ելնում էր Խորհրդային Ռուսաստանի շահերից՝ ճգտելով Թուրքիայի ազդեցության ոլորտներից զերծ պահել հայկական տարածքներ, նպատակ ունենալով դրանք տեսնել ռուսական: Կարծում ենք, որ սա է պատմական ճշմարտությունը: Պարզապես բերեց Թուրքիայի և Ադրբեջանի բախտը, որովհետև Ռուսաստանը, ինչպես բազմիցս շեշտել ենք, չէր ցանկանում կորցնել իր իսկ հզորացրած Քեմալին, որը նրա համար ավելի կարևոր խնդիր էր, քան Հայաստանի փրկությունը: Քեմալի դիրքորոշման փոփոխությունը արդեն նպաստավոր էր Անտանտին, որը նա չէր ցանկանա և կարող էր հակախորհրդային դարձնել Ադրբեջանին, որի հեղկոմը նոյեմբերի 6-ի նիստում Նարիմանովի նախագահությամբ համաձայնագրի վերաբերյալ քննարկումից հետո ընդունեց հետևյալ որոշումը. «Ադրբեջանի կառավարությունը քննության առնելով Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայկացուցիչ ընկ. Լեգրանի Հայաստանի հետ կնքած պայմանագիրը, գտնում է այ միանգամայն անթույլատրելի, քանի որ Հայաստանի դաշնակցական կառավարության հետ նման կարգի պայմանագրի կնքումը նշանակում է հրաժարում արևելյան քաղաքականությունից, ինչպես նաև Ադրբեջանին հանձնում է դաշնակների ջախջախմանը:

Ուստի, ԱԽՍՀ կառավարությունը թախանձագին խնդրում է հրաժարվել պայմանագրի ստորագրումից»[1]:

Ինչպես մի ավելորդ անգամ համոզվում ենք, թուրք-ադրբեջանական կողմը սեթևեթում էր՝ իրեն ներկայացնելով Անտանտի թշնամի և այստեղից էլ՝ պայմանագրի ստորագրումը համարելով հրաժարում արևելյան քաղաքականությունից, փաստորեն հոգեբանական գրոհ էր ձեռնարկում բոլշևիկների դեմ՝ պարզ հասկացնելով, որ ցանկացած պահին կարող է փոխել իր քաղքականությունը: Եվ սա հնարավոր չէր հաշվի չառնել Մոսկվայում, որի գլխավոր նպատակն ոչ այնքան Թուրքիայի կրկին հառնելն էր, որն արդեն իրողություն էր, այլ նրանով Դաշնակիցներին նեղուցներից քշելը: Ահա սա էր համաձայնագրի չվավերացման գլխավոր պատճառը և ոչ թե ինչ-ինչ անձանց հակահայ դիրքորոշումը: Վավերացնելով պայմանագիրը կնշանակեր ձեռնոց նետել Քեմալին, որից կշահեր միայն Արևմուտքը: Ուստի և, ամենևին պատահական չէ, որ Ստալինը նոյեմբերի 5-ին հետևյալն է հեռագրում Լենինին. «Դրությունը Թուրքիայում պարզ չէ, այն կարող է վտանգավոր դառնալ, եթե տեղի ունենա Քեմալի համաձայնությունն Անտանտի հետ, քանի որ Քեմալի չեզոքացումը կդյուրացնի Անտանտի արշավանքը դեպի Բաքու: Հետևաբար, առանց մանրակրկիտ հետախուզության և Թուրքիայում իրադրության պարզաբանման պետք չէ

[1] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2., գ. 1141, փ. 10, թ. 1:

Հայաստանի հետ պայմանագիր կնքել, որը Հայաստանին, այսինքն՝ Անտանտին կհանձնի մուսուլման ազգաբնակչությամբ ստրատեգիական կարևորագույն մի շրջան և որը մեզ կներքաշի կոնֆլիկտի մեջ Թուրքիայի հետ: Անհրաժեշտ է առայժմ ձգձգել Հայաստանի հետ պայմանագրի կնքումը, ձևացնելով, որ Հայաստանի համար ձեռնտու հաշտություն ենք ցանկանում, իսկ հետո կերևա»[1]:

Այս փաստով մեկ անգամ ևս համոզվում ենք, որ Ռուսաստանի համար առաջին խնդիրը Անտանտի դեմ պայքարն էր, որի անհրաժեշտությամբ և Թուրքիայի հետ պատերազմի մեջ ներքաշմամբ պետք է պայմանավորել համաձայնագրի չվավերացումը և ոչ թե անհատների հակահայ դիրքորոշմամբ: Եվ սա է հիմնական պատճառը, որ հայ – ռուսական համաձայնագրի նախագիծը օրակարգից վերջնականապես հանվեց:

Այս ամենից հետո մեզ մնում է որոնել երկու հարցի պատասխանը՝ ա. ինչու Թուրքիան Հայաստանի հետ պատերազմի երկրորդ փուլը սկսեց հենց հոկտեմբերի 28-ին, այսինքն՝ եզրափակիչ ակտի ստորագրման օրը, և բ. ինչու էին Չիչերինը և հատկապես Լեգրանն ամեն կերպ ձգտում հասնելու այս պայմանագրի վավերացմանը:

[1] «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտի, 1991, տե՛ս **Երվանդ Սարգսյան,** Խորհրդա-թուրքական անդրկուլիսյան բանակցությունները Մոսկվայում 1921թ. փետրվար-մարտ ամիսներին և մարտի 16-ի պայմանագիրը:

Առաջին հարցի պատասխանը կարծում ենք հետևյալն է՝ թուրքերը ուշադրությամբ հետևում էին Լեգրանի և ՀՀ պատվիրակության բանակցությունների ընթացքին և դրանց ելքին: Չէր բացառվում, որ Հայաստանի իշխանությունները հրաժարվեին դաշնակիցներից, Սևրի պայմանագրից և գնային իշխանափոխության՝ ընդունելով խորհրդային կարգեր, որի դեպքում Խորհրդային իշխանությունը կարող էր կտրուկ կերպով միջամտեր հայ – թուրքական պատերազմին՝ ստիպելով կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: Բայց համաձայնագրի նախագծում չէր դրվում խորհրդայնացման հարց և ընդհակառակը՝ շատ հարցեր նախատեսվում էր լուծել հօգուտ հայերի, այն դեպքում, երբ Հայաստանը դիտվում էր Թուրքիայի թշնամի և Անտանտի դաշնակից: Եվ ահա, համոզված լինելով, որ Ռուսաստանը այս դեպքում չունի լուրջ դրդապատճառ՝ խոչընդոտելու Թուրքիայի հարձակմանը, վերսկսեց այն: Նա համոզված էր, որ քանի Հայաստանը չի խորհրդայնացվել, Ռուսաստանը չի միջամտի, քանզի դա կնշանակի ընդհարում իր հետ, որին դեռ երեկ զինում էր: Երկրորդ կարևոր պատճառն, ըստ մեզ, այն էր, որ Թուրքիան փորձում էր ճշտել, թե արդյոք հարձակման խորացման դեպքում Հայաստանին չէր օգնի Անտանտը: Նույն հոկտեմբեր ամսին նա արդեն վստահ դարձավ, որ այդ օգնությունը չի լինելու: Ընդհակառակը՝ Անտանտն ինքն էր արդեն փորձում շահել Քեմալի բարեկամությունը և վերջինս գիտեր, որ դրա

հնարավորության գիտակցությունը կկասեցներ ռուսական ամեն միջամտություն Հայաստանի օգտին, որը տվյալ իրավիճակում նշանակում էր իր օգտին: Իսկ որ Անտանտը փորձում էր բարեկամանալ Քեմալի հետ, վկայում է և այն, որ Անգլիայի համաձայնությամբ հոկտեմբերին սուլթանական կառավարության նախագահի պաշտոնում Ֆերիդ փաշայի փոխարեն նշանակվում է Թևֆիկ փաշան, իսկ արտաքին և ներքին գործերի նախարար է նշանակվում Իզզեթ փաշան, որը հեղինակավոր անձ էր քեմալականների շրջանում; Վերջինս նույնիսկ մեկնում է Անկարա և բանակցում քեմալականների հետ՝ փորձելով նրանց կողմնորոշել դեպի Անտանտը: Այդ մասին կա Քեմալի վկայությունը[1] : Այնպես, որ Քեմալն այլևս հոգուտ Հայաստանի Դաշնակիցների միջամտությունից էլ չէր վախենում: Այսպիսով՝ Անտանտին միանալու վախը կասեցնում էր ռուսների միջամտությունը, իսկ Քեմալին սիրաշահելու ցանկությունը՝ Անտանտի: Եվ միանգամայն ճիշտ էր դերծովակալ Բրիստոլը, որը արդեն 1921թ, փետրվարին, Ալ. Խատիսյանի հետ ունեցած երրորդ հանդիպման շամանակ, նրան հետևյալն է ասում. «Դուք տուժեցիք, Եւրոպան ու Ամերիկան իրենց տեղէն չշարժեցան: Այժմ Թուրքերը արդէն ոչ ոքի և ոչինչ չեն լսեր և կը կարծեն, թէ իրենք բոլորէն ուժեղ են աշխարհի երեսին»[2]:

[1] **М. Кемаль,** Путь новой Турции, т. 3, Москва, 1934, ст. 136.

[2] **Ալ Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 335:

Ավելացնենք, որ թուրքերն իրենց շատ ուժեղ էին սկսել զգալ արդեն 1920թ. հոկտեմբերին, քանզի լավ էին հասկացել Ռուսաստան - Անտանտ հակասությունները, որոնք վերջիններիս արգելք ծառացան կտրուկ միջամտություն ցուցաբերել հօգուտ հայ ժողովրդի: Ահա, թե ինչու Թուրքիան վերսկսեց իր հարձակումը հոկտեմբերի 28-ին:

Այժմ փոքր-ինչ այն հարցի մասին, թե ինչու էին Չիչերինը և Լեգրանը ձգտում հասնել Հայաստանի հետ համաձայնագրի վավերացմանը: Կարծում ենք, որ վերոշարադրյալից պարզ դարձավ, որ նրանք ռուսական արտաքին քաղաքականության մեջ ներկայացնում էին այն թևը, որը ձգտում էր բուն հայկական տարածքները ավելի շատ տեսնել ռուսական տիրապետության մասեր, քան թուրքական: Բացի այդ՝ այն վախը կար, որ Թուրքիան միանալով Ադրբեջանի հետ, կարող էր կրկին դիմափոխվել և պայքար սկսեր Ռուսաստանի դեմ: Բայց համաձայնագիրը կյանքի չկոչվեց, որովհետև Հայաստանը կամովին չդարձավ խորհրդային, որը հիմք կհանդիսանար Թուրքիայի ախորժակները եթե ոչ ամբողջովին զսպելու, գոնե սահմանափակելու համար: Նրանց քաղաքական գիծն իրեն չարդարացրեց, որովհետև Ռուսաստանը բռնի խորհրդային կարգեր մտցնելու դեպքում զգուշանում էր Անտանտի և տեղական հայրենասեր ուժերի դիմադրությունից, իսկ ՙիմպերիալիստական Հայաստանին՚ օգնելով կարող էր իրենից վանել Թուրքիային և Ադրբեջանին: Համաձայնագրի

կետերի հոգեբանական գրոհը միայն բավական չէր՝ կանխելու Թուրքիայի պլանները:

Ռուսաստանին արդեն մնում էր դնել Հայաստանի բռնի խորհրդայնացման հարց, որպեսզի կանգնեցնի Թուրքիայի առաջխաղացումը, որն արդեն նոյեմբերից մտավ նրա արտաքին քաղաքականության օրակարգ: Եվ Լեգրանը կրկին Հայաստան վերադարձավ արդեն բավականին այլ առաքելությամբ: Բայց դա թեմա է մեկ այլ ուսումնասիրության:

Ашот Нерсисян, Анализ обсуждения проекта армяно-российского соглашения от 28 октября 1920 года - В статье мы анализируем армяно-российский проект соглашения 1920 года и причины, по которым он не состоялся. В статье делается попытка доказать, что с одной стороны большевики помогали кемалистам, а с другой - они не хотели, чтобы их армия распространялась в Армении. Они не находили целесообразным атаковать Армению из-за ее предполагаемого сильного сопротивления, но они также не склонны мириться с признанием ее независимости или утратой . В этих условиях армянское правительство, объявляя себя советским, может дать русским основу для того, чтобы заставить турок остановить вторжение. Но они не пошли на этот шаг. В этих условиях Советская Армения могла сохранить хотя бы

рубежи 1914-ого года. Это заставило русских сделать Армению советской страной.

Ashot Nersisyan, The analytical analysis of armenian-russian October 28,1920 agreement project - In the article we analyze the armenian-russian 1920 agreement project and the reasons why it didn't occur. There is attempt in the article to prove that on one hand the bolsheviks were helping kemalists and on the other they didn't want their army to spread in Armenia. They were not finding it expedient to attack Armenia because of its assumed strong resistance but they also were not tending to put up with its independence recognition or with lost of it. Under these conditions, the Armenian government, declaring itself Soviet, could give the Russians the basis to force the Turks to stop the invasion. But they did not take this step. In this condition the Soviet Armenia could save at least 1914 year boundaries. This forced the Russians to make Armenia the soviet country.

АРМЯНСКИЙ ФАКТОР: РАЗЛОМ ИМПЕРСКОЙ ПОЛИТИКИ И ГЛОБАЛИЗАЦИЯ

ВАЛЕРИЙ ТУНЯН

Ключевые слова - империи, Османская империя, Российская империя, Турция, глобализация, армянские проекты.

Для всех империй характерны определенные черты: значительность территориального пространства; консолидация власти в центре; ассиметричные отношения между метрополией и периферией; разнородный этнокультурный, национальный и религиозный состав; создание коммуникационных систем, пестрая имперская элита.

Армянский фактор как проблема воссоздания армянской государственности был представлен в XVIII в. как в Османской, так и Российской империй, которые подвергались процессу модернизации.[1] Ташансу Тюркер представляет их характерные черты: обращение к модернизационным реформам в XVIII в.: варьирование централизационного и децентрализационного подходов для гибкости управления; легитимизация власти со времени Римской империи; использование представлений о нации и национальном

[1] **Тунян В. Г.** Россия и Армянский вопрос. Ереван. 998; Младотурки и Армянский вопрос. Ереван, 2004, ч. I.

государстве в управление; самодержавный султанизм и русское самодержавие.

По мнению Тюркера, в западной социологии термин нация является исходящим из понятия модернизации. Этот подход оказался востребованным в Турции: “Двухсотлетняя модернизация сделала Турцию страной, ориентированной на Запад не только внешне, но и по направленности образования и образу мыслей. Влияние Запада на турецкое общество достигло такого уровня, что даже в интеллектуальных кругах историческое развитие Европы стало восприниматься как единственная модель”.[1]

Таблица N 1

Процесс модернизации	Направленность
1.Начало модернизации - Карловицкий мир1699 г. 2. Новые геополитические реалии. 3.Разрушение традиционной системы. 4. XVIII в. - упадок Османской империи и территориальные потери.	1.Начало потери территорий в Европе 2.Экспансионизм соперников. 3.Внешние заимствования. 4.Поиск мусульманской идентичности. 5.Младотуркизм - тюркизация и национальное государство. 6. Вестернизация.

[1] **Ташансу Т**. Процесс модернизации в Османской империи и России и его отражение в имперской и националистической идеологии: XIX - начало XX в. Авт.канд. ист.н.М., 2007, с. 3. - http://www.dissercat. com/content

5.Османизм как путь сохранения империи. 6. Кемализм - светское развитие. 7.200-летняя модернизация. 8. Поиск новых импульсов развития	7.Европейский вектор развития 8.Неосманизм и глобализация.

Процесс модернизации Османской империи и развития национализма имеет древнейшие наслоения в виде столкновения европейской и азиатской цивилизаций сквозь призму Восточного вопроса, когда менялась форма, а содержание оставалось прежним. Натиск мусульманской Османской империи и контрдействия христианской Европы определился Карловицкий миром в января 1699 г., когда участники "Священной лиги Австрия, Речь Посполитая, Венецианская республика, Россия установили мирные отношения с Османской империей. Австрия получила Венгрию, Трансильванию и Тимишоара, Венецианская республика - полуостров Морея и Далмация, Польша вернула Подолье и уступленные части Украины, а с Россией подписано двухлетнее перемирие, завершившееся Константинопольским миром 1700 г. Закончилось продвижение Османской империи в Европе и начался процесс потери европейских владений.[1]

[1] Карловицкий конгресс (1698-1699). - http://www.hrono.info/sobyt /1600sob /1698karlov.html

Карловицкий мир стимулировал в Османской империи начало процесса разложения традиционной государственной власти и поиск направлений реформирования системы. Возник новый формат геополитических вызовов: на севере - экспансионизм самодержавной России, на западе - немереный хищник Австрийская империя, на востоке - турболентная Персия, а на юге - для выхода в океан не хватало морской мощи: "Невозможность сохранения прежних порядков предопределила и неизбежность разрушения традиционной османской системы".[1]

К этому времени недовольство армянского населения имперским мусульманским владычеством связало освободительную установку с Российской империей. Реальным пионером этого направления стал Исраэл Ори, представивший Петру I проект освобождения Армении. В 1722 -1723 гг. Петр Великий ограничился присоединением значительный прикаспийских территорий - Дербенд, Баку, Мазандаран, Гилян и Астрабад, которые наследники не сохранили.[2]

Кючук-Кайнарджийский мир России с Османской Турции 1774 г. с патронаж Георгиевским трактатом 1783 г. над Картли-Кахетинском царстве положил потерю доминирования османов на Черном море и открыл руским путь

[1] **Ташансу Т**. Процесс модернизации в Османской империи…, с. 25.

[2] **Тунян В. Г.** Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии. Ереван, 2013, с.146- 151.

в Закавказье.[1] Ясский мирный договор 1791 г., подведший итоги войны 1787-1791 гг., подтвердил положения Кючук-Кайнарджийского мира и Георгиевского трактата. Крым окончательно стал русским и подтверждено право самодержавия на защиту православных подданных Османской империи [2] Возникшая угроза Наполеона целостности Османской империи на Балканах и Ближнем Востоке, затрагивали также интересы Российской империи, что обусловило союзные договоры, подписанные в Константинополе 3 января 1799 г. и 24 сентября 1805 г.[1]

Европейские войны конца XVIII и начала XIX вв. потрясли Османскую империю. Угроза целостности Османской империи заставила султанов Селима III и Махмуда II заняться модернизацией. Селим III (1789-1807) руководствовался программой “новый порядок”, предусматривающей преобразования разных сфер. Усилился процесс мусульманской идентичности. Стала стимулироваться текстильная промышленность, но при возвышении налогов. Установлен порядок назначения руководителей провинций центральной властью. Создание “европейских частей” за счет внешнего копирования, упразднение “тимаров” при неисполнением вои-

[1] Кючук-Кайнарджийский мирный договор. Историческая справка. - https://ria.ru/politics/20090721/178081840. html

[2] Яссский мирный договор. - http://www.hrono.ru/dokum/ 1700dok/ 1791jassy. php/1 /001/008/098/301.htm

нских обязанностей за феодальное владение, вызвало восстание янычар и гибель султана Селима III 28 июля 1808 г.[2]

Процесс вестернизации затронул все структуры государства при Махмуде II (1808-1839), который сумел в 1808 г. подорвать влияние аянов (правителей провинций) и усилить централизованное правление. В 1816 г. упразднен янычарский корпус, а в 1821 г образована "терджюме одасы" (палата переводчиков), которая стала представлять достижения западной цивилизации.[3] Армянский миллет включал в себя три миллета - григорян, католиков и протестантов. Активность Российской империи на Балканах и в Закавказье завершились Бухарестским миром 28 мая 1812 г. и Адрино-польским трактатом 2 сентября 1829 г.[4]

Наличие смежных территорий между двумя империями позволяло армянскому населению Османской империи удаляться в Российские пределы.1778 г. императрица Екатерина II предписала начать переселение крымских христиан, которое началось в августе и практически заверши-

[1] Русско-турецкие союзные договоры. - http://www.booksite.ru/fulltext/ 1/001/008/098/301.htm

[2] Султан Селим III. - ttps://topcinema.tv/serial-velikolepniy-vek/sultan-selim-iii.html; **Тарасевич И. А.** Реформы Селима III и Махмуда II в Османской империи. - http: //tds.net.ru/index.php/nauchnye-trudy/92-istoriya/148

[3] **Ташансу Т**. Процесс модернизации в Османской империи…, с. 9-15.

[4] Бухарестский мирный договор 1812 - http://www.srpska.ru/article. php?nid=1690;Адрианопольский мирный договор между Россией и Турцией 2 сентября 1829 г. – http://www.srpska.ru/article.php?nid=1690

лось в сентябре. Массовое выселение охватило 31386 человек: греков-18407, армян - 12598, грузин-210 и валахов - 162. К маю 1779 г. переселились еше несколько сот крымчан. В итоге число переселенцев составило более 32 тыс.[1] Основан г. Новый Нахичеван.

После Ясского мира 1791 г. состоялось переселения молдавских и бессарабских армян в российские пределы: 714 дымов, или 3974 чел. (1974 муж. и 2026 жен.). Приглашены к поселению армянские негоцианты из Константинополя и Анатолии.[2] Переселенческий процесс включал апостольских и католических армян, свидетельствуя об ухудшении их жизненных условий. В марте 1820 г. желание о переселение в Крым изъявили значительное число католических армян Османской империи от 15 до 20 тыс.семейств из городов Малой Азии - Токата, Анкары, Трапезунда, Эрзерума и Диарбекира, состоящие преимущественно из богатых лиц, купцов и фабрикантов.[3] Обращает внимание значительность географического представительства армян, желающих выселиться в российские пределы. Если взять среднее количество армянских семейств в 5 душ, то получается, что число желающих армян поселиться в Крым составляло 100

[1] **Нерсисян М.Г.** А.В. Суворов и русско-армянские отношения. Ереван, 1982, с.13,21, 22, 27.

[2] Армяно-русские отношения в XVIII в. Под ред. М.Г. Нерсисяна. Ереван, 1990, т. IV, N 252 -256, с 386 - 388; N 268, с. 400,401; N 1273, с. 405-407.

[3] РГИА, ф.383, оп. 29, д. 469, л.1-9.

тыс. Учет же социального состава - купцы, фабриканты, ремесленники означает, что проводимая модернизация сопровождалась возрастанием налогов или религиозной нетерпимости, либо вместе взятое.

Тенденция переселенчества турецких армян проявилась и после Адрианопольского мира 1829 г., когда выселилось 83 тыс. армян и 7 тыс. греков, преимущественно из Эрзерума, Карса и Баязета.[1] Основан г. Новый Базет.[2] Значительность выселенцев заставила турецких властей чинить препоны армянскому переселенчеству.[3]

Признание независимости Греции в 1830 г. обусловило новые проблемы. В 1831 году в Османской империи начался переход к министерской системе. Использованы возможности России против египетского наместника Мухаммед Али, восставшего против султана Махмуда II (1831-1833), завершившегося Ункяр-Искелесийским русско-турецким оборонительным союзом 1833 г.[4]

Восстановление авторитета Англии и Франции после Крымской войны (1853-1856 гг.) привело к социально-экономическим преобразованиям в Османской империи. Модернизационные реформы Танзимата (араб. упорядочение,

[1] Там же, ф. 1377, оп. 1, д. 41, л. 12.
[2] НАА, ф.267, оп. 1. д.9. л. 100.
[3] Там же, ф. 342, оп. 1, д. 8, л. 4.
[4] Ункяр-искелесинский договор.-http://www.hrono.ru/dokum/1800dok/1833unkyar.php

1839-1876), содействовали активной бюрократизации державы, появилось положение единого “ватана” (родина) в идеологии османизма, дополненного тезисами о “катылымджилыке” (единство всех национальных элементов) и “ватандашлыке” (гражданство).[1] В ходе первого периода с 1839 по 1853 гг. (Гюльханейский хатт-и-шериф) султаном Абдул-Меджидом (1839-1861) решались ряд задач: безопасность всех подданных, упорядочение налогов, сокращение воинской службы. Второй период - 1856 до 1876 гг. (хат-и-хумаюн 1856 г.) провозглашал равенство мусульман и христиан, обусловил закон о вилайетах. Несмотря на наличие частичных успехов, так как равенство всех подданных не соблюдалось, эффект реформ оказались относительным.[2]

Парижский мир 1856 г., подведший итоги Крымской войны, позволил Англия, Австрия Франция и Россия под предлогом защиты религиозных прав национальных меньшинств открыто вмешиваться в дела Османской державы. Предоставление армянской константинопольской общине в 1863 г. “Сахманадрутюна” (конституции), рассматриваемого К.Гюрюном автономией,[3] явилось попыткой султанского режима создать духовно-политический центр в лице На-

[1] **Ташансу Т**. Процесс модернизации в Османской империи…, с. 15-17..

[2] Реформы Танзимата в Османском султанате. Предпосылки и причины неудачи.-http://www.ansar.ru/history/reformy-tanzimata-v-osmanskom-sultanate-predposylki-i prichiny-neudach

[3] **Гюрюн К.** Армянское досье. Баку, 1993, с. 37 - 44.

ционального собрания для турецких армян, чтобы ослабить духовное воздействие Эчмиадзина.[1]

Балканский кризис середины 70-х годов XIX в. султан Абдул Гамид II, имеющий эпитеты "Великий правитель" и "Кровавый султан",[2] попытался решить вводом конституции в декабре 1876 г. Несмотря на декларирование положений танзимата, создание двухпалатного парламента и либерального кабинета "новых османов" во главе с Мидхат-пашой реальных успехов от созданной формы "политии" было незначительным. После войны с Россией в 1877 г. парламент был распущен на длительное время.

Сан-Стефанский прелюминарный договор и Берлинский трактат 1878 гг. резко уменьшили европейские владения султана. Возник Армянский вопрос как международная дипломатическая проблема. 16 статья Сан-Стефанского договора 19 февраля зафиксировала наличие "Армении" в составе Османской империи. В провинциях с армянским населением намечено проведение реформ.[3]

В подготовке 61 статьи Берлинского трактата от 1(13) июля 1878 г. принимала участие делегация турецких армян с бывшим константинопольским патриархом М. Хримяном,

[1] **Тунян В. Г**., Эчмиадзинский престол XX- нач. XX вв. Ереван, 2001, с. 64.

[2] Абдул-Хамид II никогда не был марионеткой. - http://inosmi.ru/europe /2012 0923/ 199694566.html

[3] Сан-Стефанский мирный договор. - http:www.hist.msu.ru/ER/Etext/ FOREJ GN /stefano/htm

деятельность которой санкционировала английская и турецкая дипломатия, чтобы не допустить перехода Турецкой Армении в состав Российской империи.[1] 25 июня армянская делегация представила участникам конгресса проект "Органического статута" для автономной Турецкой Армении с черноморским портом Ризе. Намечались правовые и управленческие реформы.[2] Конгресс принял лишь 61 статью о необходимости реформ для армянонаселенных областей.

Султан Абдул Гамид II уделил внимание сфере просвещения, профессионализации служащих, проведению железнодорожного строительства, который сопровождалось валотильностью процесса. Сохранился самодержавный султанский строй, начались репрессии и террор против армянского населения.[3] Возник протогеноцид армян (1894-1896), унесший жизнь 300 тыс. армян.[4] Османизм как идеология продержался до 1908 г.

Уменьшение территорий Османской империи усилило значение ислама как критерия идентичности. Одновременно началось разрушение миллетов на основе националистического мышления. Стал происходить переход от имперского

[1] **Киракосян Дж. С.** Дипломатическая борьба вокруг Армянского вопроса в 1878 г.- В кн.:Страны и народы Ближнего и Среднего Востока. X Турция. Ереван, 1997, с. 97, 103.

[2] **Бадалян Х.А**. "Армянский вопрос" в Сан-Стефанском договоре и на Берлинском конгрессе 1878 г. Ереван, 1955, с. 115, 116,149-153 (на арм.яз.)

[3] Султан Абдул-Хамид II. - https://www.proza.ru/2011/09/20/315

[4] Собрание французов. - Мшак, 1897, 1 февраля (на арм. яз) .

мышления османизма к национально государственному тюркизму. Западное влияние обусловило упадок значения "гражданственности". Придя к власти младотурки провозгласили лозунги французской революции - свобода, равенство и братство, восстановили парламентскую систему, но вскоре выяснили, что либеральная модернизация ведет к потеря турками статуса господствующего этноса и распаду Османской империи. На вооружение была взята программа упразднения Армянского вопроса путем Геноцида армян и создания однородной Анатолии.

В свою очередь великие державы рассматривали разные проекты решения Армянского вопроса: Россия 30 июня 1913 г. на совещание послов в Ени-Кейе вынесла проект создания единой Армянской области в Османской империи, а великий визирь 2 июля представил контрпроект реформ для шести секторов Малой Азии; компромиссный германо-русский проект привел 26 января (8 февраля) 1914 г. к русско-турецкой фиксации двух секторов в Турецкой Армении; 21 ноября 1914 г. Николай II изложил французскому послу М. Палеологу формулу решения Армянского вопроса - аннексия Турецкой Армении либо создание "самостоятельного правительства"[1]; в начале марта 1915 г. Франция имела проект создания "Восточной Армении" - Синоп-Мерсин

[1] **Тунян В. Г**. Россия и Армянский вопрос. Ереван, 1998, с.199, 200-202, 222.

(Александретта) -Диарбекир - граница Персии;[1] англо-французский проект Сайкс-Пико 1916 г. о разделе Азиатской Турции, где Франция приобретала Киликию, а Россия получала Великую Армению. Между тем турецкие власти предприняли Геноцида армян 1915-1923 гг., охвативший как территорию Османской империи, так и Закавказья.[2]

После Лозаннской конференции 1923 г., оформившей светскую Турцию,[3] возник разлом в имперской политике прошлого и начался поиск новой имперской политики. Поиск оказался вписан в начале XXI века в глобальную политику - управление миром из американского центра. Оставшимся странам было предложено подчиниться американским стандартам либо определиться в идентификации. Армянский вопрос трансформирован в Армянской фактор глобальной политики и региональных центров.

Осенью 2015 г. активизировалась геополитическая ситуация на Ближнем Востоке, приведшая к кризису международных отношений. Имело место обострение русско-турецких отношений с 24 ноябре 2015 г., в контексте противостояния Вашингтона и Москвы, из-за сбитого русского бомбардировщика Су-24 в Сирии эрдогановским режимом, обу-

[1] НАА, ф. Выписки, оп.1, д. 61, л.1.

[2] **Тунян В. Г**. Младотурки:причины Геноцида армян и способ осуществления (1908-1915), с.29-38.- http://genhist.asj-oa.am/179/1/29-40.pdf

[3] **Измайлов Р. И.** Кемализм и модернизационные процессы в 20-30-е годы XX века. - http://www. idmedina.ru/books/materials/turkology/1/turk izmailov. htm

словив возврат к политике противостояния между Российской империей и Османской империей. Президент Р. Эрдоган[1] и премьер-министр А. Давут-оглу заявили о своей причастности,[2] хотя последний затем отказался от своего заявления.[3]

Позиция президента Турции Эрдогана, под патронажем США и НАТО, обусловила диффузию политического доверия со стороны Российской федерацией. Актуализирован Армянский вопроса против Турции путем призыва к организации "Великой Армении". Наиболее четко эту позицию выразил русской политик В. Жириновский, считающий Турцию "цепным псом" Запада: "Турция всегда ненавидела Россию и использовалась Западом для провоцирования всех войн. Во всех войнах на юге Турция всегда участвовала против России. Во всех мировых войнах она была с Западом. И сегодня НАТО говорит, что Турция права. Турция - цепной пес между НАТО и США. Она все делает по заказу Вашингтона. Это трусливые кочевники, которые случайно из-под Ташкента пять веков назад прорвались в Византийскую империю. Турция всегда ненавидела нас".

---

[1] Ложь в турецком исполнении: Эрдоган "обьяснил" атаку на русского фехтовальшика. - http://www.vesti.ru/doc.html?id=2691169; Давутоглу лично отдал приказ на уничтожение российского Су-24. -http://armtoday.info/default.asp? Lang=Ru& NewsID=138917

[2] **Холмогоров Е**. Россия иТурция обречены на конфликт.-http://www.yerkramasorg/article/98137/rossiya-i-turciya-obrecheny-na-konflikt

[3] Давутоглу заявил, что не отдавал приказ на уничтожение российского Су-24. - http ://news.mail.ru/politics/24432327/

Предложен новый формат Ближнего Востока, коренным образом меняющий геополитический расклад отношений этносов, причем показана несостоятельность позиции Советской власти к самоопределению Турецкой Армении: ”С Турцией нужно заканчивать. И что нужно сделать? - чужими руками. Армяне ненавидят турок, если мы им разрешим начать освобождать свои западные территории, то войну начнем не мы. Армяне с удовольствием это сделают, они это сделали бы еще в 1918 году, но Москва опять стала на сторону турок”.

Указаны последствия видения возможной конфигурации государственности на Ближнем Востоке: “Если РФ скажет турецким курдам, что мы признаем их независимость - это 20 млн человек с уже известной столицей - Диарбекир. То есть Восточной Анатолии нет, все. Будет независимый Курдистан и Великая Армения”. Предложено “помочь туркам и армянам начать освобождение курдских и армянских земель”.[1]

Проект “Новый Ближний Восток” введен в политический оборот в 2006 г. госсекретарем США Кондолизой Райс. Он включал территории Ближнего Востока от Турции до Афганистана, представляемые дугой нестабиль-

[1] Жириновский призвал помочь армянам освободить Западную Армению.- http://www.tert.am/ru/news/2015 /11/25/ jirinovski/1855394

ности и основой для возникновения новых государств.[1] Геополитический смысл - установление полного контроля США над регионом,[2] что породило ряд мифов у акторов разного уровня.

Таблица N 2

Страны-участники	Обоснование мифов-проектов
1. Виды США	1.Новый Ближний Восток
2. Интересы Российской Федерация на Ближнем Востоке	2. Единая Сирия, автономия курдов, виды активизации Армянского вопроса.
3. Планы Турция	3. “Неосманизм”
4. Намерения Ирана	4. Шиитская дуга
5. Армения	5. Армянские интересы
6.Установка Азербайджана	6. Партнерство с Турцией
7. Расчеты Грузии	7.Опасение перемен
8. Страдания Сирии	8. Самосохранение страны
9. Подход Израиля	9. Независимый Курдистан

Еще в июле 2011 г. госсекретарь США Хилари Клинтон на усмотрение руководства Турции представила ”новую перспективную карту Кавказа и Ближнего Востока”, намечен-

[1] “Новый Ближний Восток” - Армагеддон и границы крови. - http://www.liveinternet.ru/community/3629085 /post185090895/

[2] В поисках виртуального Курдистана. - http://www.armtoday.info/default.asp?Date=01/11/2008&Lang=Ru&NewsID=2170&PagePosition=1& RegionID=0&SectionID=0

ную к реализации, якобы, после решения проблемы Нагорного Карабаха. При этом Клинтон указала на необходимость удовлетворения исторической справедливости относительно Армении: “Мы (США и Турция) должны Армении то, что ей обещал еще президент Вудро Вильсон“. Имелось в воду реализация положений Севрского договора о создание единой Армении (за счет Турецкой и Русской) с выходом к Черному морю.[1] Последующий подход американский дипломатии лишь подтвердил значимость Армянского фактора для США на Кавказе и Ближнем Востоке.[2]

Актуализируются составные части Армянского вопроса - Нагорный Карабах, Нахичеван, Джавахк и территории Западной Армении. Однако он имеет соподчиненный характер в политическом дискурсе, а точнее ему отводится инструментальный характер по сдерживанию намерений Турции. Если для Российской федерации значимым является военно-политическая роль Республики Армения в Закавказье, то обострять ситуацию в Малой Азии из-за Армянского вопроса является крайней мерой. Допускается возможность создание со стороны США Западно-Армянской Республики с американским военным представительством, когда Восточно-Армянская Респуб-

[1] Кто заплатит за выход Армении к Черному морю? - http://inosmi.ru/caucasus/20110817/173431116.html

[2] США готовят в Армении кавказскую бомбу для России. - https://eadaily.com/ru/news /2016/08/19/vestnik- kavkaza

лика будет представляет военные интересы Российской федерации.[1]

В Грузии призывают не спешить с денонсацией Карского договора, поскольку откроется ящик Пандоры, поэтому прогнозируется удобное время: “Несмотря на то, что срок заключённого на 100 лет Карского договора истекает через 5 лет и 9 месяцев - 21 октября 2021 года, Россия и Турция могут его денонсировать в одностороннем порядке, а Грузия, Армения и Азербайджан, пользующиеся в документе статусом одной стороны, **выйти из Карского договора по отдельности не имеют права.** Да и не хотят, ведь от денонсации Карского договора выиграет только Армения, которой Турция будет обязана вернуть 30% территории, а Азербайджан - Нахичеван. Грузии же придётся отдать Турции Аджарию”.[2]Не указывается источник датировки 100-летнего срока действия Карского договора, но в то же время делается территориальная заявка на участие в политическом процессе переустройства Ближнего Востока, где выдвигается претензия на Артвин, Ардаган и Эрзерум.

Азербайджанская пропаганда гласит об агрессивном внешнем курсе Армении как не соответствующему

[1] **Сваренц А**. Армянский вопрос в региональной геополитике. - http://noevkovcheg.ru/mag /2012-13/3345.html

[2] **Хидирбегишвили Арно**. “Турецкая разведка устроит теракт в Батуми и введет туда войска под предлогом защиты Аджарии”.- http://www.iare.ru/articles/52251.html

российским интересам, естественно, и Азербайджана: “Целью армянской стороны является взрыв устоявшегося мироустройства в регионе Южного Кавказа, имея в виду расширение "Великой Армении" руками российских солдат на юг, восток и запад, что достижимо лишь ценой большой войны между Россией и Турцией. При этом Россия получит эшелоны грузов 200 (убитые), а Армения новые благодатные территории и возросший вес на мировой арене, что в перспективе как раз освободит ее от зависимости от Москвы”.[1]

Проблема замирения с Арменией рассматривается Эмин Шихалиевым сквозь призму геополитических интересов. Их составные призваны обеспечить дискурс политики: мир, перемирие или война?

Таблица N 3

Представления	Обоснования
1.Политический вариант: Армения “торпедирует” урегулирование конфликта о Карабахе; переговоров. 2.Военный вариант: союз России и Армении; Кремль не решает вопрос Карабаха; Армения “полунезависимое”	1.Политический вариант: Азербайджан - сохранение территориальной целостности; отсутствие перспективы крещения. 2.Военный вариант: Союз Азербайджана с Турцией; Азербайджан член СНГ и су-

[1] **Рюриксон И**. Ереван готовит Турции российскую ловушку - расследование. – http://news.day.az/politics /736940.html

государство; военный конфликт не состоятелен. 3.Вариант “долгосрочного перемирия”: бесконечные переговоры для закрепления захваченных территорий. 4. Пиррова победа Республики Армении в Карабахе.	бьект политики, но сдвига нет из-за геополитического характера конфликта. 3. Вариант “долгосрочного перемирия”: переговоры - застой - переговоры – укрепление военного потенциала РА. 4.Армения “заложник” интересов великих держав.

Конфронтацинность обеих сторон иллюстрирует отсутствием компромиссности: если политолог Артем Вартанян предлагает передать Карабах под мандат России на срок свыше 20 лет,то в Баку руководствуются принципом нейтрализации либо ублажения России для получения Карабаха. Предпочтительным считается военное решение конфликта, в условиях более развитой экономики и сильного военного потенциала, но Россия выступает гарантом безопасности Армении и поставляет ей оружие. Для Баку возможны “серьезные проблемы” с международными организациями и странами Запада. Предпочтительным вариантом считается “блиц-криг”, так как затягивание войны рассматривается угрозой для

территориальной целостности Азербайджана, “как это было в начале 90- годов”.[1]

24 апреля 2016 г. президент Турции Эрдоган направил очередное соболезнованием наместнику Константинопольского патриарха архиепископу Араму Атешяну в духе концепции “общей боли”,[2] а 11 мая 2016 г. Министерство юстиции Турции отказалось рассматривать иск католикосата Великий дом Киликии о возврате духовной резиденции в Сисе и церковного достояния.[3]

При этом учитывается роль Армянского вопроса в международных отношениях.4 июня 2016 г. Эрдоган заявил по национальному телевидению о его использовании ведущими державами для воздействия на Турцию: ясна с самого начала. Мы никогда не примем обвинений в геноциде”.[4]

Расставлены акценты в освещении Армянского вопроса как международного инструментария: “За плечами каждой из стран, которые угрожают нам резолюциями по геноциду армян, вина и кровь миллионов невинных людей…

[1] **Шихалиев Э.** Ближайщие перспективы армяно-азербайджанского конфликта: мир, перемирие или война? - http://irs-az.com/news/pdf/201310/ 1383120 196896 905825.pdf

[2] Эрдоган выразил соболезнование родственникам армян, погибших в 1915 году. - http://ria.ru/world /20160424 /1419114244.html

[3] Минюст Турции потребовал отклонить обсуждение иска о Киликийском католикосате в Сисе. - http://www. panarmenian.net/rus/news/214862/

[4] Эрдоган: Армянский вопрос используется с целью шантажа Турции. – https://www. vedomosti. ru/politics /news/ 2016/06/04/643634

Армянами лишь пользуются. Во всем мире армянский вопрос начал восприниматься в качестве удобного средства шантажа Турции, или даже некой дубинки".[1]

Такой подход обусловлен стремлением Эрдогана модернизировать Турции в формате неосманизма. 23 октября 2016 г. в Совете Безопасности Турции президент Эрдоган изложил геополитическую установку неосманизма: "Нас загнали в территорию площадью 720 тысяч квадратных километров, тогда как мы владели 20 миллионами квадратных километров. **Нас заставляли сторожить границы этого малого куска земли. Но это уже не пройдет. Мы выйдем за границы нынешней территории, кто бы что не говорил".**

Основой подхода представлен завершающий акт парламента Османской Турции

1920 г. "Национальная присяга", предусматривающией сохранения территориального массива: "Будущее территорий, населенных арабским большинством в момент подпи-сания Мудросского перемирия (1918 год) будет определяться путем референдума. С другой стороны территории, которые не были оккупированы в то время и заселены турецким большинством, являются родиной турецкой нации".

К времени подписания Мудросского перемирия 31 октября 1918 г. Армения, Сирия, Палестина, Аравия и Месопотамия не были заняты странами Запада, что с позиции Эрдо-

[1] **Князев А.** "Больной" Армянский вопрос.- http://news-front.info/2016/06/07

гана означает их признание “родиной турецкой нации”, игнорирование Севрского (1920) и Лозаннского (1923) договоров.

Истоком нового неосманизма представляется поглощение городов Мосул и Алеппо, [1] как средства недопушения создания государства Курдистан и возрождения Армянского вопроса. В этом направление Эрдоган сделал очередной шаг.16 апреля 2017 г. путем референдума состоялось введение президентского правления: вместо светского правления военных в формате наследия Ататюрка произошел переход к “султанскому правлению”.[2] Это означает усиление политической напряженности для Армении: “Эрдоган - любитель политических авантюр, следовательно, и в отношениях Армения - Турция он может в любой момент пойти на ухудшение ситуации”.[1]

Таким образом, имперский разлом и глобализация не изменили состояния Армянского вопроса. В условиях модернизации Османской империи и Турции при американском доминировании Армянский фактор имеет соподчиненное значение. Происходит глобально-региональное мифотворчество с участием Армянского фактора в рамках проекта форматирования “Нового Ближнего Востока”.

[1] **Ганжа А.** Курдистан и новые границыТурции.-https://regnum.ru /news/ polit//2197315.html

[2] Турция “Ататюрка” умерла:какого соседа получила Армения.-http://www.lragir.am /index/rus/0/comments/view/55076

Վալերի Թունյան, Հայկական Հարցը. կայսրական քաղաքականության ավարտը և գլոբալիզացիան - Հայկական Հարցն Օսմանական և Ռուսական կայսրություններում ուներ ենթակայական նշանակություն: Նույն պատկերը պահպանվեց XXI դարի սկզբում միաբևեռ աշխահարի պայմաններում՝ ուժեղացնելով նրա գործիքային նշանակությունը միջազգային հարաբերություններում ընդդեմ Թուրքիայի: Հանդես եկան նոր մարտահրավերներ:

Valery Tunyan, The Armenian factor. Empire Policy: end and globalization - The Armenian factor had substantial significance in the Ottoman and Russian empires. The same picture was preserved at the beginning of the 21st century in a unipolar world, enhancing its instrumental significance in international relations against Turkey. They brought new challenges.

[1] Результаты референдума по констуитуционным реформам в Турции вызывают тревогу.- http://novo stink.ru/mir/197941

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918-1920 ԹԹ.

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր - Հայաստանի առաջին Հանրապետություն, Հայ Ժողովրդական կուսակցություն, անկախություն, կուսակցություն, ընդդիմություն, ծրագիր, կառավարություն, պաշտոնաթերթ, խորհրդարան, կոալիցիա:

Հայաստանի Հանրապետությունում ՀՅԴ-ից հետո ամենահզոր քաղաքական ուժի՝ ՀԺԿ-ի պատմության վերաբերյալ նյութերը շատ քիչ են: ՀԺԿ-ին նվիրված հուշագրություններ էլ չկան[1]: Նյութի այդ սակավությունն ու խորհրդային շրջանում տիրող միակուսակցական համակարգը «նպաստել են», որ ՀԺԿ-ի պատմությունը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Միակ բացառությունը Դավիթ Խեչումյանի մի քանի

[1] Լավ է, որ գոնե իրենց հուշերում ՀԺԿ-ին երբեմն անդրադարձել են Ս. Վրացյանը («Հայաստանի Հանրապետութիւն», Փարիզ, 1928), Ա. Խատիսյանը («Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Պէյրութ, 1968), Ա. Ահարոնյանը («Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Քաղաքական օրագիր, 1919-1927»), Եր., 2001, Ա. Դարբինյանը («Հայ ազատագրական շարժման օրերէն», Եր., 2003), Ա. Խոնդկարյանը («Օպոզիցիան հանրապետական Հայաստանում», «ՎԷմ», 1933, Ա, էջ 63-82, Բ, էջ 68-79, 1934, Գ, էջ 76-98, Ե, էջ 43-46):

հրապարակումներն են[1]: Չնայած դրան, 1918-1920 թթ. պատմությանն անդրադարձած խորհրդային ու հետխորհրդային ուսումնասիրողներից ոմանք այս կամ այն չափով խոսել են ՀԺԿ-ի մասին: Մասնավորապես Ռ. Հովհաննիսյանը[2], Լ. Խուրշուդյանն ու Կ. Խուդավերդյանը[3], Ա. Հակոբյանը[4], Վ. Մելիքյանը[5], Հ. Վարդիվառյանը[6], Գ. Ավագյանը[7], Վ. Բաբաջանյանը[1], Վ. Վիրաբյանը[2] և ուրիշներ:

[1] Տե՛ս **Խեչումյան Դ.,** Հայ Ժողովրդական կուսակցության գաղափարախոսության և գործունեության հակաժողովրդական էությունը, ԼՀԳ, Եր., 1984, թիվ 2: Տե՛ս նաև, **Хечумян Д.,** Критческий анализ идеологии и политики Армянской народной партии /1917-1921гг./, (ատենախոսության սեղմագիր) Ереван, 1987.

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն (4 հատոր, The Republic of Armenia, հատոր 1 (1971) և հատոր II (1982), հատորներ III և IV (1996) U.C. Press):

[3] Տե՛ս **Хуршудян Л., Худавердян К.** Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии, «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», Калинин, 1980, с.102.

[4] Տե՛ս **Հակոբյան Ա.,** «Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը», ԼՀԳ, N 2(106), 2002, էջ 106-111, նույնի Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, նույնի Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Եր., 2018:

[5] Տե՛ս **Մելիքյան Վ.,** 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Եր., 1997:

[6] Տե՛ս **Վարդիվառեան Հ.,** Մեծ երազի ճամբուն ուղեվորները եվ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հատ. Ա, Արմենական կազմակերպութիւն, Հայ Ժողովրդական կազմակերպութիւն, Նիւ Ճըրզի, 2015, էջ 315-391:

[7] Տե՛ս **Ավագյան Գ.,** Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, ատենախոսության սեղմագիր, Եր., 2009:

ուրիշներ: Կուսակցության պատմության վերաբերյալ զգալի նյութեր կան նաև Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ), Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) ֆոնդերում[3], տպագրված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում[4] և մամուլում[5]:

Կուսակցության գաղափարական նախորդները «Մշակ» թերթի շուրջը համախմբված ազատական մտավորականներն էին, որոնք իրենց համարում էին մշակականներ և ՀԺ կուսակցության նախապատմությունն էլ հասցնում էին մինչև XIXդ. 70-80-ական թվականները: Ուստի՝ այս

---

[1] Տե՛ս «Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918 - 1920 թթ.», Եր., 2017:

[2] Տե՛ս **Վիրաբյան Վ.,** Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ. կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից), Եր., 1999:

[3] Տե՛ս ՀԱԱ ֆ. N N 292, 1022, 4033, Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ Ա. Չոպանյանի, Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Մ. Աբեղյանի, Թ. Ազատյանի ֆոնդերը և այլն:

[4] Օրինակ՝ «Документы и материалы по Внешней политики Закавказья и Грузии», Тифлис, 1919. Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր…), խմբ. Հր. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, Ա, հատ., 1984, Բ. հատ., 1985, Գ. հատ., 1976, Դ. հատ., 1982, Նիւթեր…, խմբ. Եր. Փամպուքեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, Ե. 2007, Զ. հատ., 2010, Է. հատ., 2010, Ը. հատ., 2011, Թ. հատ., 2012 և այլն:

[5] Շահեկան են հատկապես ՀԺԿ պաշտոնաթերթեր «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն» ինչպես նաև «Վան-Տոսպ», «Հայաստան», «Մշակ», «Հորիզոն», «Կառավարության լրաբեր», «Հովիտ», «Վէմ», «Тифлиский листок», «Кавказское слово» պարբերականները:

կուսակցությունը պաշտպանում էր հայ ազատական-ժողովրդավարական շրջանակների շահերը, իղձերն ու ցանկությունները և արևմտահայ ռամկավարների շահերի արտահայտիչ ՀՍՌԿ-ի հետ գտնվում էր սերտ, բարեկամական հարաբերությունների մեջ:

Հաճախ ՀԺԿ-ին նույնացրել են կայսրության հպարակ ազգերին սոսկ ազգային-մշակութային ինքնավարություն խոստացող ռուսական Կադետների (Սահմանադրական դեմոկրատներ) կուսակցության հետ: Սակայն ՀԺԿ-ն ուներ ընդգծված ազգային նկարագիր, իսկ կադետները ռուսական մյուս կուսակցությունների նման առանձնապես մեծ կարևորություն չէին տալիս ազգային հարցին:

Արևելահայոց՝ քաղաքական կյանքի կենտրոն Թիֆլիսում «Մշակ» թերթի շուրջ համախմբված հենց այս մտավորականության ջանքերով էլ (նախաձեռնող խումբը Հ. Առաքելյան, Մ. Պապաջանյան, Ս. Հարությունյան, Լ. Ղուլյան. Գ. Մելիք-Ղարագյոզյան և ուրիշներ) 1917 թ. ապրիլի 11-ին հիմնադրվեց Հայ Ժողովրդական կուսակցությունը: Հրապարակվեց հռչակագիր, որը փաստորեն ուներ ծրագրային բովանդակություն[1]: ՀԺԿ-ի որևէ խորհրդանիշ գտնելու ուղղությամբ մեր ջանքերն անարդյունք եղան: Մեր ունեցած փաստերը խոսում են այն մասին, որ ամենայն հավանականությամբ կուսակցությունը զինանշան, դրոշ կամ մեկ այլ խորհրդանիշ չի հասցրել

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, գ. 7, ց. 11, թ. 1-2, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 26, Մշակ, 7. IV.1917:

ստեղծել: Նորաստեղծ կուսակցությանն անդամագրվեցին մտավորականներ, ֆաբիկատերեր, առևտրականներ, վաճառականներ, մանր ու միջին քաղաքային և գյուղական խավերի ներկայացուցիչներ[1]:

ՀԺԿ-ն ողջունեց ռուսական Փետրվարյան մեծ և անարյուն հեղափոխությունը և իր լիակատար համակրանքն ու աջակցությունն հայտնեց Ժամանակավոր կառավարությանը: Ազգային և տնտեսական խնդիրների լուծումը թողնվում էին մոտ ապագայում հրավիրվելիք Սահմանադիր ժողովի իրավասությանը:

ՀԺԿ-ն գումարել է երկու համագումար՝ 1-ինը 1917 թ. սեպտեմբերի 24-28-ը Թիֆլիսում և 2-դը՝ 1919 թ. սեպտեմբերին Երևանում: Դրանցում մշակվել և ընդունվել են կուսակցության երկու ծրագրերը, կանոնակարգվել են կենտրոնի և մասնաճյուղերի միջև հարաբերությունները և այլ կազմակերպական հարցերը:

Թիֆլիսում ընդունված ՀԺԿ-ի առաջին ծրագիրը հավաստեց, որ շատ կարճ ժամանակի ընթացքում կուսակցությունը սահմանազատվելով ռուսական կադետներից և ապրելով հետագա քաղաքական բարեշրջում, լիովին կանգնել է ազգային հողի վրա[2]:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 562, «Մշակ", 14 սեպտեմբերի 1917, «Ժողովրդի ձայն», 29 հունիսի, 1919:

[2] Տե՛ս **Հակոբյան Ա.,** «Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը», ԼՀԳ, N 2 (106), էջ 108:

Համագումարն ընտրեց 23 անդամից բաղկացած մշտական Կենտրոնական կոմիտե և Կենտրոնական բյուրո: Կենտրոնական բյուրոյի նախագահ ընտրվեց Ռուսաստանի 4-րդ պետական դումայի և Անդրկուկասյան հատուկ կոմիտեի անդամ Միքայել Պապաջանյանը[1]: Փոխնախագահներ ընտրվեցին Համբարձում Առաքելյանը, Իսահակ Ամիրյանը և հայտնի բժիշկ Կարապետ Ստեփանյանը[2]:

Կուսակցության առաջին համագումարում ընդունվեցին նաև մի շարք հիմնարար փաստաթղթեր: Դրանցից ամենակարևորը 1917 թ. ապրիլի 11-ին հրապարակված հռչակագրի հիման վրա վերամշակված սեպտեմբերի 27-ին վավերացված կուսակցության անդրանիկ ծրագիրն էր և կուսակցության կանոնադրությունը[3]:

Ծրագիրը բաղկացած էր երկու՝ Ընդհանուր պետական և Ազգային հարցեր բաժիններից և 75 հոդվածներից: Ընդ որում, առաջին բաժինը ութ, իսկ երկրորդը՝ երկու ենթագլուխներից էր կազմված: Ծրագրի առաջին հոդվածում հայտարարվում էր, որ ՀԺԿ-ն համազգային կուսակցություն է և «կարող է ճիւղեր բանալ թէ Ռուսաստանում և թէ նրա սահմաններից դուրս»[4]: Ծրագրվում էր երկրում դասային

[1] Տե՛ս **Ավագյան Գ.,** նշվ. աշխ., էջ 35:
[2] Տե՛ս նույն տեղում, 13. X. 1917:
[3] Տե՛ս Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցութեան, վերաքննված Ա. Համագումարում սեպտեմբերի 27-ին, Թիֆլիս, «Էկօնօմիա» տպարան, 1917: Ի դեպ, ծրագիրը համարվում է նաև ՀԺԿ-ի թիվ 1 հրատարակությունը:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 3:

արտոնությունների վերացում և բոլոր քաղաքացիները, առանց սեռի, դավանանքի և «ազգի խտրութեան, հավասար կդառնային օրէնքի առաջ: Հռչակվում էին մամուլի, խղճի, խոսքի, միտինգների, կրթության և այլ դեմոկրատական ազատություններ: Հայտարարվում էր, որ եկեղեցին պետք է անջատ լինի պետությունից, վերացվի գրաքննությունը: Մարդիկ պատասխանատվության կարող էին ենթարկվել բացառապես դատարանների վճիռներով: Մասնավոր սեփականության իրավունքն համարվում էր անձեռնմխելի:

Ծրագրում առանձին ենթաբաժիններ էին հատկացված պետական կարգին և տեղական կառավարմանը: Հայտարավում էր, որ երկիրը պետք է «լինի դեմօկրատական պարլամենտական հանրապետութիւն» և «օրէնսդրական իշխանութիւնը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչութեան»[1]: Իսկ վերջիններս ընտրվելու էին ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվությամբ: Հստակ հայտարարվում էր, որ ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման, «ինչ անուն էլ որ կրէ և ումնից որ բղխէ» չի կարող օրենքի ուժ ստանալ առանց ժողովրդական ներկայացուչության որոշման[2]:

Ծրագրում ասվում էր նաև, որ բոլոր տեսակի հարկերն ու դրանց չափերը պետք է որոշվեն բացառապես օրենսդրական կարգով: Բոլոր այդ սկզբունքները պիտի

[1] Տե՛ս Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության, Թիֆլիս, 1917, էջ 7:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 8:

գործեին նաև տեղական կառավարման մարմիններում, որոնք պիտի կազմվեին ըստ ազգային հատկանիշի:

Առանձին՝ «Դատաստան» ենթաբաժնում հռչակվում էր, որ դատական իշխանությունը պետք է անկախ լինի իշխանության մյուս՝ օրենսդիր և գործադիր թևերից: Բոլորը պետք է հավասար լինեն դատարանի առաջ, իսկ դատական գործընթացները՝ պետք է կազմակերպվեին հրապարակային և ուննենային մրցակցային բնույթ: Վերացվում էր մահապատիժը և կիրառվում պայմանական դատապարտությունը:

«Ֆինանսներ և տնտեսական քաղաքականություն», «Հողային օրենսդրություն» ենթաբաժիններում լուսաբանվում էին կուսակցության մոտեցումներն այդ կարևոր տնտեսական ոլորտներին և պատադիր համարվում դեմոկրատական սկզբունքների կիրառումը նաև այդ ասպարեզներում: «Բանվորական օրենսդրություն» ենթաբաժնում էլ հռչակվում էին ութժամյա աշխատանքային օրվա, գործադուլի իրավունքի, գիշերային և սահմանված չափերից ավելի աշխատանքային օրերի նորմավորման, կանանց և անչափահասների աշխատանքի պաշտպանության, պետական ապահովագրություն մտցնելու և այլ առաջադիմական պահանջներ: Իսկ «Ժողովրդական լուսավորություն» ենթաբաժնում հայտարարվում էին նախնական դպրոցներում ընդհանուր, ձրի և պարտադիր ուսուցման, դպրոցներում բոլոր այն տեսակի

սահմանափակումների, որոնք «հիմնված են սեռի, ծագման և կրօնի վրա»[1], վերացման անհրաժեշտության և այլ նորամուծությունների մասին:

Ժողովրդականները Հայկական հարցում Արևելահայաստանի և Արևմտահայաստանի համար դրսևորում էին տարբերակված մոտեցում: Այսրկովկասում բնակվող արևելահայերի համար նախատեսում էին «օրէնսդրական մարմնով ազգային տերիտօրիալ աւտոնոմիա», որի տարածքում պաշտոնական լեզուն պետք է լիներ հայերենը: Իսկ այդ ինքնավարության սահմաններից դուրս գտնվող հայերը պետք է վայելեին «անձնական ազգային-կուլտուրական աւտօնոմիա»[2]: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա ժողովրդականներն այն համարում էին միջազգային հարց, որը հնարավոր էր լուծել որևէ միջազգային վեհաժողովում, իսկ ՀԺԿ-ն պետք է ամեն ինչ աներ, որ «այդ հարցը լուծվի ըստ թիւրքահայերի ցանկութեան»[3]: Իսկ հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում, ըստ քաղաքական հանգամանքների ու իրադրության, ժողովրդականներն ունեցել են փոփոխական և շրջահայաց դիրքորոշում: Սակայն միշտ ՀԺԿ-ն դավանել է Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է ունենան միայն մեկ՝ հայկական կողմնորոշում սկզբունքին:

[1] Տե՛ս Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության, Թիֆլիս, 1917, էջ 15:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

ՀԺԿ-ն ոչ հեղափոխական գործելակերպի, խաղաղ, աստիճանական բարեշրջման, ամուր խորհրդարանական, իրավական, ժողովրդավարական պետության կողմնակից կուսակցություն էր: Ժողովրդականներն ընդունում էին ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ:

Ծրագրին կից ընդունվեց նաև կուսակցության կանոնադրությունը, որը սահմանում էր. «կուսակցութեան անդամ կարող են լինել այն հայերը, որ ընդունում են կուսակցութեան ծրագիրը, կենթակվեն կուսակցական կարգապահութեան և պարբերաբար վճարքներ են հատուցանում կուսակցութեան գանձարանին»[1]: Սահմանվում էին կուսակցության բարձրագույն (համագումար) և «ընթացիկ» (կենտրոնական կոմիտե) ղեկավար մարմինների իրավասությունները և դրանց ու տեղական համապատասխան կառույցների միջև եղած իրավունքների ու պարտականությունների շրջանակները:

Ինչպես արդեն նշեցինք, կազմակերպական ձևով ՀԺԿ-ն նույնպես ազգային էր: Կուսակցության անդամ կարող էին լինել միայն հայերը[2]: Մյուս հայ ավանդական կուսակցությունների նման ՀԺԿ-ն ևս գործունեություն էր ծավալում բոլոր այն տեղերում, որտեղ հայեր էին բնակվում: Կուսակցությունը հիմնել է մասնաճյուղեր ոչ միայն

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[2] Տե՛ս «ժողովուրդ», 29. IX. 1918:

Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում, այլև Հյուսիսային Կովկասում, Իրանում և այլուր: 1917 թ. ՀԺԿ 1-ին համագումարի հաշվետվության մեջ հիշատակվում էր, որ հինգ ամսվա ընթացքում հիմնվել է կուսակցության 32 ճյուղ և 10 ենթաճյուղ[1], իսկ մինչև 1920 թ. վերջը՝ 50-ից ավելի ճյուղեր[2]: Իր գոյության ընթացքում ՀԺԿ-ն հրատարակել է «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն», «Ժողովրդական թերթ», «Երկիր», «Նոր կյանք» թերթերը: Կուսակցությանը կից գործում էին ուսանողական, աշակերտական, կանանց ֆրակցիաներ, որոնք հրատարակում էին «Քայլեր» և «Նոր ուղի» թերթերը:

ՀԺԿ-ն նորանկախ Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանության մեջ

1917 թ. հուլիսի 17-ին հիմնադրված Հայոց ազգային խորհուրդն իրականացրեց իր հիմնական և գլխավոր նպատակը՝ հիմնեց համազգային միասնական ղեկավար և պատասխանատու մարմին: Այն փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչև Հայաստանի անկախության հռչակումը և «ստանձնեց կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[1]: ՀԱԽ-ը կազմված էր 15 անդամից՝ վեց դաշնակցական, երկու էսէռ, մեկ հնչակյան, մեկ

[1] Տե՛ս «Մշակ», 26. IX. 1917.

[2] Տե՛ս **Хуршудян Л. Худавердян К.** Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии, «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», Калинин, 1980, с.102.

մենշևիկ, երեք անկուսակցական և ՀԺԿ երկու ներկայացուցիչ (Սամսոն Հարությունյան, Հարություն Այվազյան)[2]:

Հայաստանի անկախության հռչակումից հետո կառավարություն ստեղծելու հարցի շուրջ սուր պայքար ծավալվեց հատկապես ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի միջև: ՀԺԿ-ն որոշում ընդունեց կառավարության ստեղծումը չվստահել Հ. Յ. Դաշնակցությանը և իրենց դիտելով իբրև ավելի խելացի և հավասարակշռված գործելակերպ ունեցող կուսակցության, իրեն էր վերապահում ՀՀ կառավարություն ստեղծելու իրավունքը: Ժողովրդականները գտնում էին նաև, որ ժամանակին ֆիդայական պայքարը ղեկավարած դաշնակցական կառավարության համար ահնարին կլինի լեզու գտնել թուրքերի ու նրանց դաշնակիցների հետ:

1918 թ. հուլիսի 17-ին Ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեցին Հայաստան, որի հետևանքով հայ քաղաքական կյանքի կենտրոնը դարձավ Երևանը: Այստեղ կուսակցությունների «փոխադարձ համաձայնութեամբ կատարելով աթոռների բաշխում»[3], Ազգային խորհրդի անդամների թվաքանակը եռապատկելու սկզբունքով կազմվեց Հայաստանի խորհրդարանը, որի 46 պատգամավորներից 6-ը ՀԺԿ-

[1] Տե՛ս **Խոնդկարեան Ա.** նշվ. աշխ., «Վէմ», N 1, 1934, էջ 77:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 1-3:
[3] Տե՛ս **Խոնդկարեան Ա.,** նշվ. աշխ., 1934, թիվ 1, էջ 92:

ականներ էին[1]: Ի դեպ՝ ՀԺԿ-ն երկու մանդատ էլ ուներ Վրաստանի խորհրդարանում[2]: ՀԺԿ անդամ Ստ. Մալխասյանի առաջարկով հայկական եռագույնը համարվեց ՀՀ պետական դրոշ: Խորհրդարանի ընտրված երկու փոխնախագահներից մեկը ևս ՀԺԿ անդամ Գրիգոր Խաչատրյանն էր:

Հովհաննես Քաջազնունու գլխավորած ՀՀ առաջին կառավարությունը կազմվեց հայ ժողովրդի համար ծանր և դժվարին պայմաններում: Վարչապետը խորհրդարան ներկայացրեց հայտագիր (դեկլարացիա), որին ընդդմությունը բավականին զուսպ արձագանքեց: Էսեռների ֆրակցիան ձեռնպահ քվեարկեց: Սոցիալ-դեմոկրատները քաղաքական անզգուշություն դրսևորելով (նրանք նշում էին, որ «կառաւարութեան յայտագիրը յիշեցնում է Ստոլոպինին, ով ասում էր՝ «նախ խաղաղութիւն, ապա րեֆորմներ»[1]) ևս ձեռնպահ մնաց: Ժողովրդականները մատնանշելով մի շարք բացթողումներ՝ գոհունակություն հայտնեցին հայտագրի հեղինակ կառավարությունից: Ի վերջո բանաձևն անցավ 23 ձայնով: Ոչ ոք դեմ չքվեարկեց: Ձեռնպահ մնացին 11 հոգի: Իր ձեռնպահությամբ ապահովելով անհրաժեշտ մեծամասնությունը կառավարության համար,

[1] Խորհրդարանում վեցական պատգամավոր ունեին ընդդիմադիր սոցիալ-դեմոկրատները (5 մենշևիկ և 1 բոլշևիկ) և էսեռները: Կային նաև վեց մահմեդական, երկու անկուսակցական և մեկական ռուս ու եզդի պատգամավորներ:

[2] «Հորիզոն», 20 սեպտեմբերի 1918:

ընդդիմությունը չուզեց գնալ առճակատման և հնարավորություն «տւաւ Հայաստանի Խորհրդին արագ կերպով փակելու դահլիճի հարցը ու անցնելու հերթական խնդիրներին»[2]:

Երկրում տիրում էր ծանր կացություն, կառավարությունն էլ անփորձ էր: Այդ պատճառով էլ ունեցավ լուրջ բացթողումներ: Առանց այն էլ դժվարագույն պայմաններում գոյատևող հայ ժողովուրդն աստիճանաբար հայտնվում էր անդունդի եզրին: Օրեցօր սաստկացող սովն ու տարափոխիկ հիվանդությունները խլում էին մեծ թվով մարդկային կյանքեր: Հազարավոր սոված ու տկլոր գաղթականների առկայությունը՝ մի կողմից, մաուզերիստների անկարգությունները՝ մյուս կողմից, խաթարում էին հանրային կյանքը բնականոն հուն տեղափոխելու իշխանությունների ջանքերը:

Այդ իրողություններից դժգոհ ընդդիմադիր ուժերն իրենց պաշտոնաթերթերում[3] ու բանավոր ելույթներում

[1] Տե՛ս **Խոնդկարեան Ա.,** նշվ. աշխ., 1934, N 4, էջ 80:

[2] Տե՛ս **Խոնդկարեան Ա.,** նշվ. աշխ., 1934, N 4, էջ 83:

[3] Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության գոյության ընթացքում լույս են տեսել կենտրոնական և տեղական նշանակության 60 անուն թերթեր: Դրանցից աջակողմյան թևին պատկանող ազդեցիկ պարբերականներ էին ՀԺԿ-ական «Ժողովուրդը», ՀՍՌԿ-ի «Վան-Տոսպը» և նրա իրավահաջորդ «Հայաստանի ձայնը»: Ձախակողմյան մամուլը ներկայացնում էին սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) «Սոցիալիստ հեղափոխական», սոցիալ-դեմոկրատ մենշևիկների հայաստանյան կազմակերպության օրգան «Կայծ» եռօրյան, Ալեքսանդրապոլում լույս տեսնող մենշևիկյան «Մարդկություն» եռօրյան և այլն:

պարբերաբար քննադատում էին կառավարությանը և պահանջում նրա հրաժարականը: Մասնավորապես ՀԺԿ-ն նշում էր, որ հանրապետության դրությունը կառավարության գործունեության առաջին երեք ամիսների ընթացքում ամենևին չբարելավվեց, «անարխիան հետզհետէ սկսեց աւելի խորանալ, պարենաւորման գործը, գաղթականութեան հարցը բացիոնալ հիմունքների վրայ չդրվեցին, եւ ստեղծուեց մի քաօս»[1]: Բանը հասել էր այնտեղ, որ նույնիսկ դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչներն էին «անբավականութիւն արտայայտում» կառավարությունից: Իրավիճակը ճիշտ գնահատելով՝ ՀՀ խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում Հ. Քաջազնունու կառավարությունն ստիպված հրաժարական ներկայացրեց:

Խորհրդարանը դարձյալ Հ. Քաջազնունուն հանձնարարեց կազմել նոր կառավարություն: Քաղաքական ընդդիմությունից սոցիալ-դեմոկրատներն ու էսեռները կտրուկ հրաժարվեցին մաս կազմել նորաստեղծ կառավարությանը: ՀՅԴ-ն էլ առանձնապես «չէր փնտռում ձախ օպոզիցիայի գործակցութիւնը» և դրանով էր բացատրվում այն շտապողականությունը, որով ավարտվեցին բանակցությունները: Իսկ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո լավատես և ավելի ինքնավստահ դարձած ՀԺԿ-ն առանց երկմտելու և պատասխանատվությունից վախենալու անմիջապես ցանկություն հայտնեց մաս կազմել

[1] Տե՛ս «Ժողովուրդ», N 26, 1 նոյեմբերի 1918:

ստեղծվելիք կառավարությանը[1]: Մի քանի օր տևած բանակցություններից հետո կոալիցիոն սկզբունքով կազմվեց ինը նախարարություններից բաղկացած կառավարություն: Չորս պորտֆել (վարչապետի, արտաքին, ներքին գործերի և խնամատարության) ղեկավարումը տրվեցին ՀՅԴ-ին, չորսը (ֆինանսների, արդարադատության, լուսավորության և պարենավորման)՝ ՀԺԿ-ին և մեկը՝ զինվորականը, պետք է ղեկավարեր չեզոք անձնավորություն: Որոշվեց նաև, որ արտգործնախարարի օգնականը պետք է լինի Ժողովրդական կուսակցությունից:

Նկատենք, որ ՀԺԿ-ի շարքերում ֆինանսա-տնտեսական, վարչա-իրավական բնագավառների բարձրակարգ մասնագետներ ավելի շատ կային, քան մյուս կուսակցություններում: Ժողովրդականները, մտնելով կառավարություն, նպատակ ունեին կարգուկանոն հաստատել երկրում: Սակայն մի քանի ամիսների համատեղ աշխատանքը ցույց տվեց, որ երկրի իշխանությունը համախմբված և միասնական մարմին չդարձավ: Նախարարությունները, ըստ կուսակցական պատկանելության, գործում էին իրարից անջատ և չէին կիսում ընդհանուր պատասխանատվությունը: «Ոչ կառաւարութեան ներսը եւ ոչ էլ Հայաստանի Խորհրդարանում, - հիշում է Ա. Խոնդկարյանը, - չստեղուեց ոեւէ

[1] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 6 դեկտեմբերի 1918:

միութիւն դաշնակցականների ու ժողովրդականների միջեւ»[1]: Հատկապես մեծ հիասթափություն ապրեցին ժողովրդականները: Նրանք համոզվեցին, «որ սխալ է եղել իրենց այն կարծիքը, թէ գրաւելով մեծ թւու աթոռներ դահլիճում, ձեռք կը բերեն նաեւ մեծ ազդեցութիւն երկրի իշխանութեան մէջ»[2]: Նրանք հասկացան, որ քվեարկությունների ընթացքում «ձայները կշռւում են եւ ոչ թէ համրւում», որը Հայաստանի այն ժամանակվա պայմաններում միանգամայն համապատասխանում էր իրականությանը:

Ճգնաժամ էր հասունանում նաև խորհրդարանում, որը փաստորեն ոչ ընտրովի մարմին էր, այլ ստեղծվել էր կուսակցական սկզբունքով և իրապես չէր արտահայտում ժողովրդի հավաքական կամքը: Օրինակ՝ սոցդեմը և էսեռները թեև խորհրդարանում ունեին պատգամավորներ, սակայն ժողովրդի կողմից լայն աջակցություն չունեին: Որ Հայաստանի խորհրդարանում պատգամավորների քանակական հարաբերակցությունը չէր արտացոլում իրականությունը, ակնհայտ երևաց նաև 1918 թ. վերջերին տեղի ունեցած Երևանի քաղաքային դումայի ընտրություններից: ՀՀԴ-ն այդ ընտրություններում ստացավ երկու անգամ ավելի ձայն, քան մյուս կուսակցությունները

[1] Տե՛ս **Խոնդկարյան Ա.,** նշվ. աշխ., 1934, N 4, էջ 95:
[2] Տե՛ս նույն տեղում:

միասին վերցրած[1]: Այստեղ ձախերը (սոցդեմը և էսեռները) ստացան ընդամենը 4 տեղ[2]:

Ակնհայտ իրողություն էր, որ 1919 թ. գարնանը խորը հակասություն էր առաջացել ժողովրդի և խորհրդարանական պատգամավորների միջև: Այդ սուր հակասությունները բացասաբար էին անդրադառնում նրա աշխատանքների արդյունավետության վրա և խորհրդարանի արձակումը անհետաձգելի խնդիր էր դարձել: Այդ պատճառով 1919 թ. ապրիլի 27-ին խորհրդարանն ՀՀԴ-ի և ՀԺԿ-ի առաջարկած երեք կետից բաղկացած համատեղ օրինագծով օրենք ընդունեց՝ իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու, այդ ընթացքում խորհրդարանի իրավունքները կառավարությանը հանձնելու և խիստ անհրաժեշտության դեպքում խորհրդարանի արտակարգ նիստ գումարելու մասին[3]: Ինչպես վկայում է Ս. Վրացյանը, Հայաստանի խորհրդարանի այս արձակուրդով ըստ էության վերջ տրվեց նրա գործունեությանը[4]: Նրա գործառույթներն ամբողջովին յուրացրած կոալիցիոն կառավարությունը ապրիլի 27-ից մինչև մայիսի 27-ը ընդունեց ու հրապարակեց 99 օրենք[5]: Այդ

[1] Տե՛ս «Վեմ», Փարիզ, թիվ Ե., 1934, էջ 50:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 230, թ. 29:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86,, թ. 32: Տե՛ս նաև «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ. », մաս I, Ե. 1919, էջ 61:
[4] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետութիւն, Պեյրութ, 1958, էջ 253:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:

ամենով հանդերձ սակայն հնարավոր չեղավ հաղթահարել նաև խորհրդարանի ճգնաժամը:

Երկու կուսակցությունների միջև առկա տարաձայնությունները գագաթնակետին հասան, երբ 1919 թ. մայիսի 26-ին «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության» և մայիսի 27-ին՝ դրանից բխող դրա տրամաբանական շարունակությունը կազմող «Հայաստանի խորհրդի համալրման մասին» նախարարների խորհրդի ընդունած իրավական ակտերը 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը պաշտոնապես հրապարակվեցին: Դրանով կառավարությունը ձգտում էր այն բանին, որ Միացյալ Հայաստանը պետք է ունենար նաև միացյալ խորհրդարան: Այսինքն՝ խորհրդարանը պետք է համալրվեր արևմտահայ ներկայացուցիչներով:

Դեռևս 1919 թ. փետրվարի 6-13-ին տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարը[1] հայտարարել էր, որ նա Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում: Ակտի գերնպատակը՝ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ կառավարություն գաղափարի պետական քաղաքականության իրագործում էր

[1] Համագումարին մասնակցել են 55 պատգամավոր: Որոշվել է աջակցել ՀՀ կառավարությանը հասնելու Հայկական հարցի արդարացի լուծմանը և օգնել հայ գաղթականությանը ծանր վիճակից դուրս գալու և այլ կարևոր հարցեր:

նշանակում: Իսկ դրա համար անհրաժեշտ էր կազմել միացյալ Հայաստանի կառավարություն և միացյալ խորհրդարան[1]:

Ի դեպ, ինչպես իրավամբ նշում է Ա. Հակոբյանը, Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը նորություն չէր և այն առաջին անգամ առաջ էր քաշել Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը 1918 թ. նոյեմբերի 30-ին՝ հորդորելով դաշնակիցներին ստեղծել այդպիսի պետություն[2]: Պողոս Նուբարի և արևմտահայ գործիչների մեծ մասը մտավախություն ուներ, որ Ռուսաստանն ի վերջո կգրավի Հայաստանը[3]: Այդ պատճառով էլ ձգտում էին հասնել Արևմտյան Հայաստանի (հնարավորության դեպքում Կիլիկիայի հետ) անկախության հռչակմանը: Այդ դեպքում իրենց նպատակն էր նաև Պ. Նուբարի վարչապետությամբ կազմել ապագա կառավարությունը[4]:

Աշխարհամարտի ավարտից հետո ՀՀ իշխանությունները պաշտպանեցին Միացյալ Հայաստանի գաղափարը և ձեռնամուխ եղան դրա իրագործմանը: Այդ մասին արևելահայ պարբերական մամուլում առաջին անգամ գրեց ՀԺԿ Երևանի կոմիտեի պաշտոնաթերթ

[1] Տե՛ս **Վրացյան Ս.,** Բանակցութիւններ Ազգային պատվիրակութեան և ՀՀ միջեւ, Պոսթըն, 1920, էջ 6:

[2] Տե՛ս **Հակոբյան Ա.,** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Ե., 2005, էջ 162:

[3] Տե՛ս **Ճիզմեճեան Մ.,** Պատմութիւն ամերկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 397:

[4] Տե՛ս «Արձագանք», Եկատերինոդար, 10 հունվարի, 1919:

«Ժողովուրդը»[1] 1918 թ. դեկտեմբերի 8-ի համարում «Ազատ Հայաստան» վերնագրված հրապարակման մեջ. «Միացեալ և Ազատ Հայաստան՝ դա կլինի արմատական լուծումը Հայկական հարցի, դա կլինի ամենանպատակահարմարը թե' միջազգային խաղաղութեան և թե' հայ ժողովրդի շահերի տեսակետից»[2]:

Միացյալ և Ազատ Հայաստանի գաղափարը հրապարակավ հռչակեց ու պաշտպանեց նաև 1919 թ. փետրվար 6-13-ին Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարը, որը նաև Գործադիր մարմնին հանձնարարեց «գործնական քայլեր անել Արարատեան Հանրապետութեան կառավարութեան ու խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը հայտարարելու և մեկ համազգային միութիւն իրականացնելու համար»[3]: Համագումարը դիմեց ՀՀ վարչապետին և խորհրդարանին «օր առաջ հայտարարել Միացեալ, Ազատ Հայաստանի անկախութիւնը» և այդ ուղղությամբ գործնական քայլեր անելու հորդորով[4]:

[1] «Ժողովուրդ» թերթի մասին ավելի մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., Հայ Ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ» պաշտոնաթերթը, «Հայագիտության հարցեր», թիվ 3(15), էջ 29-54:

[2] Տե՛ս «Ժողովուրդ», 8 դեկտեմբերի 1918:

[3] Տե՛ս «Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի», Ե., 1919, էջ 13-14:

[4] Տե՛ս «Համառոտ տեղեկագիր…», էջ 17, Վրացեան Ս., Բանակցութիւններ ազգային պատվիրակութեան և ՀՀ միջեւ», Պոսթըն, 1920, էջ 4-5:

Համագումարի մյուս կարևոր հարցը խորհրդարանն արևմտահայ ներկայացուցիչներով համալրելն էր, որով կհաղթահարվեր այն սառնությունը, որ առաջացել էր հայության երկու հատվածների միջև արևմտահայությանը հանրապետությունում քաղաքական գործընթացներից դուրս մնալու հերևանքով: Վերջիններս գտնում էին, որ «ՀՀ կառավարութիւնը հավասար աչքով չի նայում ռուսահայ և տաճկահայ գաղթականութեանը»[1]:

1919 թ. մայիսի 22-ին նախարարների խորհրդի կողմից հաստատված օրենքով, որպես երկու Հայաստանների իրական միացման արտահայտություն, որոշվեց Հայաստանի խորհրդի կազմը համալրել արևմտահայերի 12 ներկայացուցիչներով: Ընտրվեցին խորհրդարանը համալրող 12 անդամներ, որոնք ՀՅԴ անդամներ էին կամ դրան հարողներ: Մինչդեռ հայտնի էր, որ գաղթականության մեջ զգալի կշիռ ու ազդեցություն ունեին ռամկավարները և անաչառ մոտեցման դեպքում այդ 12 անդամների թվում պետք է որ լինեին նաև ռամկավարներ: Բայց քանի որ նրանք որպես բողոքի նշան մինչ այդ հեռացել էին համագումարից և Արևմտահայ նորընտիր գործադիր մարմինը բաղկացած էր միայն դաշնակցականներից, ուստի ընտրվածներներն էլ նույն ՀՀԴ կուսակցությունից էին: Սակայն, ինչպես նշում է այդ հարցի խորագիտակ պատմաբան Ա. Հակոբյանը, «իրավական, էլ չենք ասում

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 144, թ. 2:

բարոյական տեսակետից պատշաճ չէր..., ավելին, ոչ մի կերպ չի կարելի արդարացնել կառավարության որոշումը 12 արևմտահայ ներկայացուցիչներ խորհրդարան ներգրավելու մասին»[1]: Ինքնըստինքյան 12 արևմտահայ ներկայացուցիչների խորհրդարան մուտքով ապահովում էր ՀՀԴ-ի կայուն մեծամասնությունը, որն էլ անհանգստություն ու վրդովմունք առաջ բերեց ընդդիմության շրջանում: Դրան մեծ աղմուկով դիմավորեցին թե «աջ» և թե «ձախ» կուսակցությունների ներկայացուցիչները:

1919 թ. հունիսի 4-ին խիստ լարված պայմաններում տեղի ունեցավ խորհրդարանի 12 պատգամավորներով համալրված առաջին նիստը: Նախապես պատրաստված հայտարարության տեքստով ամբիոնին մոտեցավ և վրդովված իր դժգոհությունն արտահայտեց սոցդեմ խմբակցության ներկայացուցիչ Գ. Ղարաջյանը: Այնուհետև ելույթ ունեցավ ՀԺԿ պատգամավոր Գ. Տեր-Խաչատրյանը: Վերջինս հայտարարեց, որ կառավարությունը անօրինական քայլ է կատարել, փաստորեն պետական հեղաշրջում, ուստի իրենք հրաժարվում են խորհրդի աշխատանքներին մասնակցելուց[2]: Ժողովրդական կուսակցությունը պնդելով, որ Մայիս 28-ի ակտը միակողմանի բնույթ է կրում, չունի Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի հավանությունը, չի բխում Հայկական հարցի միջազգային

[1] Տե՛ս **Հակոբյան Ա.,** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Ե., 2005, էջ 166:
[2] Տե՛ս ՀԱԱ ֆ. 393, ց. 2, գ. 118, թ. 1, «Ժողովուրդ», 6 հունիսի 1919 թ.:

իրավիճակից, չի համապատասխանում հայ ժողովրդի շահերին, ուստի չընդունեց այն և պահանջեց չեղյալ հայտարարել այդ ակտը: Դաշնակիցների տված կեղծ խոստումներից օրեցօր ավելի ինքնավստահ ու անզիջում դարձած ՀՀԴ-ական կառավարությունը մերժեց ընդունել այդ պահանջը: Հունիսի 24-ին ՀԺԿ-ական նախարարները կառավարության կազմից դուրս եկան և ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիան վերջ գտավ: ՀԺԿ-ն դարձավ արմատական ընդդիմություն և շրջադարձ կատարեց ի նպաստ հայ ռամկավարների հետ մերձենալու գործընթացի:

Ընդդիմադիր կեցվածք որդեգրած ՀԺԿ-ն բոյկոտեց նաև 1919 թ. ամռան խորհրդարանական ընտրությունները, դրանց նախօրյակին՝ հունիսի 20-ին հանելով իր պատգամավորական թեկնածուների ցանկը: ՀՅԴ-ի և ՀԺԿ-ի միջև հարաբերություններն այն աստիճանի լարվեցին, որ կառավարախորհրդական ճգնաժամը հնարավոր չեղավ հաղթահարել: ՀԺԿ-ն թեև խորհրդարանական ընտրությունները բոյկոտելուց հետո այլևս գործուն մասնակցություն չունեցավ ՀՀ պետական կյանքին, սակայն շարունակում էր մնալ ՀՅԴ-ից հետո ՀՀ և կովկասահայ երկրորդ ազդեցիկ ուժը: Ժողովրդականները մեծ թվով ներկայացուցիչներ ունեին տեղական ինքնակառավարման մարմիններում և ազդեցիկ ընդդիմություն էին: Ճիշտ է, խորհրդարանական ընտրություններից հետո ՀԺԿ-ն պահանջեց անվավեր համարել հունիսյան քվեարկության

արդյունքները և նշանակել նոր ընտրություններ, բայց այս բողոքն ընդամենը ինքնահանգստացման միջոց էր և որևէ գործնական նշանակություն այլևս ունենալ չէր կարող:

1919 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ ՀԺԿ II համագումարը: Երկրում ստեղծված իրավիճակին համահունչ այն ընդունեց նոր ծրագիր: Հիմնականում հավատարիմ մնալով առաջին ծրագրի հիմնադրույթներին, այս ծրագրով Կուսակցությունը ձգտում էր ստեղծել ծովային ելքով «միասնական Հայաստան», որտեղ պետք է հաստատվեր պառլամենտական հանրապետություն, որի պետական պաշտոնական լեզուն պետք է լիներ հայերենը[1]: Արտասահմանում գտնվող հայերի համար այս ծրագիրը նույնպես պահանջում էր ազգային մշակութային ինքնավարություն[2]: ՀԺԿ-ն նախագահական ինստիտուտի անհրաժեշտությունն ընդունելով հանդերձ, առաջնությունը տալիս էր խորհրդարանին:

Հետագա քաղաքական իրադարձությունների արդյունքում Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, որից հետո ՀԺԿ-ն ևս տարագրվեց և շուտով միացավ նորաստեղծ ՌԱԿ-ին:

Сурен Саргсян, Деятелность Армянской народной партии в Республике Армени 1918 – 1920гг. - В законодательной

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

власти основанной 28-го мая 1918 г. Республики Армения – Совете Армении, кроме АРФ Дашнакцутюун, действовали четыре оппозиционные партии, имевшие также парламентские фракции. Армянская народная партия и партия Социалистов-революционеров. Исходя из тяжелого положения армянского народа, оппозиция, критикуя власти, вместе с тем в основном проявила сдержанное, конструктивное отношение. Сильнейшей среди оппозиционеров была Армянская народная партия, которая обладала серьезными финансовыми ресурсами и располагала толковыми и сведущими кадрами. Она критиковала ошибки, допущенные властями, и одновременно проявила подчеркнуто толерантный подход к проводимой ими политике. Не избегая ответственности, АНП четырьмя министерскими портфелями вошла в состав коалиционного правительства, созданного 4-го ноября 1918 г. В обшей сложности, как власти, так и оппозиция в первой Республике Армения в основном проявляли глубокое понимание идеи государственности. Считая государство высочайшей национальной ценностью, каждый по своим представлениям пытался способствовать его дальнейшему усилению.

Suren Sargsyan, The activity of the Armenian National Party in the Republic of Armenia 1918 – 1920 - In the legislative power of the Armenian Republic restored on May 28, 1918 besides ARF presented in the parliament of Armenia there were

four opposition parties wich had their parlamentary factions. There were the Peoples Party of Armenia, the Social-Democratic and Social-Revoutionary. Because of the hard economic and political sitiation created for the Armenian people the oppozition alongside with the criticizm of the power had to mainly express composed and constructive attitude. The most powerful one of the oppozition parties was the Peplis Party of Armenia which had serious finansical resourses and cliver and adaptmembers: it was criticizing the mistakes committed by the power and at the same time expressed strogly tolarent attitudes towards its oilicies. By taking the responsibility the PPA party alongside with its four ministerial portfolios beame the part of the coalition government created on Nevember 4, 1918. In general both the powers of the First Armenian Republic and the opposition mainly exspressed feep perception of the idea of statehood> By considering the state as national high value each of them in their own way contributed to its further enhancement.

ՀՀ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1990-2001ԹԹ.)

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆ

Բանալի բառեր - Հայաստանի Հանրապետություն, Կուսակցություններ, Հասարակական Քաղաքական կազմակերպություններ:

Քաղաքական կուսակցությունները կարելի է համարել մարդկային քաղաքակրթության կարևորագույն նվաճումներից և ժամանակակից հասարակական-քաղաքական կյանքի անհրաժեշտ, անբաժանելի ինստիտուտներից և ձեռքբերումներից մեկը:

Հասարակության կառավարման ժողովրդավարական համակարգը սերտորեն կապված է քաղաքական կուսակցությունների, աշխարհում տեղի ունեցող քաղաքական նոր գործընթացների, նոր փոփոխությունների հետ: Հետևաբար նորանկախ ՀՀ քաղաքական կյանքի անժխտելի ձեռքբերումներից մեկը շատ անկատարություններով, թերություններով հանդերձ, ամբողջական, միակուսակցական համակարգից

ժողովրդավարության և բազմակուսակցականության անցումն էր[1] :

Կենսագործելով անկախության հռչակագրում արձանագրված նպատակային դրույթները՝ Հայաստանի Գերագույն խորհուրդը 1991թ. փետրվարի 26-ին ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»[2] օրենք: Այս օրենքով Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում իրավաբանորեն ամրագրվեց բազմակուսակցականության սկզբունքը և հանրապետության քաղաքացիների կողմից կամավորության սկզբունքով ազատորեն հասարակական կազմակերպություններ հիմնելու իրավունքը:[3] Սա նոր երևույթ էր, նոր ժամանակաշրջան մեր ժողովրդի համար: Երկարամյա ընդմիջումից հետո հայրենիքում վերստին ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Ռամկավար-ազատական և Հնչակյան կուսակցությունները:[4]

[1] Տե՛ս **Հ. Աբրահամյան,** Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, էջ 53:

[2] Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.) Երևան, 1995, էջ 115-118:

[3] Տե՛ս **Է. Վ. Պողոսյան,** Անկախ պետռականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երևան, 2013, էջ 282:

[4] Տե՛ս **Է. Մինասյան,** Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 258:

Աստիճանաբար հանրապետությունում առաջացան նոր կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ՝ Ազգային Ինքնորոշում Միավորում (ԱԻՄ), Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ), Ազգային Ժողովրդավարական միություն (ԱԺՄ), Հայաստանի Քրիստոնեադեմոկրատական միություն (ՀՔԴՄ), Սահմանադրական Իրավունք Միություն (ՍԻՄ), Հայաստանի Դեմոկրատական Կուսակցություն (ՀԴԿ) և այլն[1]: Շարունակում էր գործել իշխանությունից զրկված Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը չուներ նախկին միասնությունը և խոր ճգնաժամ էր ապրում ներքին երկպառակությունների պատճառով: Ավելի ուշ հիմնվեցին Հայաստանի Սոցիալիստական Կուսակցությունը (ՀՍԿ), Հայաստանի Սոցիալիստական ուժերի միությունը (ՀՍՈՒՄ), Հզոր Հայրենիք (ՀՀ), Միավորված Աշխատանքային Կուսակցություն (ՄԱԿ), Հայաստանի Ժողովրդավարական Կուսակցությունը (ՀԺԿ), «Օրինաց Երկիր» (ՕԵԿ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ), «Ժառանգություն» կուսակցությունները և այլն:[2] Կուսակցությունների թիվը հետագա տարիներին էլ ավելի աճեց՝ հասնելով մի քանի տասնյակի:

[1] Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, տեղեկագիր 2007, Երևան, 2007, էջ 20, 30, 45, 174:

[2] Տե՛ս **Է. Մինասյան,** նշվ. աշխ., էջ 259:

ՀՀ Ազգային ժողովը 1996թ. նոյեմբերի 1-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հասարակական կազմակերպությունների մասին»[1]: Այս օրենքում, որը բաղկացած էր 8 գլուխներից, ընդգծվեց հասարակական կազմակերպությունների կարևոր դերը Հայաստանում քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործում, շարադրվեց դրանց գործունեության հիմնական սկզբունքները :[2]

Օրենքը նպաստեց հայ հասարակության մեջ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքական կուսակցությունների և տարբեր տիպի հասարակական կազմակերպությունների ձևավորմանը: Այսպես, եթե 1991թ. ՀՀ ում գործում էին հասարակական-քաղաքական 226 միավորումներ ,1993թ. ամռանը հանրապետությունում պաշտոնապես գրանցված էին 32 կուսակցություններ և հասարակական-քաղաքական միավորումներ, 431 հասարակական կազմակերպություններ,[3] ապա 1998թ. Հայաստանի Հանրապետությունում գրանցվել և գործում էին արդեն 70 կուսակցություններ ու հասարակական-քաղաքական միավորումներ, ինչպես նաև

[1] Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի տեղեկագիր, N 21-22 (1121-1122), նոյեմբեր 1996, էջ 4-12:

[2] Տե՛ս **Է. Մինասյան**, նշվ. աշխ., էջ 260:

[3] Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի տեղեկագիր, N 21-22 (1121-1122), նոյեմբեր 1996, էջ 4-12:

տարբեր բնագավառների 2579 հասարակական կազմակերպություններ:[1]

Այսպես, ՀՀ առաջին գումարման Գերագույն Խորհրդում ներկայացված 12 կուսակցություններն ու խմբակցությունները խորհրդարանի գործունեության ընթացքում ձևավորել էին երկու հիմնական քաղաքական թև: Մեկը՝ այսպես կոչված աջ ուղղությունը ղեկավարում էր ՀՀՇ-ն: Այն ընդգրկում էր լիբերալ դեմոկրատական և ազատ շուկայական կողմնորոշմամբ կուսակցությունները: Մյուս թևում ընդգրկված էին ընդիմադիր՝ սոցիալ-դեմոկրատական կողմնորոշմամբ կուսակցություններ, որոնք իրենց անվանում էին Ազգային Դաշինք:[2] Ազգային Դաշինքն ուներ իր պատգամավորական խմբակցությունը Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդում և տեղական խորհուրդներում: Ազգային Դաշինքի անդամ կուսակցություններն էին՝ ԱԺՄ, ԱԻՄ, ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն, Հայաստանի ՌԱԿ-ը, ՍԻՄ, ՔԺՄ:[3] Ազգային Դաշինքը հոկտեմբերի 5-ին վերանվանվեց Ազգային Համաձայնության Դաշինք: Վերջինիս մեջ մտնում էին ԱԺՄ-ն, ՀԴԿ-ն, ՀՅԴ-ն, ՍԻՄ-ը և ԱԻՄ-ը:[4]

[1] Հայաստանի Հանրապետություն, 17 հունիսի, 1993թ.:
[2] Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001:
[3] Հայաստան, Մարդկային զարգացման զեկույց 1995, Երևան, 1995, էջ 40-41:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1679, ց. 2, գ. 2, թ. 12:

ՀՀ առաջին գումարման Գերագույն Խորհրդի գործունեության ողջ ընթացքում խորհրդարանում գործել են 12 պատգամավորական խումբ և 5 կուսակցական խմբակցություն, այդ թվում «Արցախ», «Ազգային ժողովրդավարներ», «Ազատ խորհրդարանականներ», «Ազգային առաջադիմություն», «Լիբերալ դեմոկրատներ», «Հայ հեղափոխական դաշնակցություն» և այլ պատգամավորական խմբեր, «Հայոց համազգային շարժում», «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» և այլ կուսակցական խմբակցություններ :[1]

Նորանկախ Հայաստանում քննարկվող ժամանակահատվածի բազմակուսակցականության պատմությունը կարելի է բաժանել երկու փուլերի: Առաջին փուլը այն ժամանակահատվածն էր (1990-1994թթ.), երբ Հայաստանը նոր էր անկախացել և իսկապես խնդիր էր դրված ժողովրդավարացման հաստատումը և զարգացումը, պետականության կայացումը :[2]

Հաջորդ փուլը կարելի է համարել 1994թ. վերջերից մինչև 1998թ. նախագահական արտահերթ ընտրությունները: գալով իշխանության ՀՀՇ-ի ղեկավարությունը մոռացության տվեց ազգի շահերը, չկարողացավ, չցանկացավ միավորել ազգային քաղաքական ուժերին: ՀՀՇ-ի ղեկավարները հանդիպելով այլ քաղաքական ուժերի ընդդիմությանը,

[1] Անկախություն, թիվ 41 (367), 20, 27 հոկտեմբերի, 1994թ.:
[2] Նույն տեղում, 4 հուլիսի, 1995թ.:

գնացին նոր ամբողջատիրական համակարգի ձևավորման ճանապարհով: Սա նշանակում էր, որ նախկին միակուսակցական համակարգը փոխարինվում էր մեկ այլ միակուսակցական՝ ՀՀՇ-ական, համակարգով :[1]

Դեռևս 1991 թվականից իշխանությունները սադրանքներ և բռնություններ իրականացրեցին ՀՅԴ նկատմամբ:[2] Ինչպես նշվել է նախորդ գլխում ՀՀՇ իշխանությունների կողմից ՀՅԴ նկատմամբ հալածանքներն իրենց գագաթնակետին հասան 1994թ., երբ Լ. Տեր-Պետրոսյանի՝ նույն թվի դեկտեմբերի 28-ի, հրամանագրով Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես դադարեցվեց «Հայ հեղափոխական դաշնակցութուն» հասարակական - քաղաքական կազմակերպության գործունեությունը :[3]

Բնականաբար ճնշումները և սպառնալիքները միայն ՀՅԴ-ով չսահմանափակվեցին, այն ուղղվեց մյուս բոլոր իրապես գործող ընդդիմադիր կուսակցությունների դեմ ևս:[4]

ՀՀՇ իշխանավորները մեծ հաջողությամբ կիրառում էին ճնշման այլ եղանակներ, ինչպես օրինակ անցանկալի կուսակցություններին և հասարակական-քաղաքական հաստատություններին պետական ֆինանսական օգնության մերժումն էր, դրանց տպագիր օրգանների նկատմամբ

[1] Տե՛ս **Է. Վ. Պողոսյան,** նշվ.աշխ., էջ 288:
[2] ՀԱԱ, ֆ. 1679, ց. 2, գ. 2, թ. 2-3:
[3] Հայաստանի Հանրապետություն, 19 ապրիլի, 1991թ.:
[4] Տե՛ս **Է. Վ. Պողոսյան,** նշվ.աշխ., էջ 291:

անհիմն ֆինանսական հարկադրանքի կիրառումը, ընդիմադիր կուսակցությունների անդամների նկատմամբ խտրականություն պետական ծառայության բնագավառում և այլն:[1]

Նման պայմաններում ժողովուրդը հիասթափություն ապրեց իր երեկվա հերոսից: Եվ պատահական չէ, որ ժողովուրդը ուժ տալով շարժմանը և բերելով իշխանության, նաև մերժեց այն, ինչի ապացույցն է 1999թ. մայիսի 30-ի Ազգային ժողովի ընտրությունը, երբ ՀՀՇ-ին հասավ ձայների ընդամենը 1,17 տոկոսը՝ ԱԺ-ում ունենալով ընդամենը մեկ պատգամավոր: Սակայն, բոլոր դեպքերում ՀՀՇ-ի իշխանության գալը արմատապես փոխեց հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: Քայլեր կատարվեցին բազմակուսակցական համակարգի ձևավորման ուղղությամբ: Միայն 1991թ. հանրապետությունում գրանցվել և իրենց գործունեությունն էին սկսել 22 կուսակցություններ[2]:

1991-1995թթ. ընդհանուր առմամբ գրանցվել են 50 կուսակցություններ (1992թ.՝ 8 կուսակցություն, 1993թ.՝ 4, 1994թ.՝ 11, 1995թ. 7):[3]

Ժողովրդավարության կարևորագույն տարրերից են նաև Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները

[1] Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1998, Պետության դերը, Երևան, 1998, էջ 29:

[2] Տե՛ս **Հ. Աբրահամյան,** նշվ. աշխ., էջ 62:

[3] Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 46:

(ՔՀԿ): Քաղաքական կուսակցություններից տարբեր խնդիրներ և նպատակ ունենալով, դրանք միավորում են մարդկանց շահագրգիռ խմբերի: Վերջին տասը տարում դրանք աննախադեպ աճ են ապրել: ՔՀԿ-ները փորձում են իրենց առջև ծառացած խնդիրները լուծել կամ ուղղակիորեն ազդելով քաղաքական մարմինների և պաշտոնատար անձանց վրա, կամ էլ անուղղակի ազդեցությամբ՝ հասարակական կարծիքի, կուսակցությունների և առանձին անհատների միջոցով: Ներկայումս ՀՀ ում գրեթե բոլոր շահագրգիռ խմբերը (այդ թվում նաև արհմիությունները) գրանցվում են որպես հասարակական կազմակերպություն (ՀԿ), քանի որ այդ ոլորտում գործում է միայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գործող ՀԿ-ները ավելի շատ հետաքրքրված են սոցիալական ծառայությունների մատուցմամբ և խոցելի խմբերի օգնությամբ: Այսպես, 1991-1993թթ. ընթացքում Հայաստանում գրանցվել է 505, 1994-1996թթ.՝ 568, 1997թ.՝ 359, 1998թ.՝ 400, 1999թ.՝ 286, 2000թ.՝287, 2001թ. մինչև հուլիսի 1-ը՝ 174 ՀԿ-ներ:[1]

1994թ. իր հիմնադրումից ի վեր ԱՀՀ (Ամերիկայի Հայկական Համագումար) Հասարակական կազմակերպությունների վերապատրաստման և տեղեկատվության կենտրոնը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 47-48:

կառավարության կողմից, իր ուշադրությունը սևեռել է առանձին ՀԿ-ների ունակությունները ամրապնդելու վրա: Երկխոսության և միասնական գործողությունների միջոցով ՀԿ-ները խորացրել են խնդիրների իրենց ընկալումը, կազմել են դաշինքներ, համաձայնության են հասել անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ և համատեղել ուժերը՝ խնդիրներն ավելի արդյունավետ լուծելու նպատակով:[1]

1991թ. փետրվարի 26-ին ընդունված Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքը պարարտ հող ստեղծեց ՍԴՀԿ-յան համար: Տեղի ունեցավ այսպես կոչված կուսակցության «ներգաղթ»[2]: 1991թ. պաշտոնական գրանցում ստանալուց հետո՝ Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը ձեռնամուխ եղավ ակտիվորեն մասնակցելու նորանկախ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին[3]: 2003թ. հունիսի 11-ին Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը ստացավ պետական վերագրանցում: Գործադիր մարմնի ղեկավարն էր Էռնեստ Սողոմոնյանը:[4]

Արդեն նշված, 1991թ. փետրվարի 26-ին ընդունված, օրենքից օգտվելով՝ իր պաշտոնական ներկայությունը Հայաստանում հռչակել էր նաև Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը:

[1] Տե՛ս Հայաստան, Մարդկային զարգացման զեկույց 1996, Երևան, 1996, էջ 21:
[2] Հայաստանի Հանրապետություն, 15 դեկտեմբերի, 1990թ.:
[3] Տե՛ս Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 63:
[4] Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունները, տեղեկագիր, Երևան, 2005, էջ 100:

1990թ. օգոստոսի 8-ին Հ.Յ. Դաշնակցությունը պաշտոնապես բացահայտեց կազմակերպական իր ներկայությունը Հայաստանում:[1]

1991թ. հուլիսի 2-ին ին Հ.Յ. Դաշնակցությունը Հայաստանում գրանցվեց որպես պաշտոնական կուսակցություն՝ 38,1 որոշմամբ:[2]

Հատկանշական է, որ մինչև Դաշնակցության Հայաստան գալը ՀՀ ում այդ օրերին ձևավորվել էր «Հայաստանի Հայ Հեղափոխական Դաշնակցություն» մի նոր կուսակցություն[3] : Իրենք շարքերում ունեին ավելի քան 20 հազար անդամներ, կանոնադրություն, «Դաշնակցություն» թերթը և այլն: Այդ նպատակով կուսակցությունը 1990թ. հոկտեմբերի 10-ին հրավիրել էր հիմնադիր ժողով, որտեղ քննարկել էին ՀՀ-ում ստեղծված իրավիճակը, Սփյուռքում գործող դաշնակցության բյուրոյի հետ հարաբերությունները և նկատի ունենալով, որ Սփյուռքի Հայ Հեղափոխական Դաշնակցության Բյուրոն, տասնամյակներ շարունակ կտրված լինելով հայրենիքից, չի կարող աջակցություն ցույց տալ Հայաստանի ներկա իրավիճակի գործընթացների

[1] Պատմագրություն Հ.Յ. Դաշնակցության, Դ հատոր, Երևան, 1995, էջ 419-420:
[2] Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունները, «Դեմոկրատիա միություն», Երևան, 1990, էջ 16:
[3] Նույն տեղում, էջ 17-18:

վրա, ուստի Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ունենալ գործող ազգային կուսակցություն[1] :

Նման որոշումն, իհարկե, ստեղծեց բավականին բարդ, լարված իրավիճակ և հարաբերություններ Հայաստանի Հայ Հեղափախական Դաշնակցության և Սփյուռքից կրկին Հայաստան վերադարձած ավանդական Հ.Յ. Դ միջև: Ի վերջո, այդ հակամարտությունը լուծվեց նրանով, որ Հայաստանում ձևավորված նոր կուսակցությունը դադարեց գործելուց և քաղաքական ասպարեզը զիջեց ավանդական ՀՅԴ[2]: Սակայն 1991թ. սկսած իշխող քաղաքական ուժը բացահայտ հալածանքներ սկսեց Հ.Յ.Դ նկատմամբ:

ՀՀ նախագահը 1992թ. հունիսի 29-ին հրամանագիր արձակեց ՀՅԴ Աթենքի բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանին Հայաստանից արտաքսելու մասին[3]: Իշխանավորների հրապարակային ելույթներում, պաշտոնական մամուլի հրապարակումներում ՀՅԴ-ն մեղադրվում էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի և օտարերկրյա գործակալությունների հետ հայադավ կապերի մեջ: Կուսակցությանը մեղադրանքներ էին ներկայացվում դավադիր հակվածությունների, իշխանատենչության մեջ և այլն[4]:

[1] Տե՛ս **Հ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 63-64:
[2] Նույն տեղում, էջ 65:
[3] Հայաստանի Հանրապետություն, 2 հուլիսի, 1992թ.:
[4] Հայաստանի Հանրապետություն, 4 հուլիսի, 1992թ.:

ՀՀՇ իշխանությունների կողմից ՀՅԴ նկատմամբ տևական հալածանքների հաջորդ քայլը եղավ Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1994թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը «Հայ Հեղափոխական Դաշնակցություն հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին»[1], որով էլ ավելի քան երեք տարի կասեցվեց Դաշնակցության պաշտոնական ներկայությունը Հայաստանում:

1995թ. Խորհրդարանական ընտրությունները, որոնք պետք է ապահովեին Հանարապետությունում քաղաքական ուժերի դասավորության իրական արտացոլումը խորհրդարանում, ինչպես տեղական, այնպես էլ աշխարհի 18 երկրներից ժամանած դիտորդների մեծամասնության համոզմամբ անցան օրենքի աննախադեպ խախտումների, անարդարության և բռնությունների մթնոլորտում: Եվ ինչպես սպասվում էր, իշխանությունների կողմից ուղղորդվող Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը ՀՅԴ-ին պարզապես զրկեց համամասնական կարգով ընտրություններին մասնակցելու իրավունքից[2]: ՀՅԴ-ն 1995թ. ուներ, մեծամասնական ընտրակարգով առաջադրված, մեկ թեկնածու Խորհրդարանում[3]:

[1] ՀՀ ԳԽ տեղեկագիր, N 23-24(1075-1076), դեկտեմբեր 1994թ., էջ 10-11:
[2] Տե՛ս **Է. Վ. Պողոսյան,** նշվ.աշխ., էջ 290:
[3] ՀՀ քաղաքական կուսակցություններ, Երևան, 2005, էջ 67:

1995թ. սկզբից Դաշնակցություն կուսակցությանը վարկաբեկելու նպատակով պաշտոնական ՋԼՄ-ներում սկսեցին հիմնականում ամբողջական նյութից կտրված փաստաթղթերի պատճենների հրապարակումներ ՀՅԴ այսպես կոչված «Դրո» կազմակերպության վերաբերյալ[1] : 1995թ. մայիսի 18-ին ՀՀ նախագահը խորհրդարանում ունեցած իր ելույթով որակելով հայ ավանդական կուսակցությանն ասաց. «ՀՅԴ-ն քաղաքական կուսակցություն չէ, այլ տեռորիստական ֆաշիստական կազմակերպություն»: Այս ամենից հետո՝ 1995թ. հուլիսի 7-ին, ՀՀ Գերագույն դատարանում սկսվեց այսպես կոչված «Դրոյի» գործով դատավարությունը[2] :Շուրջ մեկուկես տարի տևած այդ քաղաքական դատավարությունն ավարտվեց 1996թ. դեկտեմբերի սկզբին, իշխանությունների կողմից կանխավ մշակված արդյունքով՝ «Դրոն» որակվեց որպես Դաշնակցության կառույցում գործող դրսից կառավարվող ահաբեկչական կազմակերպություն, իսկ նրա անդամներին վերագրեցին սպանություններ և այլ հանցագործություններ: Նման կերպ ընթացավ նաև ՀՅԴ 30 այլ անդամների դատական գործը, որոնք դատարանի դատավճռով մեղադրվեցին ՀՀ պետական կարգը ուժով տապալելու նպատակադրումներ ունենալու մեջ և այլն: Այս ամենը հանգեցրեց նրան, որ երկրում և սփյուռքում բացառիկ

[1] Հայաստանի Հանրապետություն, 12 հունվարի, 1995թ.:
[2] Տե՛ս նույն տեղում, 8 հուլիսի, 1995թ.:

համբավ վայելող ՀՅԴ-ի արգելումն ու վարկաբեկումը պառակտում մտցրեց հայ հասարակության մեջ[1]:

1996թ. Հայաստանի Հանրապետության հերթական նախագահական ընտրություններից հետո իրավիճակն այնպես սրվեց, որ այն հանգեցրեց 1998թ. փետրվարի 3-ին Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին:

1998թ. մարտի 30-ին տեղի ունեցան նախագահական արտահերթ ընտրություններ, հաղթեց Ռոբերտ Քոչարյանը[2]: Նրա կարևորագույն քայլերից էր նույն թվականի մայիսին ՀՅԴ պաշտոնական կարգավիճակի վերականգնման մասին հրամանագրի ընդունումը և քաղ-բանտարկյալների ազատ արձակումը[3]:

1999թ. ՀՅԴ Խորհրդարանում ուներ 2 տեղ[4]: Իսկ 2003թ. արդեն իր մասնակցությունն էր բերում նաև քաղաքական կոալիցիային՝ մասնակցելով երկրի առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմանը՝ կոալիցիոն կառավարության կազմում:

Ռամկավար Ազատական Կուսակցությունն իր պաշտոնական ներկայությունը Հայաստանում հաստատեց

[1] **Է. Վ. Պողոսյան,** նշվ.աշխ., էջ 291:

[2] Հայաստանի Հանրապետություն, 7 ապրիլի, 1998թ.:

[3] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 10(43), 15 մայիսի 1998թ., էջ 22:

[4] Տե՛ս **Տ. Թորոսյան,** հասարակական համակարգի տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 151:

1991թ. հուլիսի 4-ի գրանցումով[1]: Այն ստացավ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցություն անվանումը[2] :

Ռամկավար Ազատական կուսակցությունն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ 1991թ. հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրություններին՝ առաջադրելով և պաշտպանելով Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը: ՀՌԱԿ-ը գտնում էր, որ ասպարեզում եղած քաղաքական գործիչներից Լևոն Տեր-Պետրոսյանն ամենաարժանավորն էր հանրապետության ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար[3]:

ՀՌԱԿ-ը ակտիվորեն մասնակցեց նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման աշխատանքներին, ներկայացրեց իր տարբերակը: Իսկ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրության հանրաքվեի և Խորհրդարանական ընտրություններից հետո ՀՌԱԿ-ը Ազգային ժողովում ուներ մեկ պատգամավոր:

Հայաստանի ներկայիս քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ հնարավոր չէ կուսակցությունները հստակ դասակարգել հաաղթող և պարտվող, իշխող և ընդդիմադիր թևերի: Հետաքրքիր է այս առումով ԵԱՀԿ դիտորդական առաքելության կարծիքը 1999թ. ընտրարշավին մասնակցած կուսակցությունների

[1] ՀՀ քաղաքական կուսակցություններ, տեղեկագիր, Երևան, 2005, էջ 99:
[2] www. armeniangenocide.am
[3] Տե՛ս **Ռ. Միրզախանյան**, Հանգրվան, հոդվածներ, ելույթներ, հարցազրույցներ, Երևան, 2001, էջ 25-26:

մասին. «Շատ դեպքերում քաղաքական կուսակցությունների քաղաքական ծրագրերը էապես չէին տարբերվում, ինչն անհնար էր դարձնում բաժանարար գծի անցկացումը ընդդիմության և կառավարամետ կուսակցությունների միջև: Շատ դեպքերում պարզվում էր, որ հասարակության վստահությունը մասնավոր կուսակցության նկատմամբ պայմանավորված էր նրա ղեկավարների հանդեպ առկա անձնական վստահությամբ[1]»:

Քաղաքական կուսակցությունների խոչընդոտող հիմնական պատճառներից մեկն էլ այն է,երբ իշխանության օղակներում որոշ քաղաքական գործիչներ, ժամանակի զարգացումներին հետևելով՝ իրենց անկախ կամ անկուսակցական են հռչակում, կամ քաղաքական դասավորության փոփոխության դեպքում, հաջողությամբ մի բանակից մյուսն են անցնում:

Մյուս խոչընդոտն այն է, որ դեռևս չի ձևավորվել ներկուսակցական հանդուրժողության մթնոլորտը. ցանկացած հակասության դեպքում փոքրամասնությունը կա՛մ դուրս է գալիս, կա՛մ հեռացվում է՝ ստեղծելով նոր կուսակցություն[2]:

Այսպիսով, հասարակական - քաղաքական կազմակերպությունները, զարկ տալով հանրային ակտիվությանը, Հայաստանին օգնեցին դառնալ և

[1] Տե՛ս նույն տեղում:

[2]Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 47:

զարգանալ, որպես ժողովրդավարական երկիր: Քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները կարևոր դեր խաղացին Հայաստանի երրորդ հանրապետության քաղաքացիական հասարակության ձևաորման և քաղաքական դաշտի կայացման գործում, ինչպես նաև երկրում ժողովրդավարության բազմակարծության, հասարակության տարբեր շերտերի ինքնադրսեվորման և քաղաքական մտքի զարգացման համար: Հարկ է նշել, որ հասարակական քաղաքական կազմակերպությունները մեծ զարկ տվեցին հանրաին կյանքի ակտիվությանը: Սակայն երկրում ստեղծված անառողջ քաղաքական մթնոլորտը, մասնավորապես օրվա իշխանությունների կողմից կատարվող կամայականությունները խաթարեցին հասարակական քաղաքական կազմակերպությունների բնականոն ընթացքը: Իշխանությունների կողմից ՀՅԴ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնել, ինչպես նաև 1996թ.-ի ընտրությունները կեղծելը երկրում առաջ բերեց հասարակական քաղաքական ճգնաժամ,որը շարունակվեց մինչև 1998թ.-ի նախագահական ընտրությունները: Այսպիսով չնայած քաղաքական վայրիվերումներին և արհեստական խոչնդոտներին հասարակական և քաղաքական կազմակերպությունները դրական դեր և ազդեցություն ունեցան և հիմքը գցեցին Հայաստանի երրորդ հանրապետության քաղաքական և

հասարակական կյանքի զարգացման և կայացման գործում:

Вардуи Симонян, Деятельность общественных организаций и партий РА (1990-2001 гг.) - Политические партии и неправительственные организации сыграли важную роль в формировании гражданского общества в Третьей Республике Армения и развитии политического поля, а также плюрализма демократии в стране, развитии различных слоев общества и развитии политической мысли. Следует отметить, что общественно-политические организации оказали большое влияние на деятельность общественности. Однако нездоровый политический климат в стране, особенно произвол властей того времени, подорвал нормальный ход общественных политических организаций. Временное приостановление деятельности АРФ со стороны властей, а также фальсификация выборов в 1996 году привели к общественно-политическому кризису, который продолжался до президентских выборов 1998 года. Таким образом, несмотря на политические потрясения и искусственные препятствия, общественно-политические организации сыграли положительную роль и оказали влияние и заложили основы для развития и становления политической и социальной жизни Третьей Республики Армения.

Varduhi Simonyan, The Activity of non-governmentalorganizations and Political Parties of the RA (years 1990-2001) - The political parties and non-governmental organizations have played a major role in shaping the civil society in the Trinity National Republic of Armenia and the development of political poles, as well as pluralistic democracy in the country, the development of society and the development of the politics. It is noteworthy to say that public-political organizations have the greatest virtue of publicity. The unhealthy political climate in the country, especially in terms of the prolonged period of time, has undermined the normal public relations of political organizations. The 1996 upswing of the Social-Democratic Crisis, which lasted until 1998, was followed by a 1998 FFS election pledge.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՅԼԱԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Այլադավանություն, Քրիստոնեություն, կրոն, հեթանոսություն, գաղափարախոսություն, մծղնեականներ, պավլիկյան շարժում, թոնդրակյան շարժում, Հայ Առաքելական եկեղեցի, միաբնակություն, երկբնակություն, Հիսուս Քրիստոս, անվտանգություն, պատմություն:

301թ. քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո այն միանգամից իշխող չդարձավ հայոց մեջ, որովհետև հայ ժողովուրդը դարեր շարունակ ունեցել էր իր արժեքային համակարգը, որը փոխելը ոչ թե տարվա, այլ թերևս տասնամյակների խնդիր էլ չէր: Ուրեմն՝ անհրաժեշտ էր երկարատև աշխատանք՝ նոր գաղափարախոսության հենքով հին աստվածներին մոռացության տալու և նորին հիմնավորելու հրամայականով: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քրիստոնեության՝ հայոց ազգային կրոն դարձնելու ճանապարհին որդեգրված մի խելացի և արդյունավետ գործելաոճի վրա, այն է՝ քրիստոնեությունը հիմնավորել ազգային-հեթանոսական այն արժեքների միաձուլումով

քրիստոնեական գաղափարախոսությանը, որոնք դժվար էր թեկուզ բռնությամբ հանել հայոց հավատի ակունքներից: Այս առումով առաջին քայլերը կատարվեցին Աշտիշատի եկեղեցական ժողովում, որը 354թ. գումարվեց Ներսես Մեծի նախաձեռնությամբ: Այս ժողովում էր, որ սրբագործվեցին հեթանոսական շատ սովորույթներ և տոնակատարություններ՝ փոխելով իրենց ձևն ու բովանդակությունը՝ չշեղվելով քրիստոնեության գաղափարական հիմքերից: Այսինքն՝ բուն քրիստոնեական գաղափարախոսությունը պահպանելով, նրա հիմնավորման կամ առավել արմատավորման համար ստեղծվեցին լրացուցիչ մեխանիզմներ, որոնք իրենց կիրառումը գտան հայկական դարավոր սովորույթների վերաիմաստավորված պահպանությամբ:

Քրիստոնեության հայացմանը կամ ազգայնացմանը նպաստող երկրորդ կարևոր հանգամանքը հայոց այբուբենի գյուտն էր, քանզի դրանով սկսվեց հայտնի Թարմանչաց շարժումը մեծն Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ, որի արդյունքում առաջինը թարգմանվեց Աստվածաշունչը՝ լայն հնարավորություն ընձեռելով քրիստոնեական գաղափարախոսության քարոզչության համար:

Այս ամենով հանդերձ, երկու՝ ներքին և արտաքին պատճառներով պայմանավորված, անկախ քրիստոնեության արմատականացված լինելու հանգամանքից՝ մեր հետքրիստոնեական ամբողջ պատմության ընթացքում հայոց

առաքելական հավատին կամ, որ նույնն է, հայ ժողովրդի անվտանգությանը լուրջ մարտահրավերներ է ներկայացրել այլադավանությունը, ինչից պետք է հետևեցնել, որ դրա դեմ պայքարի անհրաժեշտությունը պետք է հիմնավորվեր Հայ Առաքելական Եկեղեցու ողջ պատմության ընթացքում այն պարզ պատճառով, որ հիմնականում հայ մտավորական խավը կազմում էին հոգևորականները, իսկ ազգային և հոգևոր անվտանգության գաղափարական հիմքերը ստեղծում են հենց մտավորականները:

Արդեն քրիստոնեության՝ պետական կրոն ընդունումից հետո Հայ Եկեղեցին այլադավան է որակել նախկին հեթանոսական կրոնին հարողներին, որովհետև Մեծ Հայքի թագավորությունում չի եղել դավանանքի ազատություն: Ուստի արդեն Աշտիշատի ժողովում հեթանոսական շատ սովորույթներ արգելելու որոշումներն ինքնին նշանակել են այլադավանության դեմ պայքարի տեսական հիմնավորում, որովհետև պայքարն այլադավանության դեմ ուղիղ համեմատական էր հայի ավելի բարոյական նկարագրի սերմնավորմանը, հոգևոր և ֆիզիկական ճիշտ կենսագործունեության ներդաշնակությանը: Օրինակ՝ այն, ինչ գրում է Փավստոս Բուզանդը Աշտիշատի ժողովում Ներսես Մեծի նախաձեռնությամբ ընդունված որոշումների մասին, նույնն է, ինչ գրելը այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտության մասին: «Վարդապետական խոսքով, -

գրում է Փավստոսը, - առհասարակ հորդորելով բոլորին (Ներսես Մեծը – Գրիգոր աբեղա Խաչատրյան, Արշակ ներսիսյան), մտքերի բացված դռները դեպի բարին էր բացում: Ուսուցանում էր ամենաբարի սերը, հույսը, հավատը, սրբությունը, քաղցրությունը, հեզությունը, անոխակալությունը»[1] : Իսկ քիչ անց հետևյալն ենք կարդում. «Նա խրատ էր տալիս, որ միշտ պետք է ունենալ հարության հույսը, չկարծել, թե մարդու մահն անդառնալի է, թե նորից կենդանանալու հույս չկա: Ուստի և պետք չէ մեռածի վրա անհուսությամբ լացուկոծ անել, անչափ ու անկարգ սուգ անել, այլ հույսով նկատի ունենալ Տիրոջ (երկրորդ) Գալուստը և հարությամբ նորոգվելը, ուրեմն սպասել տիրոջ գալստյանը, երբ ամեն մարդ հավիտենական հատուցում կստանա ըստ իր գործերի: Նաև խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, որ ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից: Եվ կանոն էր դնում՝ մեռած անասուն ու արյուն չուտել, ամսականի ժամանակ կնոջը չմերձենալ, որովհետև դրանք պիղծ են տիրոջ առաջ»[2]:

Ինչպես նկատելի է՝ Ներսես Մեծն իր դրույթները բխեցնում էր քրիստոնեական բարոյական նորմերից, որոնք

[1] **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 130:
[2] Նույն տեղում:

հակադրում էր հեթանոսական սովորույթներին, մի կրոնական գաղափարախոսության, որն արդեն մերժելի էր իբրև այլախոհություն: Եվ այդ մերժման մեջ նա քանզի բացառում էր հայի կյանքից և կենցաղից այն ամենը, ինչն անբարոյական էր համարում:

Հայ Առաքելական Եկեղեցու՝ պատմության ընթացքում այլադավանության դեմ պայքարը կարելի է ներկայացնել երկու փուլով.

Առաջին. Պայքար բուն քրիստոնեական գաղափարախոսության մեջ առկա այն դավանաբանական ուղղությունների դեմ, որոնք մերժելի էին իր կողմից: Այս պայքարի արդյունքում վերջնական տեսք է ստանում Հայ առաքելական եկեղեցու գաղափարախոսությունը:

Երկրորդ. Պայքար ոչ քրիստոնեական այլադավանությունների դեմ, որի արդյունքում եկեղեցին հիմնավորում էր իր դավանանաբանության ճշմարտացիությունը:

5-րդ դարի կեսերին քրիստոնեական եկեղեցիներում խորանում են վեճերը Քրիստոսի մարդկային և աստվածային բնության շուրջը: Այդ վեճերն սկզբնավորվել էին մինչև այդ երկու հռչակավոր՝ Ալեքսանդրիայի և Անտիոքի եկեղեցական դպրոցների միջև: Առաջին դպրոցը, հետևելով Աստվածաշնչի այլաբանական մեկնության եղանակին, պնդում էր, որ Քրիստոսի մեջ մարդկային և աստվածային բնությունները անայլայլելի եւ անխառն

կերպով միաձուլված լինելով, կազմում են մեկ էություն, որում առաջնային է աստվածայինը: Իսկ Անտիոքի դպրոցը Քրիստոսի մեջ տեսնում էր մարդկային բնությունը, նրան համարում էր մարդ, որն աստվածացել է, ուստի նրա մեջ տեսնում էր երկու բնություն՝ մարդկային և աստվածային[1] :

Այստեղից էլ ծնվում են քրիստոնեության մեջ դավանաբանական երկու ուղղությունները՝ միաբնակությունը և երկբնակությունը: 325 և 431թթ. գումարված Նիկիայի և Եփեսոսի եկեղեցական ժողովները ընդունում են Հիսուսի մեջ աստված-մարդկայինը տեսնելու տեսությունը, որին հետևում է նաև հայկական եկեղեցին: Մասնավորապես Եփեսոսի ժողովում հաղթող է հանդիսանում Կյուրեղ Ալեքանդրացու՝ մի բնության վարդապետությունը: Բայց ահա 451թ. գումարված Քաղկեդոնի ժողովն իր վճիռներում մերժում է վերոհիշյալ ժողովների դավանաբանական սկզբունքները և փաստորեն ընդունում է երկբնակության տեսությունը: Արևելիքի շատ եկեղեցիներ՝ եգիպտականը, ասորականը, այդ թվում հայկականը չեն ընդունում Քաղկեդոնի ժողովի որոշումները, և խզում է առաջանում հռոմեաբյուզանդական և արևելյան եկեղեցիների միջև: Փաստորեն հայկական եկեղեցու համար Հիսուսի միաբնակության Քաղկեդոնյան տեսությունը ընկալվում է իր ամրագրած դավանանքից

[1] **Ե. Տեր - Մինասյան,** Ընդհանուր եկեղեցական պատմություն, հ. 1 -ին, Էջմիածին, 1908, էջ 311-332:

շեղում, քանզի Հիսուսին համարում էր Աստված, այսինքն՝ նրա մեջ տեսնում էր երկու բնություն մեկ էություն մեջ: Ուրեմն՝ նա պետք է տեսականորեն հիմնավորեր իր ընդունած տեսությունը, քանզի կարող էր երկփեղկվել Հայ առաքելական եկեղեցին: Եվ ահա սկսում է պայքար՝ իր տեսական դիրքորոշման ամրապնդման, եկեղեցու պառակտման վտանգը չեզոքացնելու համար: Արդյունքում ստեղծվում է դավանաբանական գրականություն, որի սկիզբը դրվում է եգիպտական եկեղեցու միաբնակության տեսության պարագլուխ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» աշխատության հայերեն թարգմանությամբ, որը կատարվում է 480 – 484թթ. –ին[1]:

«Հակաճառութեան» նպատակը շարադրված է գրքի հակիրճ նախաբանում, որն է՝ Աստծո ճշմարիտ վարդապետությունը քարոզող սուրբ և ուղղափառ հայրերի վկայություններով հերքել Քաղկեդոնի ժողովի սահմանումները՝ ապացուցելու համար, որ Ընդհանրական եկեղեցու հայրերի գրվածքներում խոսք չկա Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի երկու բնությունների վարդապետության մասին:

[1] Տիմոթէոսի եպիսկոպոսի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսնի ժողովոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. Եպիսկոպոսի և Երուանդ վարդապետի, Էջմիածին, 1908:

Գրեթե այս նույն ժամանակներում է, ըստ ոմանց[1], գրվել նաև Մ. Խորենացու դավանաբանական «Թուղթը», որի և Տիմոթեոս Կուզի հիշյալ աշխատության ազդեցությամբ կաթողիկոս Հովհ. Մանդակունին գրել է իր նշանավոր «Ապացոյցը»[2], որն ուղղված էր երկբնակության դեմ, որը նշանակում է, որ հայոց եկեղեցին ուներ հակաքաղկեդոնական հստակ դիրքորոշում:

Սակայն պետք է մատնանշել, որ պայմանավորված հայ ժողովրդի մասնավորապես Արշակունյաց արքայատոհմի անկմանը հաջորդած ոչ կայուն քաղաքական իրավիճակով և ազգային ազատագրական շարժումներով, չի եղել եկեղեցական ժողով, որը հատուկ որոշումներ է ընդունել ընդդեմ երկբնակության տեսության: Միայն 506թ., երբ արդեն քաղկեդոնական դավանանքը Բյուզանդիայի պաշտպանությամբ շատ ուժեղացավ, Դվինի եկեղեցական ժողովում վերջնական ձևավորում ստացավ հայկական եկեղեցու դավանաբանական դիրքորոշումը, որի հակաքաղկեդոնական տեսական ընդհանրացումները վերջնականապես հստակեցվեցին նույն Դվինի 554թ. գումարած երկրորդ եկեղեցական ժողովում: Այս երկու ժողովների որոշումներով Հայ Առաքելական Եկեղեցին վերջնականապես խզեց իր կապերը բյուզանդական եկեղեցու հետ:

[1] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հատոր 2, Երևան, 1984, էջ 471:

[2] «Կնիք հաւատոյ» Էջմիածին, 1914, էջ 130:

Այստեղից ընդահանրացումը մեկն է՝ եթե մինչև այս ժողովները Հայոց Եկեղեցին վերջնական դիրքորոշմամբ հանդես չէր եկել քաղկեդոնականության դեմ՝ քաղաքական ծանր իրավիճակով պայմանավորված, ապա ամենևին չպետք է ենթադրել, թե տատանողական կեցվածք է ընդունել քաղկեդոնական դավանանքի կապակցությամբ: Դրան հակադրվել են առանձին եկեղեցական անհատներ: Կարելի է ենթադրել, որ եկեղեցական ժողով չի գումարվել, քանզի Հայաստանում առկա չի եղել քաղկեդոնական զանգվածի առկայություն, որի հակառակ տեսակետում այնքան էլ չի համոզում Ստ. Մալխասյանցը[1] :

Բայց դրա փոխարեն կազմվել են ժողովածուներ[2], որոնք ուղղված էին հայոց եկեղեցու դավանության, անկախության և միասնականության գաղափարին :

Այսպիսով՝ հայոց եկեղեցին ի սկզբանե պայքար է ծավալել իր քրիստոնեական դավանանքի տեսական հիմքերի ամրապնդման համար, որոնք իրենց ավարտուն տեսքն են ստացել եկեղեցական ժողովներում:

Բացի այդ՝ այս տեսությունները մշակվել են արդեն ոչ միայն քրիստոնեական ուսմունքում առկա

[1] Տե՛ս **Ակադ. Ս. Մալխասյան,** Մ.Խորենացին քաղկեդոնական էր (Պատասխան Ե. Տ.-Մինասյանին), Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, թիվ 3-4, 1944, էջ 27 - 54:

[2] Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցվոյ յուղղափառ եւ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահավաքեալ», Հրատ. Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914:

դավանաբանական վեճերում, այլև՝ հայ ազատագրական պայքարի ընթացքում՝ ընդդեմ պարսիկների, որոնք պարտադրում էին իրենց զրադաշտական դավանանքը:

Այլադավանության դեմ պայքարելու գիտակցությունը, որը բխում էր ազգային ինքնության պահպանման ձգտումներից, առավել արմատացավ 450-451թթ. հայ ազատագրական պայքարի ընթացքում: Բավական է նշել, որ պարսից հազարապետ Միհրներսեհ Վզուրկի՝ հայ նախարարներին և հոգևոր առաջնորդներին ուղղված հրովարտակի պատասխան գրության մեջ տեսականորեն հիմնավորվեց քրիստոնեական դավանանքից չհրաժարվելու անհրաժեշտությունը: Միհրներսեհը «Հայոց Մեծացե ողղված իր գրության մեջ ընդունում է երկու աստված՝ Զրվանի որդիներ չար Արհմնին կամ Արհիմանին և բարի Որմիզդին:

Այնուհետև նա փորձ է անում հակադրվելու Աստվածաշնչյան դրույթներին՝ ձգտելով ապացուցել, որ Հիսուսը աստված չէ, և հայերը, պաշտելով նրան, մոլորության մեջ են:

«Եվ մոլորված են այն բոլոր մարդիկ, - գրում է նա, - որ ասում են՝ «Մահն աստված է ստեղծել, և չարն ու բարին նրանից են լինումե: Մանավանդ, ինչպես քրիստոնյաներն են ասում, թե «Աստված նախանձոտ է. ծառից մի թուզ ուտելու համար աստված մահ ստեղծեց, և մարդուն այդ պատժին ենթարկեցե: Այդպիսի նախանձ մարդ էլ չունի մարդու նկատմամբ, ու՞ր մնաց թե աստված /ունենա/ մարդկանց

նկատմամբ, որովհետև ով ասում է այդ բանը , նա խուլ է և կույր և հարամանի դևերից է խաբված»[1] :

Մենք նպատակ չենք հետապնդում անդրադառնալ Միհրներսեհի բոլոր հարցադրումներին, այլ նրանց, որոնք նա հիմնավոր է գտնում: Դրանցից մեկը հետևյալն է. «Այս բոլոր գրածներիցս ավելի վատթարագույնն այն է, որ քարոզում են թե աստված մարդկանց ձեռքով խաչ բարձրացվեց, նույնը մեռավ և թաղվեց, և ապա հարություն առավ ու երկինք վերացավ: Չէ՞ որ դուք ինքներդ պետք է դատաստան անեիք այդպիսի անարժան ուսմունքների համար: Դևերը, որ չար են, չեն բռնվում ու տանջվում մարդկանց կողմից, ու՞ր մնաց աստված, բոլոր աստվածների արարիչը. Այսպիսի բաներ անելը ձեզ համար ամոթ է, իսկ մեզ համար՝ խիստ անհավատալի[2] :

Պարսից հազարապետը, այսպիսով, իր համոզմամբ լուրջ կռվաններ էր նետում ընդդեմ քրիստոնեական դավանանքի, այն համոզմունքով, որ հայերին կդարձնի դեպի զրադաշտական դավանանքը: Ուրեմն՝ անհրաժեշտ էր տվյալ դեպքում զրադաշտականություն կոչված այլադավանության դեմ պայքար նախ տեսական առումով, որը և անում են հայ հոգևոր առաջնորդներն իրենց պատասխան նամակում: Նրանք հիմնովին հակադրվում են

[1] Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր Սիմոնյանի, Երևան, 1958, էջ 29:
[2] Նույն տեղում, էջ 30:

Միհրներսեհի աստվածաստեղծման տեսությանը՝ գրելով հետևյալը. «Ո՞չ թե որևէ մեկից է աստված ակիզբն առել, այլ ինքնստինքյան մշտնջենավոր է. ո՞չ թե մի որևէ տեղ է, այլ ինքը տեղ է իրեն համար. և ո՞չ թե գտնվում է որևէ ժամանակի մեջ, այլ ժամանակները նրանից են գոյացել. և ոչ միայն ավելի հին է, քան երկինքը, այլև քան կարող են մտածել ու կարծել մարդիկ ու հրեշտակները: Տարրերեն կերպարանք չի ընդունում և աչքի տեսողության չի ենթարկվում . և ո՞չ միայն ձեռքով չի կարելի զննել, այլև ոչ ոքի մտքի տակ անգամ չի ընկնում, ոչ միայն մարմնավորներիս, այլև անմարմին հրեշտակների. Բայց եթե ինքը կամենում է, ճանաչվում է իր արժանավոր /հավատացյալներին/ մտքով, բայց աչքերին չի երևում, և այն էլ՝ ո՞չ թե երկնավորներիս մտքով /է ճանաչվում/, այլ նրանց, ովքեր ճշմարտությամբ հավատացել են աստծուն»[1] :

Ինչպես համոզվում ենք, ի հակադրություն զրադաշտական ուսմունքի, որի դրույթների համաձայն՝ Աստված սկիզբ է առել ինչ-որ մեկից, տվյալ դեպքում Զրվանից, այստեղ Աստված համարվում է ամեն ինչի արարիչը: Իսկ այնուհետև նրանք հակադրվում են բարի և չար ծնվելու տեսությանը՝ այն հայեցակարգը ներկայացնելով, որ մարդիկ ի ծնե չար չեն կարող լինել, այլ չար կամ բարի են դառնում իրենց առօրյա կենսագործունեության ընթացքում: Եվ իսկապես էլ, հակառակ

[1] Նույն տեղում, էջ 32:

դեպքում ինչպե՞ս է պատահում, որ բարի անձնավորությունը հաճախ չար է դառնում, իսկ չարը՝ բարի:

Պակաս հիմնավոր չէ նաև Ադամին և Եվային դրախտից վտարելու վերաբերյալ Միհրներսեհի իբրև թե տեսական հիմնավորմանը հետևյալ հակադարձումը. «Աստված այն ժամանակ նախանձոտ կլիներ, եթե պատվիրած չլիներ այդ ծառից չուտել. Իսկ եթե առաջուց զգուշացրեց, իր բնական սերն ու գութը ցույց տվեց նրա վերաբերմամբ: Իսկ մարդն արհամարհելով /այն/՝ մահվան պատիժ ընդունեց«[1] :

Եվ հայ հոգևորական – փիլիսոփաները հետևյալ տողերով են ներկայացնում իրենց հավատամքը. «Ճշմարիտ աստվածը, մեր բոլորիս աստվածը նա է, որին դու անսանձ արձակ բերանով անահ աներկյուղ, համարձակ հայհոյում ես:

Իսկ մենք այսպես ենք ճանաչում աստծուն և այս բանին հավատում ենք աներկբա:

Աստված, որ ստեղծեց այս աշխարհը, նույնը եկավ և ծնվեց սուրբ կույս Մարիամից, ինչպես առաջուց գուշակել էին մարգարեները, առանց մարմնավոր կարգի որևէ պատճառի: Ինչպես որ ոչնչից ստեղծվեց այս մեծամարմին աշխարհը, այնպես էլ առանց որևէ մարմնական միջնորդի /իր/ մարմինն առավ անարատ կույսից ճշմարտապես, և ոչ իբրև ստվեր երևալով: Ճշմարտապես աստված էր և ճշմարտապես մարդ դարձավ. Ո՞չ մարդ դառնալիս

[1] Նույն տեղում, էջ 33:

աստվածությունը կորցրեց, և ո՞չ էլ աստված մնալիս՝ աղավաղեց մարդկությունը, այլ մնաց միևնույնը;

Բայց որովհետև չէինք կարող տեսնել անտեսանելւն և մերձենալ անմերձենալուն, ուստի եկավ մեր մարդկությունն ընդունեց, որպեսզի մենք էլ նրա աստվածություն/ից բաժին/ ընդունենք: Ամենևին անարգանք չհամարեց իր ստեղծած մարմինն առնելը, այլ մեծարեց նրան իբրև իր աստվածաստեղծ գործը: Ո՞չ թե քիչ – քիչ շնորհեց սրան անմահության պատիվն ինչպես անմարմին հրեշտակներին, այլ միանգամից զգեցավամբողջ բնությունը մարմնով՝ շնչով և հոգով, և միացրեց աստվածության հետ. Միություն և ոչ թե երկուություն. և այսուհետև մեկ ենք ճանաչում աստվածությունը, որ կար այս աշխարհից առաջ, նույնը և այսօր»[1] :

Այս ամենից եզրակացությունը հետևյալն է. աշխարհաստեղծ աստված և իր կամոք ծնված Հիսուսը մեկ միություն են և ոչ թե երկվություն, և ուրեմն՝ Հիսուս նույնպես աստված է:

Անշուշտ, սրանով չսահմանափակվեց այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտության հիմնավորումը: Այն շարունակվեց հայոց և Հայ Առաքելական Եկեղեցու պատմության հետագա ընթացքում ևս:

[1] Նույն տեղում, էջ 40:

4-րդ դարի 60-70 –ական թթ. Փոքր Հայքում հանդես են գալիս «մծղնե» և «բորբորիտոն» աղանդները՝ իրենց ծագման հիմքում ունենալով գնոստիցիզմը:

Կորյունի վկայությամբ բորբորիտների դեմ խիստ պայքար է ծավալել Մեսրոպ Մաշտոցը[1] :

Բորբորիտների աղանդը գլխավորել է Սեբաստիայի հայազգի եպիսկոպոս Եվստաթիոսը: Այս շարժումը վեր է ածվում անապատական շարժման, քանզի նրան հարողները մասսայաբար հեռանում են դեպի անապատները իրենց ընտանիքներով:

Հիշյալ աղանդի դաշնակիցներն են դառնում մծղնեականները կամ մեսալյանները: Վերջիններս պայքարում էին եկեղեցու դեմ, ժխտում էին այն և պնդում, որ մարդն առանց եկեղեցու պետք է ուղիղ ճանապարհով ընթանա; ապա քարոզում էին մարդկանց հավասարություն՝ գտնելով, որ բոլոր մարդիկ ծնվել են հավասար: Նրանք հրաժարվում էին աշխարհիկ կամ պետական կյանքից և ապրում՝ ստեղծելով եղբայրություններ, չէին ճանաչում եկեղեցին, կնունքն ու հաղորդությունը: Գտնելով, որ մարդը բարոյական կատարելության կարող է հասնել մշտական աղոթքով՝ նրանք ասում էին, որ պետք է աղոթել, բայց ոչ եկեղեցում: փաստորեն այս աղանդի հետևորդները քարոզում էին անհնազանդություն և անիշխանություն, որը

[1] **Կորյուն,** Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 114:

հուժկու հարված կարող էր հասցնել հայոց միասնականությանը: Այս իսկ պատճառով Փոքր Հայքին սահմանակից Պափլագոնիայում գտնվող Գանգրայի 378 –ի տիեզերաժողովը նզովում է Եվստաթիոսի հերձվածը և նրան կարգալույծ անում[1]:

Մենք մեր մի հոդվածում անդրադարձել ենք պավլիկյան այլադավանությանը կամ աղանդին՝ ապացուցելու համար, որ առհասարակ այլադավանության դեմ պայքարը հոգևոր և ազգային անվտանգության կարևորագույն պայմաններից մեկն է[2]:

Այժմ դարձյալ կարևոր ենք համարում անդրադառնալ այդ շարժմանը Հայոց Եկեղեցու կողմից իր ողջ պատմության ընթացքում այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտությունը հիմնավորելու տեսանկյունից: Անհիմն են այն տեսակետները՝ համաձայն որոնց՝ պավլիկյան շարժումն ուներ հակաավատատիրական ուղղվածություն, որը նշանակում է, որ իր էությամբ սոցիալական էր: Հատկապես խորհրդային շրջանում հիմնականում այս հայեցակարգն էր շրջանառության մեջ, որը վաղուց հնացել է: Սա այլադավանության քողի տակ քաղաքական շարժում էր՝ կոչված հուժկու հարված

[1] Կանոնագիրք հայոց, էջ 188 – 201:

[2] **Գրիգոր Աբեղա Խաչատրյան,** Այլադավանության դեմ պայքարը՝ որպես ազգային և հոգևոր անվտանգության ապահովման կարևորագույն պայման, տե՛ս «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(4), Երևան, 2012, էջ 76 - 83:

հասցնելու Հայ Առաքելական Եկեղեցուն, որը պետության բացակայության պայմաններում իրականացնում էր պետական և ազգապահպանման գործառույթներ: Եվ սրա ճիշտ ըմբռնմամբ է, որ այս գաղափարախոսության դեմ պայքարի անհրաժեշտությունը հիմնավորեց եկեղեցին: Մինչև այդ նշենք, որ պավլիկյան շարժումը ծագել է Արևմտյան Հայաստանի Մանանաղի գավառում, որը հետագայում հանդիսացավ նաև թոնդրակյան շարժման կարևորագույն կենտրոններից մեկը: Այնուհետև այն տարածվեց Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում: Արդեն 8-րդ դարի սկզբներին այն այնքան հզոր է դառնում, որ Հայ Առաքելական Եկեղեցին ուժեղացնում է պայքարը նրա վարդապետության դեմ: Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը առանձին ճառ է գրում պավլիկյանների վարդապետության դեմ՝ հիմնավորելով դրա սնանկությունը՝ ժողովրդին այդ աղանդից հեռու պահելու մտահոգությամբ[1]: Արաբները դեռևս 7-րդ դարում ձգտում էին պավլիկյաններին օգտագործել ընդդեմ Բյուզանդական կայսրության Ներսես Տայեցի կաթողիկոսի օրոք (641-661): Իսկ վերջինիս մահից հետո «խուսեալք չոգան ղօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ»[2]: Երբ արաբները զորավիգ եղան պավլիկյաններին, վերջիններս «ի դարանամտութեան

[1] Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 46 - 60:

[2] Նույն տեղում, էջ 51:

իւրեանց սողեալ յորջից յաշխարհամէջս և ի ժողովրդաբնակս համարձակեցան յարձակել տեղիս… Ուրանօր ի միասին ընթացեալ կուտեցին ամենայն ուրեք, որպէս անգեղք աշխարհաց ի նեխաշաղիղ ինչ գէշ»[1]:

Ինչպես համոզվում ենք, նրանք սփռվել էին Հայաստանում և մեծ սպառնալիք էին ներկայացնում: Նրանք տարածվում են նաև Աղվանքում՝ ստիպելով Աղվանից Միքայել կաթողիկոսին (702-737), Աղվանից իշխան և Գարդմանից տեր ապոհյուպատ պատրիկ Շերոյին, ինչպես նաև սպարապետ Վարազ – Գրիգոր պատրիկին Պարտավ քաղաքում ժողով գումարել՝ «յաղագս բարեկարգութեան աշխարհիս և ուղղափառութեան հաւատոյս»: Ժողովում զանազան աղանդավորների շարքում հիշատակվում են նաև պավլիկյանները[2]:

Իսկ Հովհան Օձնեցին պավլիկյանների օրեցօր բարդացող հարցը քննության է դնում Դվինի 719թ. եկեղեցական ժողովում, ուր նրանց դեմ ընդունվում է 32-րդ կանոնը, որի նպատակն էր թույլ չտալ, որ շարժումը լայն ծավալ ստանա[1]:

Պայքարելով պավլիկյանների դեմ՝ Հայ Առաքելական եկեղեցին միաժամանակ չեզոքացնում էր նրանց թաքուն

[1] Նույն տեղում:

[2] Սամուէլի քահանայի Անեցւոյ հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 286:

նպատակները, որոնք, հարկավ, քաղաքական էին և միտված ոչ միայն հոգևոր, այլ աշխարհիկ իշխանության հասնելուն: Այդ նպատակները նրանք հետագայում ունեցան նաև Բյուզանդական կայսրության նկատմամբ, որն էլ 870-ական թթ. նրանց վերջնական պարտության մատնեց:

Ի վերջո, ինչու՞ էր այս աղանդի գաղափարախոսությունը վտանգավոր հայ առաքելական հավատի համար: Մենք մեր հղած հոդվածում մի փոքր անդրադարձել ենք այդ գաղափարախոսությանը: Ավելացնենք միայն, որ նրանք մերժում էին եկեղեցին՝ այն համարելով «դևերի կացարան»: Մերժում էին նաև հոգևորականների դասը: Սա նշանակում է, որ նրանք հանձին եկեղեցու և հոգևորականների չէին ուզում տեսնել միջնորդների՝ մարդու դեպի Աստծված տածած հավատի միջև: Սակայն, հարց է առաջանում՝ եթե նրանք այս առումով իսկապես անկեղծ էին, այդ դեպքում ինչո՞վ բացատրել այն, որ այդ միջնորդության դերն իրենք էին փորձում ստանձնել: Ինչու՞ էին իրենց հավաքատեղիները համարում «կաթողիկե եկեղեցիե կամ աղոթարան, իսկ իրենց համարում էին «ուղեկիցներ» և «նոտարներ», որոնք «ոչնչով չէն տարբերվում մնացած մարդկանցից ո՛չ հագուստով, ո՛չ էլ ապրելակերպով»[2]:

[1] Կանոնագիրք հայոց, Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 534-535

[2] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 773:

Ընդունենք մի պահ, որ նրանք իսկապես իրենց չէն տարբերում հասարակ ժողովրդից, բայց չէ՞ որ Հայ Առաքելական Եկեղեցուն փոխարինելու իրենց ձգտմամբ անուղղակիորեն իրենք էին ստանձնում այդ միջնորդի դերը: Ուրեմն՝ ակնհայտ է, որ ունեին այդ եկեղեցուն փոխարինելու ձգտումներ: Իսկ այդ ձգտումների իրականանալու դեպքում արդեն, ուզեին-չուզեին, տարբերվելու էին հասարակության այլ շերտերից, քանզի հանդիսանում էին Հայ Առաքելական Եկեղեցու ընդունած դրույթներից շեղվող վարդապետության կրողներ, և այդ վարդապետությունը ձգտում էին հասցնել ընդահանրության: Այնպես որ արդեն հիմնավորված հայ առաքելական հավատը խարխլելու փորձերի դեմ Հայոց Եկեղեցու պայքարը միանգամայն տեղին էր և բխում էր ժամանակի պահանջներից:

Սակայն միայն պավլիկյանների գաղափարախոսության դեմ պայքարով չսահմանափակվեց Հայոց Եկեղեցու գործունեությունը: Ցավոք, հետագա դարերի ընթացքում դարձյալ Հայաստանում ծնվեցին նոր կրոնական գաղափարախոսություններ, որոնց դեմ պայքարի անհրաժեշտության հիմնավորմամբ շարունակեց գործել Հայոց Եկեղեցին: Դրանցից պավլիկյան աղանդին հաջորդած երկրորդ վտանգավոր գաղափարախոսությունը թոնդրակյան գաղափարախոսությունն էր: Այն ծագել է 9-րդ դարում՝ հիմնադիր ունենալով Ծաղկոտն գավառի Զարեհավան

գյուղից Սմբատ Զարեհավանցուն, որն իր աղանդի կենտրոն դարձրեց Թոնդրակ ավանը: Ստեփանոս Տարոնեցին վկայում է, որ Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու (898 – 829) օրոք է ի հայտ գալիս Սմբատ Զարեհավանցին. Սրա օրոք երևաց Սմբատը՝ թոնդրակյաններից առաջինը, Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից, որ հակառակ էր քրիստոնեական բոլոր կարգերին[1]:

Գրիգոր Մագիստրոսը (990 – 1058) գրում է, որ թոնդրակյանները երկու հարյուր տարուց ավելի է, որ իրենց գաղափարախոսությամբ ապականում են հայոց երկիրը և մինչև իր ժամանակները 15 քահանայապետեր նզովել են թոնդրակեցիներին, 170 տարի շարունակ հայոց տասներեք կաթողիկոսներ և նույն թվով աղվանից հայրապետներ հանդիմանել, նզովել, անիծել և արտաքսել են նրանց, բայց ապարդյուն[2]:

Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանն այն կարծիքին է, որ Թոնդրակյան շարժումն սկզբնավորվել է 9-րդ դարի կեսերին, և նույն ժամանակ էլ սկսվել են նրանց դեմ հալածանքները: Այդ շրջանում Ապահունիքում, որի կենտրոնը Մանազկերտն էր, իշխում էր արաբ ամիրա Աբու-

[1] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասօղական Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 160:

[2] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, տես էջ 65. 165 և 167:

լ-Վարդը, որը մահապատժի է ենթարկում Սմբատ Զարեհավանցուն[1]:

Անվարան կարելի է պնդել, որ դրանում դեր է ունեցել Հայոց Եկեղեցին, քանզի Սմբատին մահապատժի ենթարկելուց առաջ Մանազկերտի մահմեդական իշխողը միայն եկեղեցուց կարող էր իմանալ, որ Զարեհավանցին իրեն Քրիստոս է համարել, ուստի և նրան ասել է, թե Քրիստոսը հարություն առավ երեք օրից, եթե դու երեսուն օրից էլ հարություն առնես, իրոք Քրիստոս ես:

Սակայն հիմնադրի մահից հետո թոնդրակյան այլադավանությունն ավելի լայն թափ է առնում, ուստի և եկեղեցին անընդհատ պայքարում է նրա դեմ: Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին (943 – 965) հանձնարարում է նշանավոր աստվածաբան Անանիա Նարեկացուն՝ հատուկ աշխատությամբ հերքելու թոնդրակյան ուսմունքը: Վերջինս գրում է այդ աշխատությունը, որը Գրիգոր Նարեկացին համարում է «զզարմանագիծ հակաճառութիւն», «զլիագիտութեամբ զմատեանս, որ ընդդէմ հերձուածողացն»[2], սակայն, ցավոք, այն մեզ չի հասել: Սակայն այստեղ կարևորն այն է, որ Հայ Առաքելական Եկեղեցին ամեն կերպ ձգտել է հիմնավորել այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտությունը, քանզի այն կոչված էր խարխլելու

[1] **Աշոտ Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատասգրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 337 - 345:
[2] Գիրք թղթոց, Տփղիս, 1901, էջ 498, 502:

հայոց հավատը, ինչը լուրջ հարված էր նրա ինքնությանն ու անվտանգությանը:

Թոնդրակյանները ժխտում էին այն ամբողջ տեսությունը, որն ուներ Հայ Առաքելական Եկեղեցին: Մասնավորապես Զարեհավանցուն Քրիստոս համարելու փաստը բավական է այն ենթադրության համար, որ թոնդրակյանները նույնպես գաղտնի քաղաքական նպատակ են հետապնդել՝ ստանձնելու Հայոց Եկեղեցու դերը և դառնալու ժողովրդի հոգևոր առաջնորդը:

Գրիգոր Մագիստրոսը թոնդրակյաններին բաժանում է երեք խմբի.

Առաջին. Թոնդրակյաններ, որոնք չարի մեջ կատարելագույններն են և էպիկուրյանների պես քարոզում են կատարյալ անհուսություն և անաստվածություն:

Երկրորդ. Թոնդրակյաններ, որոնք մանիքեության հետևորդների նման իրենց անիծածն են գործում:

Երրորդ. Թոնդրակյաններ, որոնք առերես քրիստոնյա են ձևանում՝ հետևելով քրիստոնեության ավանդույթներին, բայց ամենևին քրիստոնյա չեն, այլ դրանով ծածկում են իրենց աղանդավոր լինելը[1]:

Նույն Մագիստրոսը թոնդրակյաններին բնութագրում է նաև ըստ նրանց գաղափարախոսության մեջ առկա ճյուղերի և յուրաքանչյուր բնակավայրի աղանդավորների

[1] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 158 - 159:

գաղափարախոսության մեջ առանձնացնում է մոտեցումները քրիստոնեության նկատմամբ:

Մագիստրոսն անհրաժեշտ էր համարում այս աղանդի դեմ հիմնավոր պայքարը, քանզի այն ամբողջովին ուղղված էր քրիստոնեության դեմ և «ի բոլոր օրինադրութիւնս իւրեանց ամենևին արտաքս են հին և նոր օրինաց»[1] , այսինքն՝ դուրս են Հին ու Նոր Կտակարաններից:

Եվ վերջապես, ըստ նրա՝ այս հերձվածը միահյուսումն էր ամեն տեսակ չարափառությունների՝ կախարդության, հմայության, անհավատության, չարության, և թոնդրակյանները, թողնելով լուսաշող ճանապարհը, հետևում էին «կուրաշավիղ կորստեան ուղեգնացութեան»[2] :

Մագիստրոսին հաստատում են և՛ Գրիգոր Նարեկացին, և՛ Արիստակես Լաստիվերցին: Եզրակացությունը մեկն է. թոնդրակյան այլադավանությունը միտված էր քայքայելու հայ քրիստոնեական հավատը, որն ուղիղ համեմատական էր հայ ժողովրդի միասնականության քայքայմանը:

Թոնդրակյան այլադավանությունը դատապարտելի էր թեկուզ և այն պատճառով, որ ձևավորվեց և զարգացավ մի ժամանակահատվածում, երբ գոյություն ուներ հայկական Բագրատունյաց թագավորությունը, որին սպառնացող արտաքին վտանգների պայմաններում (արաբական, ապա բյուզանդական), նպաստում էր ժողովրդի պառակտմանը՝

[1] Նույն տեղում, էջ 160:

[2] Նույն տեղում:

ուղղակիորեն թուլացնելով հայոց պետականությունը ներսից: Պայքարելով եկեղեցու դեմ առհասարակ՝ կամ, որ նույնն է, հայոց հավատի և ոչ թե եկեղեցական անհատների, նրանք նպաստում էին հայոց պետականության թուլացմանը:

Հայոց պատմության հետագա դարերում չեն եղել այնպիսի հզոր այլադավանական շարժումներ, ինչպիսիք էին պավլիկյան և թոնդրակյան շարժումները, բայց Հայ Առաքելական Եկեղեցին հայոց պետականության բացակայության երկարատև ժամանակահատվածում (1375 – 1918), փոխարինելով այդ պետությանը, միշտ պայքար է տարել հայոց հավատը անսասան պահելու համար և իր ողջ պատմությունը կերտել է այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտության գիտակցման զուգորդությամբ: Բավական է հիշատակել Մեխլու քահանայի աղանդավորական շարժումը 17 –րդ դարի սկզբներին, որն իր վրա կրում էր նաև մահմեդական գաղափարախոսության կնիք[1]:

Մեխլու վանականի շարժումը 1606 – 1620թթ. տարածվում է Արցախի լեռնային շրջաններում:

Ակնհայտ է, որ Մեխլուն ունեցել է հեռուն տանող քաղաքական նպատակներ, որոնց մասին միայն հնարավոր է ենթադրություններ անել: Թաթար և հայ գյուղացիությունից աղանդավորական խմբեր կազմելը պետք է ենթադրեր առաջին հերթին պայքար տիրող պարսկական կամ

[1] Այս մասին տե՛ս Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915:

թուրքական իշխանությունների դեմ, որոնք սոցիալական կեղեքման բուն պատճառներն էին: Բայց դրա փոխարեն շարժում սկսել հայոց եկեղեցու դեմ՝ այն էլ թաթարների դրանում ներգրավելով, ենթադրել է տալիս, որ Մեխլուն բախտախնդիի մեկն է եղել կամ հետապնդել է հայ ժողովրդի անվտանգությունն առհասարակ սասանող մութ նպատակներ:

Մեխլուի հետևորդներից էր Նոր Ջուղայից դերձակ Թումիկը, որը 17 – րդ դարի կեսերին հիմնեց իր աղանդը[1]: Թումիկի աղանդին վերջ դնելու համար Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Խաչատուր Կեսարացին 1642թ. գումարում է եկեղեցականների և աշխարհականների կրոնաժողով (Նոր Ջուղայում), որին մասնակցում է և Թումիկը, և որը բանադրվում է որպես «ժանտ և դժնաբարո»: Հետաքրքիր է, որ նա նույնիսկ այդ ժողովում փորձում է պաշտպանել իր տեսակետները:

Նույն ժողովում դատապարտվում են նաև ոմն Սև Պետրոսի հայացքները, որոնք բխում էին Թումիկի աղանդից: Ժողովը գտնում է, որ նա և իր կողմնակիցները հերձվածի մեջ էին ընկել որպես «նոր մի Արիոս ու Նեստոր»[2]:

[1] Տե՛ս Խաչատուր աբեղա Ջուղայեցի, Պատմութիւին Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 115:

[2] Տե՛ս Մանր ժամանակագրություններ, 13 - 18 - րդ դարեր, հ. 1, Երևան, 1951, էջ 302:

Կարևոր ենք համարում շեշտել, որ Հայ Առաքելական Եկեղեցու պատմության ընթացքում ձևավորված բոլոր մեծ և փոքր այլադավանական շարժումներ չեն կարողացել սասանել հայոց ընդհանուր առաքելական հավատը, և հայ ժողովուրդը մեծ մասամբ փարված է մնացել իր քրիստոնեական հավատին և եկեղեցուն: Իսկ դրանում իր մեծ դերակատարությունն է ունեցել եկեղեցին, որը միշտ գործել է այն գիտակցությամբ, որ հայոց հավատի փլուզումը կնշանակեր հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացում: Այլադավանության դեմ պայքարի հրամայականը Հայոց Եկեղեցու առաջ է նաև այսօր, և նա դարձյալ դրանից դուրս է գալու հաղթանակով, ինչպես իր ողջ պատմության ընթացքում:

Grigor Abegha Khachatrian, Arshak Nersisian, The rationale of necessity of struggle against the heterodoxy during the history of the Amenian Apostolic church - The article discusses the origins of heterodoxy, according to these it becomes the historical necessity when dominant religion ideology starts to expend itself in terms of national security. It forms as the alternative ideology which then become dominant as in case of Christianity. There is attempt to prove that the heterodoxy should not be tolerated if it is hazard for the people identity. In that case there is need to struggle against it as it did Armenian Apostolic Church during its history.

Григор Абега Хачатрян, Аршак Нерсисян, Обоснование необходимости борьбы с неортодоксальностью в истории Аменской Апостольской церкви - В статье обсуждается происхождение гетеродоксии, в соответствии с этим становится исторической необходимостью, когда доминирующая религиозная идеология начинает расходовать себя с точки зрения национальной безопасности. Она формируется как альтернативная идеология, которая затем становится доминирующей, как в случае христианства. Есть попытка доказать, что гетеродоксальность не должна допускаться, если она представляет опасность для идентичности людей. В этом случае нужно бороться с этим, как это делала Армянская Апостольская Церковь на протяжении всей своей истории.

ԳԵՎՈՐԳ Ա. ԲՅՈՒՐԱԿԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բանալի բառեր – ծագում, կաթողիկոս, հայկական, եկեղեցի, գավառ, գյուղ, որբանոց, եպիսկոպոս, մասնակցել, ժողով:

Հայոց եկեղեցու պատմության ամուլ շրջանի (728-855 թթ.) կաթողիկոսներից է Գևորգ Ա. Բյուրականցին: Նա իր կարճատև աթոռակալության օրոք ամլության փուլի շատ հայրապետների նման ոչ մի նշանակալից հետք Հայաստանյայց հոգևոր կառույցի ընթացքի վրա չի թողել. երկրում իշխող արաբ վերնախավը եկեղեցու նկատմամբ դիտավորյալ վարում էր քաղաքականություն, որը միտված էր հայոց նվիրապետության գլուխ ծեր, տկար, անեռանդ, անկարող հոգևորականներ բարձրացնելուն: Իրականացվող քաղաքականության նպատակն ինքնին հասկանալի էր՝ թույլ չտալու հեղինակավոր, կազմակերպված, ժողովրդին ըստ ամենայնի առաջնորդելու կարողությամբ օժտված կառույցի ուժեղացում, որի դեպքում վերջինս ունակ կլիներ երկրի աշխարհիկ մեծամեծների հետ դաշնակցած՝ հանուն անկախության գլխավորելու խալիֆայության դեմ հայության ելույթներն ու շարժումները: Եվ պատահական չէ, որ ամեն անգամ հակաարաբական ապստամբությունների ձախողումներից հետո ոչ միայն խստացվում,

սաստկացվում էին ճնշումները հայ հոգևորականության հանդեպ, որոնք հաճախ ուղեկցվում էին հայոց եկեղեցու անհարգի հարկումներով, քահանաներին, կրոնավորներին, հոգևոր սպաՎարդուհիսավորներին նույնիսկ մարմնական ամենադաժան խոշտանգումների ենթարկելով, այլև դեպի կաթողիկոսական աթոռ ճանապարհ էր բացվում թույլ, ծերացած, անդեմ, հարմարվողական եկեղեցականների առջև: Վերջիններից մեկն էլ Գևորգ Բյուրականցին էր:

Գևորգի մասին պատմական աղբյուրների տեղեկությունները սեղմ ու ժլատ են: Դրանցից իմանում ենք, որ նա նույնպես Այրարատ աշխարհից էր, ինչպես ամլության շրջանի կաթողիկոսներից շատերը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրության երախտավոր Մաղաքիա Օրմանյանի պրպտումների համաձայն՝ «Գէորգի ծննդավայրը Արագածոտն գաւառն է, որ քանիներէն առանց գիւղի անունին կը յիշուի, իսկ գիւղի անուն տուողներէն չորսը Բիւրական կը յիշեն, երկուքը Աշտարակ, եւ մէկ մըն ալ Օշական… Մենք կը նախընտրենք Բիւրականցի կոչել, մեծամասնության հետեւելով»[1]: Մ. Օրմանյանի վկայակոչած հեղինակներից Հովհաննես Դրասխանակերտցին, ով ժամանակով ամենամոտ պատմիչն է, կաթողիկոսի մասին միայն նշում է. «…զԳէորգ ի գաւառէ Արագածոտան կացուցանեն ի հայրապետության»[2], իսկ իր «Շարից հայրապետացն Հայոց» գործում, որ զետեղված

[1] **Մ. արքեպս. Օրմանեան**, Ազգապատում, Ա., Ս. Էջմիածին, 2001, ս. 1063:

[2] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 111:

է Սամուել Անեցու աշխատության վերջում, որոշակիացնում է. «…Տէր Գէորգ ի գաւառէ Արագածոտանէ, ի գեղջէ Բոյրականէ՝ ամս Գ»[1]:

X դարի հաջորդ պատմագիր Ստեփանոս Տարոնեցին էլ հայտնում է. «…Տէր Գէորգ յԱրագածոտնէ ի գեղջէ Աշտարակաց՝ ամս *զ* »[2]: Այս կապակցությամբ Մ. Օրմանյանի պարզաբանմամբ՝ «Գուցէ ծնած եւ սնած տեղերը տարբեր եղած են, եւ բնակութիւնն ալ փոփոխական եղած է»[3]:

Ստեփանոս Տարոնեցու վերուստ հիշատակությունը բավական ուշագրավ է. նախ, ինչպես իրազեկում է Ս. Սաղումյանը, դրանով «պատմագրության էջերում Աշտարակ տեղանունը մտնում է շրջանառության մեջ»[4], երկրորդ՝ եթե պատմիչի վկայությունը գյուղանվան հարցում ընդունենք այնպես, ինչպես որ կա, այսինքն՝ Աշտարակ ***աց***, բացառելով բառավերջի՝ ***աց***-ի հետագա գրչական աղավաղման արդյունք լինելը՝ փոխանակ Աշտարակ ***այ***, ապա տակավին վաղնջական ժամանակներից գոյություն ունեցող այդ հինավուրց բնակավայրի անվանումը պետք է կապել աշտարակների հետ, որոնք արտաքին թշնամիներից

[1] Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», յառաջաբ., համեմատ., յաւելուած. եւ ծանօթ. Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 276:

[2] «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

[3] **Մ. արքեպս. Օրմանեան**, անդ:

[4] **Ս. Սաղումյան**, Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, Երևան, 1998, էջ 21:

ու այլ վտանգներից պաշտպանվելու համար կանգնեցրել են Քասախի անդնդախոր կիրճի խորհրդավոր քարանձավներից դուրս եկած և սարահարթում նոր բնակություն հաստատած հնադարի մարդիկ[1]:

Ի տարբերություն մատենագրական սկզբնաղբյուրների, վիմական բնագրերում Աշտարակը հիշատակվում է VII դարից, մասնավորապես Ս. Աստվածածին - Կարմրավոր եկեղեցու շինարարական արձանագրությունից, այն էլ ոչ թե սոսկ որպես գյուղ, այլ՝ գյուղաքաղաք[1]:

Ահա, Բյուրականում ծնված ապագա կաթողիկոսը մի որոշ ժամանակ հոգևոր ծառայություն է կատարել Աշտարակում, նաև ըստ վերն ակնարկվածի՝ Օշականում: Կարծում ենք՝ յուրաքանչյուր հոգևորականի համար մեծ պատիվ էր՝ լինելու հայոց մեծ ուսուցչապետի՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի պահապանը:

Երևում է՝ երկու վայրերում էլ Գևորգ Բյուրականցին աչքի է ընկել իր հոգևոր պարտականությունների կատարման մեջ, այլապես առաջ չէր քաշվի ու չէր նշանակվի ավելի պատասխանատու պաշտոնում, մի գործում, որը դուրս է մնացել մեզ հայտնի նախորդ ուսումնասիրողների քննարկումներից: Բանն այն է, որ

[1] Տեղանվան հետ կապված այլ հետաքրքրական տեսակետներ տե՛ս **Ե. Շահազիզ**, Աշտարակի պատմությունը, բնագրի պատրաստումը, առաջաբանը, հավելվածներն ու լրացումները պրոֆ. Պ. Հակոբյանի, Երևան, 1987, էջ 38-39, 264-265, 270, **Հ. Մանանդյան**, Երկեր, Ե, Երևան, 1984, էջ 156, **Ս. Սաղումյան**, նշվ. աշխ.,էջ 9-11:

ուշադրության չի արժանացել Պարտավի 768 թ. Բ. եկեղեցական կանոնադիր ժողովին մասնակից հոգևորականների շարքում կաթողիկոս Սիոն Ա. Բավոնեցուց (765-775) հետո առաջինը վկայվող «Գէորգ Ոստան եպիսկոպոս» հիշատակությունը[2]: Կարծում ենք՝ խոսքը Բյուրականցու մասին է. հիշյալ ժամանակներում Գևորգ անվամբ բարձրաստիճան հոգևորական մեզ անծանոթ է: Բացի այդ էլ, 792 թ. «ծերացեալ հասակին մէջ կաթողիկոսական աթոռ բարձրացած»[3] հոգևորականը կարող էր մասնակցած լինել 24 տարի առաջ գումարված ժողովին:

Դառնալ Ոստանի եպիսկոպոս, իրոք, լուրջ առաջընթաց էր, թեմական աթոռի գտնվելու վայրն էլ պետք է ենթադրել Դվին կաթողիկոսանիստ մայրաքաղաքը: Առհասարակ, «ոստան» բառը պահլավերեն է, որ նշանակում է «գավառ»[4]: Ստ. Մալխասյանցի պարզաբանմամբ՝ ոստանը եղել է «Արշակունեանց թագաւորութեան ժամանակ արքունիքին պատկանող գաւառ, կալուած, թագաւորանիստ կամ իշխանանիստ քաղաք, մայրաքաղաք: Դուինը երկար ժամանակ հայոց ոստանն էր»[5]: «Տեղանունների բառարանի» բազմահատորյակի համահեղինակների հստակեցմամբ էլ՝

[1] Տե՛ս անդ:
[2] Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Բ, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1971 , էջ 5:
[3] **Մ. արքեպս. Օրմանեան**, նշվ. աշխ., ս.1064:
[4] Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Երեւան, 1944, էջ 572:
[5] Անդ:

Ոստանը գավառ էր «Մեծ Հայքի Այրարատ աշխարհում, Ազատ գետի միջին և ստորին հոսանքի շրջանում, Արտաշատ և Դվին մայրաքաղաքների շրջակայքում: Ոստան բառն ունի «իշխանանիստ»-ի, «թագաւորանիստ»-ի, «մայրաքաղաք»-ի իմաստ: Եվ քանի որ այստեղ իրար շատ մոտիկ գտնվում էին Արտաշատ և Դվին մայրաքաղաքները, հավանաբար այդ պատճառով էլ դրանց շորջը տարածվող գավառը կոչվել է ոստան»[1]:

Այսպիսով, Գևորգ Բյուրականցին մինչև կաթողիկոս օծվելը երկար տարիներ եղել է հայոց նվիրապետության այդ ժամանակվա ամենակենտրոնական, թերևս ամենաառանցքային եպիսկոպոսության թեմակալ առաջնորդը:

Իսկ ո՞վ էր նա, ընդհանրապես, իր ծագմամբ: Այս ուղղությամբ հետաքրքրական տեղեկություն է հաղորդում Սամուել Անեցին. «…Տէր Գէորգ որ խուլ որբունկն կոչիւր: յԱրագածոտանէ ամս Գ»[2]: Գևորգի ծնողազուրկ լինելը լիովին հասկանալի և ընդունելի է. որբ է եղել նաև նրա ժամանակակից Եսայի Ա. Եղիպատրուշեցի կաթողիկոսը (775-788): Իսկ, ահա, Գևորգի խուլ լինելը ոչ միայն անընդունելի է, այլև՝ անհեթեթություն, հանգամանք, որը դեռևս ժամանակին գրավել է Սամուել Անեցու աշխատության առաջին հրատարակիչ Արշակ Տեր-

[1] **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանուն ների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 178:
[2] «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», էջ 90:

Միքելյանի ուշադրությունը, ով էջատակում այդ բառի պարագայում ծանոթագրել է. «այլք՝ հոյլ»[1]: Հարկ է նշել, որ տակավին IV դարում ընդհանրական եկեղեցու մեծ հեղինակություն, սուրբ հայր Բարսեղ Կեսարացին (329-379) իր «Գիր կանոնական»-ի ԻԴ (24-րդ) կանոնով արգելել է. «Այր խուլ կամ համր մի՛ իշխեսցէ կալ ի կարգի քահանայութեան», - և խստագույն դատապարտմամբ սահմանել, - «թէ ոք յանդգնի՝ եղիցի նզովեալ»[2]:

Սամուել Անեցու վերը հղված հատվածն ավելի ճիշտ մեջբերել է Կիրակոս Գանձակեցին. «…տէր Գէորգ ամս երիս, որ Խոյլ-Որբուկն կոչէր. սա էր յԱրագածոտանէ»[3] : «Խոյլ-Որբուկ»-ը, կարծում ենք, «Հոյլ-Որբուկ»-ի աղավաղված ձև է: «Հոյլ» նշանակում է «խումբ», «բազմութիւն»[4]: Այստեղից պետք է հասկանալ՝ «խմբի, բազմության որբ», ասել է թե Գևորգն ի տարբերություն իրեն նախորդած կաթողիկոսներից Եսայու, որը միակողմանի ծնողածուրկ էր և մանկուց ապավինել էր Դվինի

[1] Անդ, տողատակ:

[2] «Կանոնագիրք հայոց», Բ, էջ 107:

[3] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 75:

[4] Տե՛ս **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, հ. Բ, Երեւան, 2000, էջ 86: Իսկ «խոյլ»-ն ստուգաբանվում է որպես՝ «ուռուցք, ելունդ, պալար, սպի, բիծ» (**Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, հ. Ա, Երեւան, 2000, էջ 578): Վերջիններիս իմաստով՝ «Խոյլ-Որբուկ» = «Սպիավո՞ր-Որբուկ»: Առավել հակված ենք «հոյլ»-ի ստուգաբանությանը՝ «խումբ»:

կաթողիկոսարանի ողորմածությանը, եղել է որբանոցի, մանկատան սան:

Հայտնի է, որ հայոց քրիստոնյա աշխարհում հնուց ի վեր, մասնավորապես IV դարի կեսից, երբ «որբեր, ծերեր եւ չքաւորներ ալ խնամքէ զուրկ կը մնային, Ներսէս հրամայեց իւրաքանչիւր քաղաքի եւ գիւղի մէջ աղքատանոցներ բանալ եւ այդպիսիները պատսպարել»[1]: Մեծն Ներսես Ա. Պարթև կաթողիկոսի (353-373) նմանօրինակ ձեռնարկների մասին է խոսում Փավստոս Բուզանդը. «Այրեաց և որբոց և չքավորաց հանգիստ և դարման[2] առնէր… Եւ այսպէս առ յոյժ աղքատասիրութեանն…շինեաց զամենայն աղքատանոցս ընդ ամենայն գաւառս…»[3]: Նույնն է հավաստում պատմահայր Մովսես Խորենացին՝ ասելով, որ Ներսես Մեծը «սահմանէ և յամենայն գիւղս վանս շինել, զի լինիցին օտարանոցք, և տեղի սննդեան որբոց և ծերոց, և անունողաց տածում»[4]:

Ահա, որբ երեխաների համար նախատեսված բարեգործական այդպիսի հաստատությունում դաստիարակվելով ու մեծանալով՝ բյուրականցի ծնողազուրկ

[1] **Մ. արքեպս. Օրմանեան**, նշվ. աշխ., ս. 187-188:

[2] «Դարման» բառը, բացի «դեղ», «ճար» բացատրություններից, ունի նաև խնամելու, կերակրելու, սնունդ տալու իմաստ (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Երեւան, 1944, էջ 498:)

[3] **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 122:

[4] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, քնն. բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխ. թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 336:

Գևորգը, կյանքում ընտրելով կուսակրոն հոգևորականի դժվարին ու պատասխանատու ուղին և երկարատև ծառայելով Աշտարակում, Օշականում, Դվինում, զառամյալ հասակում դարձել է կաթողիկոս՝ աթոռակալելով 792-795 թվականներին:

Ашот Манучарян, О происховдении католикоса Геворка I Бюраканци - Геворк I Бюраканци ялвяется одним из католикосов бесплодного периода истории армянской церкви (728-855 гг.), который занимал престол в 792-795 гг. Из скудных историографических источников и с помощью этимологий отдельных слов, характерезующих его, выявляем, что Геворк родился в селе Бюракан Арагацотнской провинции, был сиротой и вырос в приюте (приюты и дома для сирот, нищих, чужеземных, богодельни были в Армении еще с половины IV века), потом был рукоположен священником, долгое время служил в Аштараке, Ошакане, Двине. Он уже как епископ участвовал во II-ом Партавском соборе 768 г., а в преклонном возрасте освящался католикосом.

Ashot Manucharyan, On the origin of catholico Gevorg I Byurakansi - Gevorg I Byurakantsi (of Byurakan) was the Catholicos from 792 to795 and one of the Catholicosi who was on the thrown when the Armenian Church was inactive (728-855). Due to both scanty historical sources and origin of the words

describing him we reveal that Gevorg was born in the village of Byurakan in Aragatsotn province. They also testify to the fact that he was an orphan, grew up in an orphanage (orphanages, old peoples' houses, homes for the poors and strangers had existed in Armenia since the middle of the IV c.). Then he was ordained as a religous servant, served for a long time in Ashtarak, Oshakan and Dvin. Then he as a bishop brought his in the Church Council in Partav in 768. He was ordained as the Catholicos at a very old age.

ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՔԱՐԱՎԵԺԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (12-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Կիլիկիա, Լևոն Մեծագործ, Հռոմկլա, կաթողիկոս, պետություն, պատմություն, եկեղեցի, պատմիչ, քաղաքականություն, հետազոտող, եպիսկոպոս, հարաբերություններ:

Լևոն Մեծագործի և Գրիգոր Քարավեժի հարաբերությունների պատմությանը մինչև օրս էլ բավարար կերպով ուսումնասիրված չի։Իսկ դա կօգնի լայն պատկերացում կազմել իշխանապետի եկեղեցական քաղքականության մասին:

1193 թ. կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի մահվանից հետո առաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության հարցը: Ընտրվեց Գրիգոր Ե Քարավեժը, ով Գրիգոր Դ Տղայի քեռորդին էր՝ Պահլավունի Ապիրատյանների նշանավոր տոհմից։ Մ. Օրմանյանը, խոսելով Գրիգոր Դ Տղայի մահվանից հետո ստեղծված վիճակից, նշում է, որ այդ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի հավանական թեկնածուներից էին Գրիգոր Ապիրատ և Ներսես Լամբրոնացի եպիսկոպոսները, որոնք բավական ազդեցիկ

հոգևորականներ էին Կիլիկյան Հայաստանում[1]: Ֆրանսիացի հայտնի պատմաբան Ռընե Գրուսեի դիտարկմամբ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի մահվանից հետո կաթողիկոսի թեկնածու դիտվող Գրիգոր Ապիրատ և Ներսես Լամբրոնացի եպիսկոպոսներից ոչ մեկն էլ չառաջադրվեց հունական և լատինական գաղափարների նկատմամբ չափազանց բարեհաճ տրամադրվածություն ունենալու պատճառով[2]: Լևոն Մեծագործը և հայ բարձրաստիճան հոգևորականության մեծ մասը այլ որոշում կայացրեցին:

Այսպես՝ Լևոն իշխանապետը և հայ իշխանական վերնախավը պաշտպանեցին երիտասարդ Գրիգոր Ե Քարավեժի թեկնածությունը, ով համաձայն Մ. Օրմանյանի՝ ընդամենը 22 տարեկան էր[3]: Նոր կաթողիկոսին Լևոնի աջակցությունը հետապնդում էր նպատակ՝ սիրաշահելու բուն Հայաստանի հոգևորականությանը, որն էլ առաջ էր քաշել նրա թեկնածությունը[4]: Իհարկե վերը նշված ժամանակաշրջանում Կիլիկիայում կային մի շարք անվանի հոգևորականներ, ովքեր կարող էին բազմել Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռին, սակայն բուն Հայաստանի

[1] **Մ. Օրմանյան,** Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 89:

[2] **Ռընե Գրուսե,** Խաչակիրները և հայերը, հ.1,Երևան, 2005, էջ 355:

[3] Նույն տեղում:

[4] **Հ. Արշամյան,** Կիլիկիայում վերակերտված հայոց թագավորության համազգային իրավասությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1995, N 3, էջ 59:

նկատմամբ վերաբերմունքը կարելի է բացատրել այն պարզորոշ հանգամանքով, որ հայոց իշխանապետը երազում էր հայկական բոլոր հողերը ազատագրել օտարերկրյա տիրապետությունից և դրանք միավորել իր իշխանության ներքո: Նա ցանկանում էր մի այնպիսի անձի տեսնել կաթողիկոսական աթոռին, ով ընդունակ կլիներ աջակցելու իրեն: Արժե նաև նշել, որ «Թուղթ առ Լևոն արքայն հայոց» աշխատությանից երևում է, որ Գրիգոր Ե Քարավեժի ընտրությանը ոչ միայն դեմ է եղել Ներսես Լամբրոնացին, այլև շատերին է համոզել, որ այդ «մանուկը» կաթողիկոս չընտրվի: Չնայած Լևոնը մի քանի անգամ հրավիրել է Լամբրոնացուն և համոզել, որ վերջինս գա և մասնակցի Գրիգոր Ե Քարավեժին կաթողիկոս օծելու արարողությանը, բայց նա հրաժարվել է: Մի քանի անգամ կանչելուց և ստիպելուց հետո միայն Ներսես Լամբրոնացին ակամայից համաձայնեց և, հակառակ իր կամքի, կատարեց Լևոն Մեծագործի պահանջը[1]:

Սկզբում արքայի և կաթողիկոսի հարաբերությունները բավական ջերմ էին, սակայն շուտով բարդանում են: Հիշատակման արժանի է Գրիգոր Ե Քարավեժի հետ տեղի ունեցած դեպքը: Սկզբում Լևոն իշխանապետը պաշտպանեց նրա թեկնածությունը, բայց երբ կաթողիկոսն արտահայտեց հայ հոգևորականության մեծամասնության կամքը և հավանություն չտվեց Լևոնի քաղաքական որոշ

[1] **Գ. Հակոբյան**, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1975, էջ 100:

դիրքորոշումներին՝ վիճակն արմատապես փոխվեց: Այստեղ հարց է առաջ գալիս, թե արդյոք հայոց կաթողիկոսը ուներ լծակներ՝ հակազդելու հայոց իշխանապետի վրա: Հավանաբար ուներ: Ճիշտ է, նա հայրապետական գահին էր բազմել Լևոն Մեծագործի աջակցությամբ, սակայն Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը այս պատմաշրջանում, հայ ժողովրդին միավորող միակ իրավական իշխանությունն էր, պետականությունը կորցրած ժողովրդի համար[1]: Եվ հայոց կաթողիկոսարանը վեր էր Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից: Բացի այդ՝ Հռոմկլայի կաթողիկոսը գերակա էր բոլոր հայկական իշխանությունների նկատմամբ:

Միջնադարյան պատմիչ Սմբատ Սպարապետը հետևյալն է հայտնում հայոց կաթողիկոսի մասին. «Տղայ կաթողիկոսն Տէր Գրիգորիս չհնազանդէր ամենեցուն, այլ ինքնիշխանութեամբ ունէր զհայրապետութիւն»[2] : Ինչպես կարելի է ենթադրել Սմբատ Սպարապետի այս հաղորդումից՝ հայոց իշխանապետը բավականին լավ կապեր ուներ Հռոմկլայի կաթողիկոսարանի հետ, մյուս կողմից՝ եթե Գրիգոր Քարավեժը հարմար թեկնածու չէր կաթողիկոսության ընտրության ժամանակ, ապա ինչու Լևոնը պետք է նրան աջակցեր կաթողիկոս դառնալու

[1] **Ա. Բոզոյան**, Կիլիկյան Հայաստանի քաղաքական զարթոնքի ազդակները (12-13-րդ դդ), Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Երևան, 2001, էջ 162:

[2] **Սմբատ Սպարապետ,** Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 209 :

հարցում: Չի բացառվում, որ մինչև կաթողիկոս դառնալը Լևոն իշխանի և Գրիգոր Քարավեժի հարաբերությունները բավականին ջերմ են եղել: Սակայն կաթողիկոս ընտրվելուց հետո հայոց հայրապետը հասկանում է, որ ապագայում հնարավոր է հայոց եկեղեցուն դավանաբանական լուրջ զիջումներ պարտադրեն, ուստի առանձին կարևոր հարցերում սկսում է առարկել հայոց մեծ իշխանապետին, չհնազանդվել, ինքնուրույնություն ցուցաբերել, որը, անշուշտ, չէր կարող անհետևանք մնալ: Շատ կարևոր է նաև նշել, որ հատկապես այս շրջանից սկսած, Կիլիկիայի հայ իշխանական վերնախավը փորձեց իրեն ենթարկեցնել հայոց կաթողիկոսներին՝ պահանջելով նրանց գործուն աջակցությունը հայկական պետության արտաքին քաղաքական հարցերում[1]:

Խնդիրն նրանում էր, որ 12-րդ դարի 90-ական թվականներին Լևոն Մեծագործը փորձում էր որոշակի զիջումների գնով միջազգային ճանաչում ձեռք բերել և ճանաչվել արքա եվրոպական միապետերի կողմից, իսկ հայոց կաթողիկոսը հավանաբար ցանկանում էր պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցու ինքնուրույնությունը:

Ի տարբերություն նախորդ շրջանի՝ այս փուլում եկեղեցու և պետության հարաբերությունները խիստ սրվում են:

[1] **Ա. Սուքիասյան,** Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 62:

Փաստորեն հայոց կաթողիկոսը փորձում է պահպանել հայ եկեղեցու անկախությունը և ավանդական դիմագիծը: Իհարկե, դա շատ օրինական է, և ճիշտ, սակայն նրա հակաարևմտյան քաղաքականությունը հանդիպում է Լևոն իշխանապետի և, ամենայն հավանականությամբ, մի շարք այլ իշխանների դժգոհությանը, քանի որ Կիլիկյան Հայաստանում գրեթե միշտ գործել էին արևմտամետ դիրքորոշում ունեցողները Բացի այդ, 12-14-րդ դարերում Կիլիկյան Հայաստանի կախվածությունը արևմուտքից պայմանավորված էր նաև այն պարզորոշ հանգամանքով, որ շատ իշխաններ և հետագայում նաև երկրի արքաները արևմուտքի հետ կապվում էին խնամիական կապերով, իսկ մի մասն էլ՝ տնտեսական համագործակցությամբ ու սեփական շահերով: Հետազոտող Բակուրանը, խոսելով կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի աթոռակալության մասին՝ նշում է, որ նա, նախորդի եղբորորդին լինելով, կաթողիկոս էր դարձել տարիքով և խելքով մանուկ վիճակի մեջ[1]: Նման արտահայտության համար հեղինակը հավանաբար ի նկատի ունի այն հանգամանքը, որ հայոց հայրապետը միամտորեն գործեց և հետագայում վաստակեց մեծ քանակությամբ թշնամիներ:

Այս շրջանում Լևոնը Կիլիկիայի թագավորությունը ճանաչելու նպատակով շատ եռանդուն բանակցություններ էր

[1] **Բակուրան**,Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, Պէյրութ,1958 էջ 83, Գրիգոր Քարավերժը հայտնի է նաև Մանուկ անվանումով, Բ. Կիւլէսէրեան, Ծովք-Տլուք եւ Հռոմկլայ, Վիեննա, 1904, էջ 77:

սկսել և բյուզանդական կայսրության և Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչների հետ: Քանի որ հայոց կաթողիկոսը դեմ էր որևէ դավանական զիջման՝ Լևոնը որոշում է ազատվել կաթողիկոսից և հրամայում է եկեղեցական ժողով հրավիրել, որը սակայն տեղի չունեցավ: Արևելյան վարդապետերն պաշտպանելու էին հայրապետին՝ վիժեցնելու հայոց իշխանապետի ծրագրերը: Շուտով Գրիգոր Ե Քարավեժն ամբաստանվում է իր հակառակորդներից: Լևոն Բ-ի հրամանով ձերբակալվում է և ուղարկվում Կոպիտառ բերդը[1]:

Սմբատ Սպարապետը հաղորդում է, որ Լևոնը Սսի Հովհաննես եպիսկոպոսին ուղարկում է Հռոմկլա և ձերբակալել տալիս կաթողիկոսին[2]: Ավաղ միջնադարյան մյուս պատմիչների մոտ վերը նշված դեպքի մասին բավարար տեղեկությունների չենք հանդիպում: Չնայած

[1] **Սմբատ Սպարապետ**,Պատմութիւն, Մոսկուա,1856, էջ 106, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 141, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 187: Այդ մասին տես նաև՝ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ս, Էջմիածին, 2001, հ. Ա., սյուն 1761-1765, Ա. Հովհաննիսյան, Պետության և եկեղեցու հարաբերությունները Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում, Տարեգիրք Աստվածաբանության ֆակուլտետի, էջ 184: Կոպիտառը Կիլիկիայի հին և նշանավոր բերդերից է, որը գտնվում է Կիլիկիայի սահմանի վրա, դեպի Գամրաց աշխարհը տանող ճանապարհի վրա, Մ. Յովհաննէսեան,Կիլիկյան Հայաստանի բերդերն ու քաղքները,Վենետիկ, 1989 էջ 189:

[2] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 205-206:

կաթողիկոսական բերդի զինվորները զենք են վերցնում իրենց տիրոջը պաշտպանելու, սակայն Հովհաննեսի կողմնակիցներն ավելի զորեղ են գտնվում: Հարց է առաջանում՝ արդյոք Լևոնը, որպես Կիլիկյան պետության ղեկավար իրավունք ուներ մարդիկ ուղարկելու՝ հայոց կաթողիկոսին ձերբակալելու: Նախ և առաջ Հռոմկլայի կաթողիկոսարանը չէր մտնում Կիլիկիայի սահմանների մեջ, այլ՝ Եգիպտոսի սուլթանին ենթակա տարածքների մեջ[1]: Ճիշտ է Գրիգոր Ե Քարավեժը հայոց իշխանապետի օգնությամբ էր դարձել Ամենայն Հայոց Կաթողիկոս, սակայն ներկայացնում էր ողջ հայությանը: Հանուն արդարության պետք է նշել, որ նշված ժամանակաշրջանում հայոց հայրապետը կարող էր դիմել Եգիպտոսի սուլթանին.

Հաշվի առնելով այն փաստը, որ Հռոմկլայի կաթողիկոսարանը գտնվում էր Այուբյան սուլթանության տիրապետության վարչական սահմաններում և որոշակիորեն այս տարածքի տիրակալը՝ հայոց կաթողիկոսը ուներ որոշակի ստորակարգային պարտավորություններ սուլթանության հանդեպ, ապա Լևոնի այս քայլը կարող էր դառնալ նաև հակադրության հիմք այլ տերության հետ: Բայց նման բան տեղի չունեցավ: Այս խնդրի մասին կարող ենք լ հետևյալ տեսակետները առաջ քաշել.

1. Հնարավոր է, որ կաթողիկոսը դիմել է Եգիպտոսի սուլթանին, սակայն վերջինս ուշադրություն չի դարձրել կամ էլ

[1] **Ա. Հովհաննիսյան,** Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում, Երևան, 2018, էջ 80:

չի ցանկացել բարդացնել հարաբերությունները օրեցօր հզորացող Կիլիկիայի հայկական պետության ղեկավարության նկատմամբ: Միգուցե հաշվի է առնվել նաև Կիլիկիայի հայկական պետության կարևոր աշխարագրական դիրքը խաչակիրների և Եգիպտոսի առճակատումներում ընթացքում:

2. Հավանաբար կաթողիկոսը դիմել է, սակայն Լևոն Մեծագործը կարողացել է ճկուն դիվանագիտությամբ կարգավորել հարաբերությունները Եգիպտոսի սուլթանի հետ:

3. Կաթողիկոսը պարզապես չի դիմել, որպեսզի Կիլիկյան Հայաստան - Եգիպտոսի սուլթանություն հարաբերությունները չբարդանան:

Ամեն դեպքում շատ հավանական է, որ կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի և Լևոն Մեծագործի հակամարտությունը ծագել է նրանից, որ հայոց հայրապետը չի համաձայնվել հետևելու Լևոն Բ-ի և նրա համախոհների զիջողական քաղաքականությանը, անգամ հանձն չի առել կաթողիկոսական կնիքով և ստորագրությամբ վավերացնել հռոմեական եկեղեցուն հաղորդվելիք զիջողական հայտարարությունները[1]: Եվ սա առաջին դեպքն է, երբ հայոց կաթողիկոսին բանտ էին նստեցնում առանց քննության ու եկեղեցական ժողովի:

Լևոն Մեծագործի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հակամարտության մասին որոշակի տեղեկություններ ենք

[1] **Մ. Օրմանյան,** նշվ. աշխ., այուն 1755-1756:

հանդիպում նաև Անանուն Եդեսացու ժամանակագրության մեջ, որտեղ հեղինակը հետևյալն է պատմում.« Գահակալումից մեկ տարի անց որոշ քինախնդիր մարդկանց դրդմամբ Կիլիկիայի իշխան Լևոնը ձերբակալել տվեց նրան և բանտարկեց մի անմատչելի բերդում: Հետո նա զավթեց Հռոմկլան և հափշտակեց նրա բոլոր սպասքերն ու հարստությունը: Եվ այդ նախանձ մարդիկ, որոնք հեռու էին աստծուց, միջոց գտան վերացնելու պատանի կաթողիկոսին»[1]:

Շուտով Լևոն Մեծագործը թուղթ է գրում Հայաստանի հոգևորականներին՝ նրանց կարծիքն իմանալու ակնկալիքով, սակայն մինչ պատասխան ստանալը հայոց կաթողիկոսին գտնում են բերդի պարիսպների մոտ՝ անշնչացած ընկած, մեջքին՝ պարան[2] (այդտեղից էլ Քարավեժ՝ ժայռից ցած գլորված կամ գահընկեց արված):

Ինչ էր իրականում տեղի ունեցել:

Սմբատ Սպարապետ նշում է, որ Լևոնը չի ցանկանում բարդացնել հարաբերությունները կաթոլիկ տիրակալների հետ, ովքեր իրեն թագ էին խոստացել: Բացի այդ, շատ հավանական է, որ որոշ քաղաքական և հոգևոր անձինք ամբաստանում էին հայոց կաթողիկոսին Լևոն իշխանապետի մոտ և դա է հենց վկայում հաջորդ տեղեկությունը, որը կրկին

[1] **Անանուն Եդեսացի**, Եկեղեցական ժամանակագրություն, Հավելված Ա, Թարգմանությամբ Լ.Տեր-Պետրոսյանի, Երևան, էջ 192:

[2] **Սմբատ Սպարապետ**, Պատմութիւն, էջ 96, **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 145, Վարդան վարդապետ, էջ 139:

բերում է պատմիչ Սմբատը.« Գրէին առ Լևոն թե ոչ ունի սա իմաստութիւն վարել զհայրապետութիւն որպէս արժան էր »[1]: Այնուհետև նույն հեղինակը, շարունակելով իր միտքը, նշում է . «Մախացեալ ընդ նա աւագ մարդիկ գրեն առ Լևոն և չարախօսեցին զնմանէ երեքէ չորս անգամ, մինչև շարժեցին զպարոն Լևոն ի կամս իւրեանց...»[2]: Պատմիչներն ինչքան էլ փորձեն բացասական գույներով ներկայացնել կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժին, միևնույն է, դրանք բավարար չէին նման պատժի համար: Հակառակը, միգուցե հայոց իշխանապետը դիտավորյալ է օգնել երիտասարդ հոգևորականին՝ բազմելու հայոց հայրապետական գահին՝ հետագայում ամբողջությամբ իր վերահսկողության տակ պահելու համար, բայց կարճ ժամանակ անց Լևոնը համոզվեց, որ իր այդ հաշվարկում սխալվել է:

Փաստորեն պատմիչ Անանուն Եդեսացու տեղեկությունը մի փոքր տարբերությամբ համընկնում է Սմբատ Սպարապետի տեղեկության հետ: Համաձայն մեզ՝ Լևոն Մեծագործը այդքան էլ միամիտ մարդ չէր, որ միայն որոշ մարդկանց հաղորդած տեղեկության հիման վրա կատարար նման քայլ:

Այժմ անդրադառնանք կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի մահվան հանգամանքներին: Այսպես՝ Սմբատ Սպարապետը, Վարդան Արևելցին և Սամվել Անեցին

[1] **Սմբատ Սպարապետ,** Պատմություն, էջ 106:
[2] Նույն տեղում:

այնպես են ներկայացնում վերը նշված դեպքը, համաձայն որի հայոց կաթողիկոսը պարան է պատրաստել, որպեսզի գիշերը պատուհանից իջնի և փախչելու փորձ կատարի, բայց պարանը կտրվել է, և նա ընկել ու մահացել .« Ի գիշերի կամեցաւ ելանել եւ կախեալ ընդ բարձր պարիսպն, անկաւ եւ մեռաւ»[1]: Կարծում ենք, որ միջնադարյան հայ պատմիչները, իրենց երկերում նշյալ խնդրին անդրադառնալով և նման գնահատական տալով, փորձել են մեղմել իրավիճակը և ցույց տալ, թե հայոց մեծ իշխանապետը մեղավոր չէր կատարված դեպքի համար, և նրա մահվան պատճառը այլ է: Խնդրին անդրադարձել է նաև 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրներից մեկը[2], սակայն նա որևէ նոր տեղեկություն մեզ չի տրամադրում: Ներքոհիշյալ խնդրին անդրադարձել է նաև Անանուն Եղեսացին, ում տեղեկությունները կարող են նոր լույս սփռել այս ամնեի վրա: Նա նշում է. «Համոզելով նրան, թե իբր ուզում են փախցնել բերդից, գիշերով նրան իջեցրին բերդապարսպից, բայց քանի որ նա հաղթանդամ ու մեծամարմին մի երիտասարդ էր, պարանը որով նրան իջեցնում էին, կտրվեց, գուցե և ինչպես ասում են, կտրեցին և նա ընկնելով բարձրությունից մահացավ[3]>>: Շատ

[1] **Սամվել Անեցի Եւ Շարունակողներ,** Ժամանակագրութիւն, Ադամից մինչեւ 1776, Աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 231, Սմբատ Սպարապետ, էջ 106, Վարդան վարդապետ, էջ 139:

[2] Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Բ, էջ 343:

[3] **Անանուն Եղեսացի**, էջ 192:

հնարավոր է, որ այդպես էլ եղած լինի և կաթողիկոսի պարանը կտրած լինեին։

Ուսումնասիրվող խնդրին անդրադարձ են կատարել մի շարք այլ հետազոտողներ նույնպես։

Այսպես՝ Մ. Օրմանյանը, ում գրչին է պատկանում հայ եկեղեցու եռահատոր պատմությունը, նշում է, որ Գրիգոր Ապիրատը, Ներսես Լամբրոնացին, Հովհաննես Սսեցին և մի շարք այլ անվանի անձնավորություններ, ովքեր այդ ժամանակ ազդեցիկ հոգևորականներ էին, այլևս ուշադրության կենտրոնում չէին[1] ։ Հնարավոր է, որ այս նշանավոր հոգևորականները լարեին Լևոնին կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի դեմ, բայց կարծում ենք, որ պետք է լիներ շատ ավելի լուրջ ու հիմնավոր պատճառ, որի համար Լևոն Մեծագործը նման քայլի գնար։ Հնարավոր է, որ նրանք ևս գրգռել էին հայոց իշխանապետին կաթողիկոսի դեմ։

Ժամանակակից հետազոտողներից Վ. Վարդանյանը, կարծիք է հայտնում, որ չարախոսները հավանաբար լատինասեր իշխաններ էին և եկեղեցականներ։ Իսկ ըստ Կ. Մութաֆյանի՝ վերջինս չափից ավել անկախ է լինում[2]։ Հավանաբար հենց այդ պատճառով էլ տեղի ունեցավ երկկողմ հարաբերությունների վատթարացումը։

[1] **Մ. Օրմանյան,** նշվ. աշխ., Հ.Ա սյուն 1754։

[2] **Կ. Մութաֆյան,** Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 405։

Ըստ Ա. Սուքիասյանի հայոց կաթողիկոսը մահանում է կամ էլ սպանվում[1]: Ինչպես նկատում ենք, Ա. Սուքիասյանը հստակ չի խորամուխ եղել նշված խնդրի մեջ: Եվ, վերջապես, խնդրին անդրադարձել է նաև Բակուրանը, համաձայն որի Գրիգոր Ե Քարավեժի մահը նրա անփորձության հետևանք էր[2]: Այստեղ դժվար է հասկանալ, թե ինչ ի նկատի ունի Բակուրանը: Անփորձություն ասելով հավանաբար գիտնականը հուշում է, որ կաթողիկոսը չկարողացավ բարիդրացիական հարաբերություններ հաստատել Լևոն Մեծագործի հետ, որը օգնել էր վերջինիս բազմելու ամենայն հայոց կաթողիկոսի աթոռին, կամ էլ կարող էր լինել երկրորդ տարբերակը՝ այն, որ կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժը փորձել է պարանով իջնել ներքև և ընկել է ցած:

Ժամանակակից մյուս հետազոտողները այս դեպքի վերաբերյալ որևէ էական տեսակետներ չեն հաղորդում:

Ամեն դեպքում, ուսումնասիրելով միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները և հետազոտելով գիտական գրականությունը, շատ դժվար է հստակ գնահատական տալը: Ճիշտ է, մի կողմից հայոց կաթողիկոսի սպանությունը կարող էր կազմակերպված լինել Լևոն Մեծագործի կողմից, քանի որ դեմ էր արտահայտվել հայոց իշխանապետի վարած քաղաքականության որոշ գծերին, սակայն կարող է այլ

[1] **Ա. Սուքիասյան,** նշվ.աշխ., էջ 64:
[2] **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 83:

տարբերակ ևս լինել, քանի որ եթե իրականում Լևոնը ցանկանար վերացնել Գրիգոր Ե Քարավեժին, ապա նա ինչու պետք է հրապարակային ձևով ժողով փորձեր հրավիրել, դիմում հղեր արևելյան վարդապետերին, ձերբակալել տալ և ամբողջ մեղքը իր վրա գցել։ Կարծում ենք, որ ցանկության դեպքում հայոց իշխանապետը առանց աղմուկի կկարողանար հենց Հռոմկլայի բերդաքաղաքում կազմակերպել վերջինիս սպանությունը և ոչ ոք էլ նրան չէր կասկածի։ Շատ հավանական կարող է լինել այն տեսակետը, որ այդ սպանությունը կազմակերպած և իրականացրած լինեին որոշ հոգևորականների կողմից, որոնք փորձեցին օգտվել Լևոն Մեծագործի և կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի միջև առաջացած վեճից։

Ամեն դեպքում պետք է փաստել մեկ կարևոր հանգամանք, որ Լևոն Մեծագործի և կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի հարաբերությունների բարդացման արդյունքում հայոց հայրապետը կյանքից հեռացավ բավական երիտասարդ տարիքում, ինչը վնաս էր թե Կիլիկիայի հայկական պետությանը, թե Հայ Առաքելական եկեղեցուն, և թե Կիլիկյան Հայաստան-բուն Հայաստան հարաբերություններին։

Арам Оганесян, Из истории взаимоотношений Левона Великого и Григория Каравежа - Статья посвящена исследованию истории взаимоотношений известного государственного и политического деятеля Левона Великого и

католикоса Григория V Каравежа. На основании сведений средневековых источников в статье рассматриваются обстоятельства, при которых Григор Каравеж был избран армянским католикосом, и причины конфликта между католикосом и Левоном Великим. В статье мы также подробно касаемся вопроса о поисках Левоном Великим путей для урегулирования двусторонних отношений.

В заключении статьи рассматриваются обстоятельства смерти Григор Каравежа. Представлены существующие на сегодняшний день в современной научной литературе точки зрения.

Aram Hovhannisyan, From History Of Relationship Between Levon Metsagorts And Grigor Karavej - The article deals with the history of the relationship between the Cilician well-known state and political leader Lemon Metsagorts and Catholikos Grigor Karavej. Based on the medieval bibliographic sources the article focuses on the conditions under which Grigor Karavej was elected as the Catholikos and how a kind of misunderstanding was established between the prince Levon and the Catholikos Grigor. There is a detailed explanation of the fact of what measures the King undertook to overcome the difficulties and establish mutual understanding.The article also tries to reveal the reasons for the death of the Catholikos Grigor Karavej. A great consideration is given to the facts existing in the scientific literature ad well.

ԱՅԼԱԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր – Այլադավանություն, ազգային, հոգևոր, անվտանգություն, կրոնական գաղափարախոսություն, Աստվածաչունչ, Հիսուս Քրիստոս, Քրիստոնեություն, պետական կրոն, պավլիկյան շարժում, թոնդրակյան շարժում, Հայ Առաքելական եկեղեցի:

Այլադավանության առաջացմանը պետք է մոտենալ երկու՝ պատմական անհրաժեշտության և միտումնավորության տեսանկյուններից:

Այլադավանությունը պատմական անհրաժեշտություն է դառնում, երբ արդեն իրեն սպառում է իշխող կրոնական գաղափարախոսությունը, որը միաժամանակ շարունակում է պահպանել իր իշխող դիրքը: Նրա դեմ ցանկացած նոր կրոնական այլախոհություն համարվում է դատապարտելի, և նրա հեղինակները ենթարկվում են անողոք հալածանքների: Իշխող գաղափարախոսության պայմաններում հանդես եկող նորը արդեն պետք է դիտարկել այլադավանություն, բայց այնպիսին, որի հիմքում ընկած են ժողովրդասիրությունը, մարդասիրությունը, արդարությունը, հավասարությունը: Նման այլադավանությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Անկախ այն հանգամանքից, որ այն տվյալ իրավիճակում որակավորվում է աղանդավորություն, իշխող կրոնական հասարակական գիտակցությունից շեղում կամ անջատողականություն, միևնույն է, նա հաղթում է, քանզի բերում է նորը, որի ճշտությունն ըմբռնում է ժողովուրդը, և որը տեղի է ունենում կամոք Աստծո:

Այս տեսակետի ճշտության մեջ համոզվելու համար, մի փոքր խորանանք Քրիստոնեության առաջացման նախադրյալների մեջ: Փորձենք ապացուցել, թե ինչու, գնահատվելով որպես աղանդ կամ այլադավանություն իր սկզբնավորման պահին, Հիսուս Քրիստոսի գաղափարախոսությունը այնուհետև դարձավ համաշխարհային ուսմունք: Դրա համար կարելի է բավարարվել ընդամենը երկու փաստի մեջբերելով Նոր Կտակարանից՝ Հիսուսի Լերան քարոզը և նրա մուտքը Երուսաղեմ: Եվ սա այն պատճառով, որ դրանցով, ոչ առանց աստվածային կամքի, Աստծո որդին դնում էր մարդկության հոգեբարոյական վերափոխման գերխնդիրը, որը տվյալ պատմական իրականության մեջ չէր կարող ընդունելի լինել իշխող գաղափարախոսության կրողների կողմից, ուստի Հիսուսի քարոզները պետք է դիտարկվեին ոչ ընդունելի այլադավանություն և համարվեին մերժելի, բայց ոչ հանրության կողմից, որի համար նա ընդունելի էր ի սկզբանե որպես Մեսիա: Ուրեմն՝ նրա ուսմունքը, տվյալ պահին դատապարտվելով որպես այլադավանություն,

իրականում պատմական անհրաժեշտության հետևանք էր: Այժմ ներկայացնենք հիշյալ երկու փաստերը և վերլուծելով ապացուցենք հիշյալ տեսակետը: Այսպես՝ իր հետևից գնացող ժողովրդի մեծ բազմությունը տեսնելով՝ Հիսուսը լեռն է բարձրանում և իր մոտ են գնում իր աշակերտները, որոնց ներկայացնում է փաստորեն իր գաղափարախոսության հիմքերը: Դրանք են.

Առաջին. Սգավորների մխիթարվելու, հեզության, արդարության, մաքրության, խաղաղության անհրաժեշտության կարգախոսներ, որոնք համամարդկային արժեքներ են[1]:

Երկրորդ. Արդարությունը կենսագործունեության ամենագլխավոր պայմանն է, որի՝ իր աշակերտներին քարոզչությունը պետք է գերազանցի իշխող գաղափարախոսների՝ դպիրների և փարիսեցիների արդարության քարոզչությանը, որը կեղծ էր: Կասկած չի կարող լինել, որ այդ կեղծության համոզմունքն ուներ ժողովուրդը, որի ըմբռնողությամբ էր գործում Հիսուսը:

Երրորդ. Սպանությունը դատապարտելի արարք է, եղբայրասիրությունը՝ դրվատելի. «Ով իր եղբորը պարապ

[1] Նոր Կտակարան Մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Աւետարան ըստ Մատթէոսի, տե՛ս Աստուածաշունչ, Գիրք Հին եւ Նոր կտակարաններու, Հրամանաւ S. S. Վազգենի Առաջնոյ Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Եբրայական եւ Յունական բնագիրներէն թարգմանուած, Moscow, «Zeus¦»,«Major¦» itd.. 1994, էջ 5:

տեղը սրդողի, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: Ով որ իր եղբօրը Յիմար ըսէ, ատեանին պարտաւոր պիտի ըլլայ: Ով որ իր եղբօրը անմիտ ըսէ, գեհենի կրակին պարտաւոր պիտի ըլլայ»[1]:

Չորրորդ. Անբարոյականությունը կամ շնությունը դատապարտելի երևույթներ են, յուրաքանչյուր ոք պետք է կամք ունենա իր մեջ զսպելու նման ցանկությունը:

Հինգերորդ. Չարին բարությամբ հաղթահարելու, թշնամուն սիրելով՝ նրան բարեփոխելու գաղափարը:

Վեցերորդ. Բարի և ողորմած լինելու անհրաժեշտության ներշնչումը և այլն:

Մեկնության կարիք ունեն «Լերան Քարոզի» վերջում Հիսուսի արտասանած հետևյալ խոսքերը. «Այն որ այս իմ խօսքերս կը լսէ ու չի կատարեր, կը նմանի անխելք մարդու մը, որ իր տունը ավազի վրա շինեց»[2] :

Սա նշանակում է հորդոր՝ լսելու Աստծու նոր խոսքը, որն ուղղված է այլասերված բարքերի և սպառված հոգևոր քարոզների դեմ, որը բերում է Հիսուս Քրիստոսը, նշանակում է նաև հնի պահապանների կողմից նորի նկատմամբ անհանդուրժողականության աճ, որը պետք է ձգտեր ընդհանրության հասցնել մեսիան դատապարտելի այլադավանություն ընկալելու իր թյուր ըմբռնումը: Այլադավանություն, որը ժողովրդի սրտից էր գալիս և

[1] Նույն տեղում,էջ 5-6:

մտքից, բայց ոչ իշխող հոգևոր իշխանության: Ահա այս այլադավանությունը պատմական անհրաժեշտություն էր, որի ընդհանրության հասնելը կասկածից զերծ էր, քանզի հոգևոր, ֆիզիկական անվտանգության ամրապնդման նոր հիմքեր էր բերում, որոնք հետո պետք է բերեին ազգային անվտանգության ամրապնդման:

Իսկ իր Երուսաղեմ մուտքով Հիսուսն արդեն ծառանում է իրեն սպառող գաղափարախոսության դեմ բացահայտորեն: Դրանում համոզվելու համար բավարար կարելի է համարել հետևյալ մեջբերումը. «Վա՜յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ որ որբեւայրիներուն տուները կ'ուտեք ու մարդոց երեւնալու համար աղօթքը կ'երկնցնեք, անոր համար աւելի դատապարտութիւն պիտի ընդունիք: Վա՜յ ձեզի կեղծավո՛ր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պարտիք մէկը նորահաւատ ընելու ու երբ ըլլայ, զանիկա ձեզմէ երկու անգամ աւելի գեհենի որդի կ'ընեք: Վա՜յ ձեզի կո՛յր առաջնորդներ, որ կ'ըսեք թէ՝ Ով որ տաճարին վրայ երդում ընէ, նան մը չէ, բայց ով որ տաճարին մէջի ոսկիին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: Ո՛վ յիմարներ եւ կոյրեր, ո՛րը մեծ է, ոսկի՞ն, թէ տաճարը, որ կը սրբացնէ ոսկին: Եւ թէ. «Ու որ սեղանին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: Յիմարներ ու կոյրեր, ո՛րը մեծ է պատարա՞գը, թէ սեղանը, որ կը սրբացնէ պատարագը: Ուստի ով որ սեղանին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր

վրայ եւ անոր վրայի ամէն բանէրուն վրայ: Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ եւ անոր մէջ բնակողին վրայ: Եւ ով որ երկնքի վրայ երդում կ'ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ եւ անոր վրայ նստողին վրայ…»[1]:

Իշխող գաղափարախոսության սպասավորների կեղծավորությունը բացահայտելու Հիսուսի աստվածահաճո համարձակությունը, այսպիսով, միանգամայն հիմնավորված էր, քանզի այդ գաղափարախոսությունը իրեն լրիվ սպառել էր հոգևոր և ազգային անվտանգությունների առումներով: Նոր, այլընտրանքային գաղափարախոսությունը դարձել էր անհրաժեշտություն, որը տվյալ պահին, ժողովրդի համար աստիճանաբար դառնալով ընդունելի, չէր կարող լինել հանդուրժելի, ուստի այն դիտվեց վտանգավոր այլախոհություն, և Հիսուսը մատնվեց խաչի: Բայց նրա գաղափարախոսության՝ համամարդկային վեհ արժեքների ընդհանրության հասնելու նախապայմաններն արդեն ստեղծված էին, և նրա ուսմունքը առավել կենսունակ դարձավ իր իսկ խաչելությամբ և հիմք դարձավ հասարակական նոր գիտակցության:

Այս ամենից եզրակացությունը, այսպիսով, հետևյալն է. այլադավանությունը կարող է հանդես գալ որպես պատմական անհրաժեշտություն այն դեպքում, երբ իշխող գաղափարախոսության ինքնասպառման միտումներն

[1] Նույն տեղում, էջ 34:

արդեն մեծ մասամբ ընկալելի են և տեսանելի: Այն արդեն դադարել է հոգևոր անվտանգության երաշխիք հանդիսանալ, իսկ սա նշանակում է՝ նաև ազգային, քանզի հոգևորի փլուզումը ենթադրում է ազգայինի փլուզում նաև, քանզի յուրաքանչյուր ազգի անվտանգության հիմքը նրա համար ընդունելի դարձած գաղափարախոսությունն է:

Այսպիսով՝ այլադավանության դեմ պայքարը միշտ էլ եղել է, բայց նրա՝ պատմական անհրաժեշտությամբ պայմանավորված լինելու դեպքում այդ պայքարը ավարտվել է պարտությամբ: Եվ դրա լավագույն ապացույցն է Հիսուս Քրիստոսի առաքելության օրինակը:

Այժմ փորձենք գտնել այն հարցի պատասխանը, թե որ դեպքում է այլադավանության մերժումը և դատապարտումը պատմական անհրաժեշտություն: Բնականաբար, այն դեպքում, երբ ի հայտ է գալիս ոչ իրեն սպառած, այլ կենսունակ հոգևոր գաղափարախոսության առկայության պայմաններում և ունի միտվածություն՝ քայքայելու այն:

Հայաստանում քրիստոնությաունը՝ որպես պետական կրոն, ընդունելուց հետո աստիճանաբար դարձավ ազգային, որին քիչ չնպաստեց հայոց գրերի գյուտը: Այս մեծ իրադարձությանը հաջորդեց Թարգմանչաց շարժումը, որի արդյունքում ծնվեց հայատառ Աստվածաշունչը՝ Թարգմանությունների Թագուհին: Աստվածաշնչի թարգմանությամբ ժողովրդի ավելի լայն զանգվածներին հասու դարձավ Հիսուսի ուսմունքը: Քրիստոնեության

ազգայնացմանը նպաստեցին նաև հայոց եկեղեցական ժողովները, որոնցից մասնավորապես 354թ. Աշտիշատի ժողովը, հեթանոսական շատ ծեսեր սրբագործելով, քրիստոնեական գաղափարախոսությունն էլ ավելի մոտեցրեց հայոց հոգիներին: Աստիճանաբար հայոց մեջ սերմանվելով՝ այս ուսմունքը դարձավ հայապահպանության երաշխիք, որի ամրակուռ պահելու գիտակցությունը ուղիղ համեմատական էր ազգապահպանության գիտակցությանը: Այս պայմաններում ցանկացած այլադավանություն կամ կրոնական այլախոհություն պետք էր դիտարկել որպես վտանգ պետականությանը կամ ազգապահպանությանը, այլ արտահայտությամբ՝ ազգային անվտանգությանը: Ուստի պայքարը դրանց դեմ քրիստոնյա Հայաստանի և հայության ողջ պատմության ընթացքում պետք է դիտարկել անհրաժեշտ և օրինաչափ: Փորձենք ապացուցել այս ամենը՝ անդրադառնալով հայոց ազգովին քրիստոնյա լինելու պայմաններում առաջ եկած հերձվածներին, այլադավանության կամ աղանդավորության էությանը և նպատակներին, քանզի կհամոզվենք, որ, իրոք, դրանք վտանգում էին հայի ինքնությունը և անվտանգությունը:

Կրոնական գաղափարախոսության՝ որևէ ժողովրդի գերակշռող մեծամասնության կողմից ընդունելի լինելու դեպքում այլադավանությունը, ինչպես պարզ դարձավ, հետամուտ է մեկ գլխավոր նպատակի՝ որքան հնարավոր է քայքայել այդ գաղափարախոսությունը և վտանգել տվյալ

ժողովրդի ազգային անվտանգությունը: Հարկավ, կարող են լինել այնպիսի կրոնական այլախոհներ, որոնք խնդրին կմոտենան իմաստասիրական տեսանկյունից, առանց արտաքին ներշնչող ուժերի՝ փորձելով տեսական հիմքեր կառուցել ժխտողականության սկզբունքով: Բայց կարծում ենք, որ դրանք նույնպես դատապարտելի են, եթե պետական կրոնը ժողովրդի համար բացարձակապես ընդունելի է:

Քրիստոնեության՝ որպես հայոց պետական և ազգային կրոնի ամրապնդման գործընթացին զուգընթաց, մեր պատմության ընթացքում ծագել են նրա որոշ դրույթներ ժխտող կամ նրանից շեղվելու անհրաժեշտությունը հիմնավորել փորձող այլադավան ուսմունքներ: Փաստորեն դրանք վերաբերել են՝ ա. ամբողջ գաղափարախոսությանը, բ. նրա առանձին ծեսերին, հիմնավորումներին և, բնականաբար, նաև Եկեղեցուն:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ դրանք ծագել են Հայաստանի ներսում և կամ եղել են արտաքին ազդեցությունների հետևանք: Հարկավ, մենք նորից չենք անդրադառնա այս այլադավանությանն ամենայն մանրամասնությամբ, այլ կփորձենք բացահայտել բացասական հետևանքները ազգային անվտանգության առումով:

Այսպես՝ 7-րդ դարում սկզբնավորվում է պավլիկյան շարժումը՝ սկզբնական շրջանում կարծես սոսկ դավանաբանական այլակարծության հիմքով, բայց

աստիճանաբար այն կրում է քաղաքական ուղղվածություն: Պավլիկյան շարժումը ծագել է Արևմտյան Հայաստանում, ապա տարածվել է Բյուզանդական կայսրության արևելքում, նաև թափանցել է Արևելյան Հայաստան: Այս աղանդի պատմությունն սկզբից մինչև 869 -870թթ. գրել է հույն վանական Պետրոս Սիկիլիացին[1]:

Հարկ ենք համարում շեշտել, որ պավլիկյան աղանդը իր էությամբ հակաքրիստոնեական չէր, բայց միտվածություն ուներ հարվածելու Հայ Եկեղեցուն, որը՝ որպես հոգևոր իշխանություն, կատարում էր ազգահավաքման և ազգապահպանման դեր: Սակայն, ընդունելով Հիսուսին, նրանք միանգամայն այլ կերպ էին բացատրում նրա ծագումն ու էությունը: Հայտնի է, որ նրանք ընդունում էին երկու՝ Բարի և Չար աստվածների: Այն, ինչ տեսանելի էր, նրանք համարում էին Չար Աստծո ստեղծածը, իսկ անտեսանելին՝ Բարու, որը վերաբերում էր բանականությանը: Ըստ նրանց՝ Քրիստոսը Բարի, երկնային Աստծո որդին էր: Նրանց կարծիքով, Քրիստոսն իր մարմինն իր հետ բերում է երկնքից, իսկ Մարիամը սոսկ խողովակի

[1] Բնագրի քննությունը տես Ch. Astrue, W. Conus – Wolska, J. Gouilliard, P. Lemmerle. D. Papachryssanthou, J. Paramelte, Les sources grecques pour l'istoire des Pauliciens d'Asie Mineure, «Travaux et Memoires», du Centre de Recherche d'Histuoire et Chivilisation byzantines, No 4, Paris,1970, p. 7- 67, P. Бартикян, Источники для изучения истории павликянского движения, Ереван, 1961,с. 117- 150, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1 – ին, Երևան, 1981, էջ 743 – 769:

դեր կատարեց, որի միջով նա անցավ, ուստի նա աստվածածին չէ: Սրանով նրանք փաստորեն հակադրվում էին Նոր Կտակարանի դրույթներին, որոնք ընդունելի էին Հայոց Եկեղեցու կողմից: Նրանք Հին Կտակարանն ամբողջությամբ մերժում էին՝ համարելով սատանայի ստեղծագործություն, մարգարեներին համարում էին ավազակներ և մոլորեցնողներ, չարի սպասավորներ, մերժում էին նաև եկեղեցին՝ այն համարելով դևերի կացարան, ինչպես նաև հոգևորականների ամբողջ դասը, մկրտությունը, հաղորդությունը և այլն: Նրանց գաղափարախոսության մանրամասն վերլուծությունը թողնելով այլ առիթի՝ պարզապես ուզում ենք հետևյալ եզրակացությունները մատուցել.

Առաջին. Մի կողմ թողնելով այդ գաղափարախոսության վիճահարույց կողմերը՝ պետք է պնդել, որ կրոնը չի կարող իր ազգապահպանման առաքելությունը իրագործել՝ առանց ունենալու իր հաստատությունը, տվյալ դեպքում եկեղեցին: Առանց հոգևոր հաստատության և նրա գործառույթների՝ չի կարող ընդհանրության հասնել հոգևոր միավորման անհրաժեշտության գաղափարը:

Երկրորդ. Նրանց գաղափարական առաքելությունը իրականում միտված էր քաղաքական առաքելության, այսինքն՝ փոխարինել Հայոց Եկեղեցուն կամ իշխող կրոնական գաղափարախոսությանը՝ աստիճանաբար իր ձեռքը վերցնելով նրա հոգևոր իշխանության գործառույթները:

Երրորդ. Պավլիկյանները բերում էին այլադավանություն, որը վտանգավոր էր ոչ միայն հոգևոր, այլև ազգային անվտանգության տեսանկյունից, ուստի և մերժելի էր:

Ասվածն ավելի հիմնավորելու համար դարձյալ անդրադառնանք Թոնդրակյան աղանդին: Այն ծագել է 9-րդ դարում՝ հիմնադիր ունենալով Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից Սմբատ Զարեհավանցուն, որն իր աղանդի կենտրոն դարձրեց Թոնդրակ ավանը: Ըստ Գրիգոր Մագիստրոսի՝ նա իր «չար մոլորութիւնը՝ սովորել է՝ ումեմնէ պարսկական բժշկէ և յաստղեբաշխէ մոգէ զոր Մջուսիկդ կոչէք»[1]:

Զանց առնելով նրա գործունեության մանրամասները՝ ներկայացնենք այս աղանդի գաղափարախոսության այն կողմերը, որոնք դարձյալ վնաս էին ազգապահպանման այն հայեցակարգին, համաձայն որի՝ քրիստոնեությունն է մեր արժեքային համակարգի հիմքը, նա է մեր ազգային անվտանգության հիմնական երաշխիքը, մանավանդ պետականության բացակայության ժամանակաշրջանում: Իսկ ահա Գրիգոր Նարեկացու վկայությամբ, թոնդրակյանները ուրացել էին «բազում ինչ աստվածային և ամենայն ինչ առաքելական» էր[2]:

[1] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրոպոլ, 1910, էջ 153:
[2] Գիրք թղթոց, Տփղիս, 1901, էջ 499:

Փաստորեն, նրանք ժխտել են Հայ Առաքելական Եկեղեցին և հավատամքը: Նույն Նարեկացին, 14 կետերով թվարկելով նրանց ուսմունքի հիմնական կողմերը, վերջին կետով հաստատում է, որ աղանդի կողմնակիցները Քրիստոս են համարել իրենց աղանդի գլխավորին՝ այսպիսով այն համոզմունքը փորձելով առաջ բերել, որ Քրիստոսը Աստված չէր, և Զարեհավանցին պահանջել է, որ իրեն երկրպագեն որպես Աստծու և Քրիստոսի[1]:

Զարեհավանցու կրոնական գաղափարախոսության առանձին դրույթների քննադատությունը հիմնավոր էր այն տեսանկյունից, որ նրանք նույնպես, ինչպես պավլիկյանները, ընդդեմ Հայոց Եկեղեցու, որը ժողովրդի կողմից ընդունելի հոգևոր հաստատություն էր, ստեղծում էին իրենց սեփական հաստատությունները՝ փաստորեն պառակտելով հավատի և ազգի միասնությունը: Դրանում մի ավելորդ անգամ համոզվելու համար բավական է Լաստիվերցու այն վկայությունը, որ թոնդրակյանները, ձևացնելով, թե մեր կրոնին են հետևում, մոլորեցնում էին անմեղների միտքը, քանի որ նրանց խոսքերը քաղցկեղի նման էին, և ինչպես դժվար էր այդ ախտի բուժումը, այնպես էլ նրանց գաղափարախոսությամբ բռնվածների, որոնք

[1] Նույն տեղում, էջ 499 - 501:

«հազիւ կարեն կալ յակաստանի»[1] (հազիվ թե անվտանգ մնան – Գրիգոր աբեղա Խաչատրյան.):

Ինչպես դարձյալ համոզվում ենք, նրանք խփում էին հայի հոգևոր և ազգային անվտանգությանը՝ արհեստականորեն գործելով ինքնամատուցման այն ճանապարհով, որ իրենք կարող են լինել այդ անվտանգության երաշխիքը:

Այսպիսով՝ թոնդրակյանների այլադավանությունը հակադարձ համեմատական էր հայ ժողովրդի հոգևոր միասնության գաղափարին, որի բացակայությամբ սասանվում են նրա ազգային անվտանգության հիմքերը:

Այլադավանությունը հաճախ ներմուծվում է նաև դրսից՝ պայմանավորված թշնամի տերության աշխարհաքաղաքական շահերով: Դրանում համոզվելու համար բավական է բերել Կիլիկիայի հայկական թագավորության վերջին շրջանում ժողովրդի հոգևոր կյանքում առկա խմորումների օրինակը, որոնք հրահրում էր Բյուզանդական կայսրությունը: Խնդիրը վերաբերում էր նրան, որ իշխող քաղաքական ուժերը 14-րդ դարի սկզբներից լուրջ տարաձայնություններ ունեին հարևան տերությունների նկատմամբ կողմնորոշումների երկփեղկվածության պատճառով: Մասնավորապես Օշինի (1308 - 1320) գահակալման շրջանում երկրում ուժեղացան

[1] Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցվոյ, աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 133:

լատինամոլ տարրերը, որոնց թաքուն հրահրում էր Բյուզանդիան: Վերջիններս, որոնց մեջ մտնում էին արքունիքի հեղինակավոր անձինք, նույնիսկ որոշ բարձաստիճան հոգևորականներ, սկիզբ դրեցին այսպես կոչված ունիթորական հոսանքին, որը կարելի է դիտել որպես այլադավանություն, քանզի փորձում էր հիմնավորել Հայ Եկեղեցուն Հռոմի պապին ենթարկելու անհրաժեշտությունը: Սա նշանակում էր հրաժարում առաքելահաստատ հավատից, որի դեմ դուրս եկավ հոգևորականության և ժողովրդի մեծ մասը: Նույնիսկ 1307թ. Սիս քաղաքում տեղի ունեցած ժողովը որոշում է կայացնում այդ մասին, որը հանգեցնում է ընդվզումների Ադանայում 1308 և 1309թթ.[1]: Պապի դրդմամբ 1316թ. Ադանայում տեղի ունեցավ նոր ժողով, որի նպատակն էր ընդունել տալ նրան ենթարկվելու կամ փաստորեն կաթոլիկություն ընդունելու որոշումը, որին ձգտում էր Օշինը, ինչպես նաև Կոստանդին կաթողիկոսը: Այն նույնպես հանգեցրեց ցույցերի և բողոքների, որոնք թագավորի կողմից ճնշվեցին, բայց բացառեցին սեփական հավատը փոխելու քայլերի հնարավորությունը նաև հետագայում: Այս ամենը, ներմուծված լինելով դրսից և ազգային անվտանգության կեղծ երաշխիքի հույսեր ներշնչելով, միայն այն հետևանքն ունեցավ, որ մեծ հարված հասցրեց այդ անվտանգությանը, հասրակությանը, իշխող քաղաքական և հոգևորական

[1] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, մաս Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1813-1814 :

ուժերին պառակտեց, ինչն իր նշանակությունն ունեցավ այդ ինքնատիպ և հզոր պետականության անկման գործում 1375 թ-ին: Այսպիսով՝ այլադավանության արտաքին և ներքին քարոզչությունը ուժգին հարված հասցրեց հայ ժողովրդի հոգևոր և ազգային միասնության գաղափարին, որի հետևանքները ավելի ուշ գիտակցվեցին: Ավելի ամրապնդվեց այն համոզմունքը, որ Հայոց Առաքելական Եկեղեցու հանդեպ հավատի անսասանության մեջ պետք է փնտրել նրա գոյատևման հիմնական երաշխիքներից մեկը:

Եվ վերջապես, կարևոր ենք համարում նաև անդրադառնալ այն խնդրին, թե այլադավանությունն ինչպիսի հարված է հասցնում մեր հոգևոր և ազգային անվտանգությանն այսօր: Խորհրդային Միության փլուզումից հետո, հայտնի է, որ նախկին խորհրդային շատ հանրապետություններ, այդ թվում նաև Հայաստանը, հայտնվեցին այլադավանության գրոհի վտանգի տակ: Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ.

Առաջին. ԽՍՀՄ փլուզումով արտերկրի բազում աղանդավորական կամ այլադավանական կազմակերպություններ իրենց համար գտան գործունեության լայն և խոպան դաշտ:

Երկրորդ. Այդ գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծեցին մարդու իրավունքների գերակայության վերաբերյալ կարգախոսները, որոնք,

բնականաբար, տարածվում էին նաև դավանանքի ազատության վրա:

Երրորդ. Հայ ժողովրդի սոցիալական դժվարին կացությունը, որի պայմաններում հեշտանում է հոգևորսությունը, մանավանդ եթե ընթանում է նյութապես շահագրգռելու զուգորդությամբ:

Չորրորդ. Քաղաքական նպատակադրումներով պայմանավորված՝ այլ կրոնական գաղափարախոսություն կրող դրսի կազմակերպություններ ձգտում են պառակտել մեր ազգը, սասանել նրա հավատը, որը մասամբ նրանց այսօր հաջողվում է:

Եվ եթե այսօր Հայաստանում տասնյակ հազարավոր հայեր շեղվել են իրենց Եկեղեցուց և հավատից, ապա նրանց համար երկրորդական է դարձել ազգային անվտանգության խնդիրը: Նրանց հոգևոր վերադարձը դեպի Հայ Առաքելական Եկեղեցու գիրկ հայոց նորանկախ պետականության անսասանության ամենակարևոր գրավականներից է:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ գալիս ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին.

Առաջին. Այլադավանությունը անհրաժեշտ և պատմական անհրաժեշտություն է դառնում այն ժամանակ, երբ իշխող կրոնական գաղափարախոսությունն իրեն արդեն սպառում է հոգևոր և ազգային անվտանգության տեսանկյուններից:

Երկրորդ. Կրոնական գաղափարախոսությունը երբ ժողովրդի մեջ հասնում է ընդհանրության, նրա դեմ ուղղված բոլոր այլ գաղափարախոսություններ պետք է դիտարկել որպես ազգային ինքնության քայքայմանը միտված վտանգավոր և դատապարտելի փորձեր:

Երրորդ. Դավանանքի ազատությունը այնքան ժամանակ կարող է լինել հանդուրժելի, եթե այն չի վնասում այնպիսի հոգևոր – մշակութային արժեքների, որոնք հատուկ են տվյալ ազգին, ժամանակի մեջ քննություն են բռնել, դարձել են ինքնության պահպանման երաշխիք:

Այլադավանության դեմ պայքարի գիտակցությունը պետք է հասցնել ընդհանրության, եթե հայության ազգային անվտանգությանը վտանգ է սպառնում:

Григор Абега Хачатрян, Борьба с инакомыслием как важнейшее условие национальной и духовной защиты - В статье представлен ущерб гетеродоксии, которая часто приравнивается к сектантству, для некоторых народов и, в данном случае, для армянского народа. В частности, в отсутствие государственности Армянская церковь боролась с неортодоксальностью, как-то способствовала сохранению армянской духовной и национальной идентичности, которая серьезно пострадала от различных сектантских организаций. В статье развивается идея о необходимости борьбы с ними.

Grigor Abegha Khachatrian, The Struggle against the heterodoxy as the most important condition of the national and spiritual protection - There is presented in the article the damage of heterodoxy, which is often equivalent to sectarianism, to some peoples and in this case to Armenian people. Particularly in the absence of statehood, the Armenian Church struggled against the heterodoxies, somehow contributed to the preservation of Armenian spiritual and national identity which has been seriously damaged by various sectarianistic organisations. The article develops the idea of necessity to struggle against them.

THE PHILOSOPHY OF ETHICS PRESENCE IN THE MANAGEMENT ACTIVITY

NONNA KHACHATRYAN, FARNOOSH KHOSHBAKHT

Keyword - management activity evaluation, ethics in management, ethics philosophy, decision making, management science.

Introduction: From the beginning to the end of his life, man naturally perceives and tends to ethical values; therefore, ethical research has always been one of the main concerns of scholars. Today, the technological development of industrial societies and the complexity of human relationships, as well as the emergence of ethical crises in such societies, have necessitated more research and in various aspects of ethics (Sharifi, 2005)[1]. Managers as those who are in higher levels and responsibilities will need to adhere to ethical principles and issues more than others. In the field of ethics, various sciences have emerged, each of which deals with a particular aspect. One of these is the science of ethics philosophy. Philosophy of ethics is a science that deals with the conceptual and deceptive principles and general good and bad criteria in

[1] **Ahmad HosseinSharifi,** The book "Ayin e zendegi (akhlaghekarbordi). p. 5-15.

ethics (Teacher 2004)[1]. In our time, one of the most challenging topics in management topics is the philosophy of ethics. The philosophy of ethics discusses the good and bad things about the ethical duties and why these assignments are to be done and what is the purpose of these duties (Hussein Zaki,2004)[2].

Ethics considers a main question: What is right, proper and fair? This question is especially crucial for managers whom their decisions affect the people and society. Ethics in management is based on the fact that how our relationship with the members of the community in which we are active is and how it should be focused. Undoubtedly, the most important and most sensitive issue in management is creating a balance between economic performance and social performance for any ethical decision (Hosmer 2005)[3]. Management science or research in action has made many advances over the past 20 years in the areas of social systems, human systems and soft systems, which indicates that this discipline is directly related to the mission and the concerns of the business ethics movement. In fact, what is called science is a knowledge that identifies various phenomena and overlays

[1]**HasanMoallemi,** "Falsafeyeakhlagh", p. 93-80.
[2]**HosseinZakiNazer,** "Falsafeyeakhlagh", p. 40-42.
[3]**Hosmer,L.T.** "Ethics in management". p. 90-93.

the relationships between these phenomena and represents quantitative methods and formulas and techniques that can serve as a tool for the principles and basic relationships of management. On the other hand, due to the strategic nature of management science in helping to make decisions in the human domain, this science can affect other classes of society, the environment and nature in comparison to other sciences, and are becoming effectiveness more and more every day.

The most important role of ethics is in the practical decision. Ethics plays a decisive role in shaping the decision and setting the process of its formation. Failure to observe ethics in decision making process causes a lot of damage to the individual and society. Laws and penalties alone have not been able to convince the community of the optimal behavior. In this regard, the ethics based on the divine culture can make the decision-making system optimal and healthy.

Regarding these cases, which express the importance of ethics in all sciences and in particular the science of management, this article answers the fundamental question: "What is the role of philosophy of ethics in management, and in particular the science of management?"

EthicsEssence in Management: Ethics are the rules of every society that reflect on its behavior. How to apply ethics to specific cases is the same as practical ethics that includes economic ethics, medical ethics, environmental ethics, scientific ethics, ethics in organization and management, and ethics in management science (operational research).

The scientists of economics and management consider the most important task of management as decision making. This task is considered to be the best and most original role of the director. Making choices become more complexsince there are various solutions, widespread outcomes, unpredictable probabilities and job arguments that are inseparable from these decisions. Therefore, it is necessary to use various methods to decide on these issues and solve them.

What we consider as fair, just and right actions should be based on ethical decisions. In order to comply with ethical principles in decision making, we must necessarily analyze the problem with respect to triple methods: economic, legal, and philosophical.

Philosophy of Ethics in Management Science: Management has a great concept because it is a human manager who deals with people. Man himself is an inventorywhich is unknown and has different mental and physical dimensions. Now, the point is that management is

the way to deal with such an inventory and enter into issues that arise from it and the manager is the person who needs to deal with such an inventory. One of the key points in decision making is attention to the social environment and its values. Therefore, in any decision making which are related to the real world of human beings, we will face with a huge number of criteria that make up the complexity of the problem.

Therefore, any decision in the human or socio-economic framework should be effective on three indicators: logic, mentality and ethics. In fact, in each process of modeling associated with research in operations and decision making, in order to guarantee the ethics of any decision, in addition to the logic, it should be considered simultaneously with two other indicators. Therefore, in order to improve decision-making efficiency, decision-makers should be free to act, and patterns must include mentality, feelings, experience, and judgment ofdecision-makers. On the other hand, the rationale and rationality of the optimal answer to social-economic decision making is not appropriate. In every human socio-economic framework, not only is the issue of maximizing profit, but also criteria such as social welfare, management of wasting and pollution minimization, are important as well. Figure 1

shows how the decision of individuals is under the influence of three indicators of logic, ethics, and mentality.




Figure 1.three effective indicators on managers' decision-making [1]

Also, considering that the main framework of management science is based on modeling, one of the important ethical issues in OR is morality in modeling. Ethics discusses modeling of topics such as codes and ethical standards for modelers, the correctness and accuracy of the template (stable algorithm). Ethical guidelines state the general accepted behavioral principles that members of each profession pursue in their professional tasks,

[1] Composed by author

whether in research, or education (Gass, 2009)[1]. Also, value means what is important to us. This means that values must be the driving force behind our decisions, and the time and effort that is used to make decisions must be based on values.

Ethical philosophy searches for appropriate answers to dozens of questions that arise from ethical propositions and explains questions such as the nature of the moral act and the criterion and criterion of moral value.In the light of this management, the manager can choose the right path and appropriate methods for any ethical solution by introducing values and ethical principles in decision making tools and models.

On the other hand, some scholars identify a number of ways in which they can combine ethical issues with the logos (Brooksby, 2009)[2]. Three major approacheshave been proposed in this regard, which is described below:

- The method of removing undesirable options: Suppose that set A contains all possible options for follow-up. A={ai, i=1,2,…,n} and n are the number of available options, then one of the methods is those choices that are not sufficiently consistent with the values and defined principles can be deleted from the beginning ; that “ai” that does not match the values are being

[1]**Gass SI,** Ethical guidelines and codes in operations research, Ethics and Operations. p.1104.

[2]**Brocklesby J (2009).** Ethics beyond the model: How social dynamics can interfere with ethical p. 1037- 1082.

deleted from the beginning and are not taken into the decision making process. This method is one of the simplest methods that can easily be used to achieve ethical goals. (Sajjadpoor, 2005)[1]

- Adding additional constraints to the decision-making pattern: The second approach to determining values and ethics in the decision-making process, is adding the Indicators called Guiding Principles to the patternand to the Limits as new constraints. In this case, it can be admitted that achieving the optimal solution passes just through the evaluation of ethical issues and values. In operational research patterns, to account for such factors, a new mathematical limitation can be added to the model to include specific cases. Take an example in this regard, in which the decision issue is only due to a single-criterion linear programming is modeled:

$$MIN \{ Cx/ Ax>b , x>0\} \text{ and } x: \{x1, x2,\ldots,xj,\ldots,xn\}$$

x represents a certain level of j activity . If in this model, the value and ethical requirements (such as observance of environmental issues) prevent the development of n activities to a maximum total equivalent of K, then to apply this requirement, the following restriction may be added to the following restrictions: $a1x1+a2x2+\ldots+ajxj+\ldots+anxn<k$. aj is the amount of

[1]**Mehdi Sajjadpoor,** "jaygah e arzsh ha vaosul e akhlaghidarayandenegariefannavari". P 61-84.

pollution caused by an activity unit j. Such additional restrictions can also be considered for other factors. Considering such a restriction in the pattern will make the justified area more limited, difficult but ultimately decided to conform to the real world situation

- Evaluate and prioritize the options: Suppose that the decision maker has converted its decision to a multi-criteria equation, k:

$$Fj(.),\ k=1,2,\ldots,k$$

Suppose that A is a selectable and limited choices set as: A: {ai , i=1,2,…,n}.

The method that Dr. Burns introduces as the "Guy's Promise", solves it by adding new information to this multi-criteria question.This information includes, a: information between the criteria (weight of the relative importance of each criterion or Wi), and b: information within the criteria (the preferred function of each decision a relative to the other decision b). In the following, Gaia's prompting method, by comparing the pair of options, decides to prioritize them and, through the software, analyzes inputs, and thus and after prioritization of decision choices can be made to choose the right ones. Now, with these discussions, choosing the right options to involve a variety of values in decision making should be chosen.

Conclusions:

- The most important task of management is decision making. Management provides tools for managers to make better decisions.
- Managers' decisions have a lot of impact on humans and the surrounding environment, and if managers are only considering logical indicators in their decisions, it may be possible to bring serious harm to the social strata and even the surrounding environment to achieve these pure logical issues.
- Ethics in management science by providing some ethical principles and standards for designers of decision-making models can help to create patterns that are in the public interest
- Ethical issues create standard patterns for managers in any profession which following them by managers makes the interests of society and the environment perceived and, in other words, makes a balance between economic and social performance.
- Providing ethical codes for any business by the management system is considered as a crucial task. Ethical codes help in two sides, first. They make the corporatios.n possible inside the organization. Second, these codes, correspond the organization's goals and activities with the social and environment interest

Նոննա Խաչատրյան, Ֆարնուշ Խոշբախտ, էթիկայի դրսևորման փիլիսոփայությունը կառավարման

գործառույթներում - Հոդվածում փորձ է արվում ներկայացնել էթիկայի հիմնախնդիրները, որոնք առնչվում են կառավարման գիտության շրջանակում սոցիալական արժեքների մեկնաբանմանը, որոշումներին եւ սկզբունքներին Կարեւորվել է կառավարման գիտության դերը որոշումների կայացման գործընթացում եւ դրա մեջ վարքագծային սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը: Արդյունքում մեկնաբանվել է կառավարման գործառույթներում էթիկայի դրսևորման փիլիսոփայության էությունը: Հետազոտության արդյունքներն ընդգծում են կառավարման գիտության մեջ էթիկական արժեքների օգտագործման անհրաժեշտությունը, նպատակ ունենալով բարելավելու կառավարումն ու իրատեսական որոշումների կայացումը, հիմնված համայնքային արժեքների վրա: Այս առումով, կառավարման մոդելներում որոշումներ կայացնելիս առաջարկվում է վարքագծային մի շարք մոտեցումներ:

Нонна Хачатрян, Фарнуш Хошбахт, Философия проявления этики в функциях управления - В статье предпринята попытка представить этические проблемы, связанные с интерпретацией, принятием решений и принципами социальных ценностей в рамках науки управления, а также роль науки управления в процессе принятия решений и необходимость поддержания поведенческих принципов. Сущность философии этики в

управленческих функциях была истолкована. Результаты исследования подчеркивают необходимость использования этических ценностей в науке управления с целью улучшения управления и реалистичного принятия решений на основе общественных ценностей. В связи с этим в моделях принятия решений предлагается ряд поведенческих подходов.

ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ

Ռիգայի բանակցությունները

Ռիգայի բանակցությունները տեղի են ունեցել Հ. Յ. Դաշնակցության կողմից Ա.Ջամալյանի, Վ. Նավասարդյանի և Վ. Փափազյանի, ՌԿԿ – ի կողմից՝ Ա. Իոֆեի, Ս. Տեր Գաբրիելյանի և Վ. Տեր – Վահանյանի միջև 1921թ. հուլիս ամսին: Բանակցությունների հիմքում դրված էր մի փաստաթուղթ, որով ՌԿԿ – ն պարտավորվում էր ազդել ՌՍՖՍՀ կառավարության վրա, որպեսզի վերջինս Թուրքիային շահագրգռի Հայկական հարցի լուծմամբ, որը նշանակում էր Արևմտյան Հայստանից տարածքներ հատկացում Արևելյան Հայաստանին՝ հայ ժողովրդի գոյության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով, նույնիսկ ելք ապահովել դեպի ծով, անհրաժեշտության դեպքում ճանաչել Հայաստանի անկախությունը և այլն: Դաշնակցությունն էլ պետք է որդեգրեր ռուսական կողմնորոշում և նրա գործունեությունը լեգալացվեր: Սակայն այս բանակցությունները ձախողվում են և խորհրդային Ռուսաստանը հիմք ընդունելով Մոսկվայի պայմանագիրը՝ արգելում է դրանց շարունակությունը: Ռիգայի բանակցություններին Լ. Խուրշուդյանն անդրադարձել է իր «Հայկական Հարցը» գրքույկում(Երևան, 1995): Ակադեմիկոսի որդին՝ պատմաբան Ռուբեն Խուրշուդյանը մեր հանդեսում հրատարկելու համար նրա արխիվից տրամադրել է այս

բանկցություններին առնչվող արխիվային հետաքրքիր նյութեր, որոնք օգնում են լույս սփռելու բանակվցութունների ընթացքի և ձախողման պատճառների վրա: Այս համարում տպագրում ենք երկու նամակ:

Ա. Ներսիսյան

Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե պատվիրակության ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հայկական հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Գերագույն Մարմնի պատվիրակության առաջարկությանը

ՌԿԿԿԿ-ի պատվիրակները Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կ. Գ. Մ.-ի պատվիրակների հետ ունեցած բանակցություններից հետ հայտարարում են, որ Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և նրա ազատ ու անկախ քաղաքական

1. նկախ և ինքնուրույն Հայաստանի գոյությունը որը ուրիշ պետությունների, այդ թվում և ՌՍՖԽՀ-ի հետ ունեցած իր բոլոր հարաբերություններում պահպաներ իր կատարյալ ինքնիշխանությունը:
2. յսպես կոչված Թուրքահայաստանի հետ այսպես կոչված Ռուսահայաստանի տարածքային միավորումը, այսինքն՝ նախկինում հայերով բնակեցված թուրքական տարածքի միավորումը առաջինին, բավական է Հայաստանի ազատ տնտեսական ու քաղաքական գոյության համար:

Ռ.Կ.Կ.Կ.Կ-ն իր վրա պարտավորություն է վերցնում ներգործելու ՌՍՖԽՀ-ի Կառավարության վրա՝ որպեսզի նա ստանձնի նախաձեռնություն և աջակցություն ցույց տա 2-րդ

կետում նշված անհրաժեշտությունը իրականացնելու համար:

Ռ.Կ.Կ.Կ.Կ-ն ի գիտություն է ընդունում Հ.Հ. «Դաշնակցություն» կուսակցության հայտարարությունը, որ 1 և 2 կետերում նշված դրույթները կենսագործող Հայաստանի Կառավարությունը խոստանում է իր լիակատար աջակցությունն ու հնարավոր օգնությունը և մասնավորապես պարտավորում է.

ա/ ինչպես իր հայրենիքում, այնպես էլ նրանից դուրս ագիտացիա մղել Հայ ժողովրդի շրջանում, նպատակ ունենալով նրան միավորել Հայաստանի Կառավարության շուրջը, որը կենսագործում է 1 և 2 կետերում նշված դրույթները:

բ/ ամեն կերպ աջակցել, որ ստացվեն Եվրոպական տերություններ օգնությունն ու աջակցությունը՝ ՌՍՖԽՀ-ի նախաձեռնությամբ հայկական հարցը վերոհիշյալ իմաստով լուծելու գործում:

գ/ իր կողմից ուժերը ներածի չափ ներգործել Թուրքիայի վրա, նպատակ ունենալով ստանալ նրա համաձայնությունը՝ վերը նշված իմաստով Թուրքահայաստանից բավականաչափ տարածք Ռուսահայաստանին միացնելու համար:

ՌԻԳԱ, Բիլդերլինգհոֆ

14 հուլիսի 1921 թվականի:

ՌԿԿԿԿ Քաղբյուրո ընկ. Մոլոտովին

Արտգործողկոմ քնկ. Չիչերինին

Հարգելի ընկերներ.

Նոր ընկ. Չիչերինից ստացա մի ծածկագիր հեռագիր այն հաղորդմամբ, որ Կենտկոմը վճռականորեն մերժում է դաշնակների հետ կնքված համաձայնագրի նախագծի 2-րդ կետը, որ համաներման հարցը քննարկվելու է Երևանում, որ բոլորովին անհանդուրժելի է շոշափել Թուրքահայաստանի հարցը, քանզի մենք հաստատակամորեն պահպանում ենք Մոսկվայի պայմանագիրը, և ուստի մեծ դժբախտություն կլինի, եթե դաշնակների մոտ մնա մեր կողմից նախաստորագրված թուղթը: Ընկ. Չիչերինն ասում է, որ մենք, սարսափելի դժվարին կացության մեջ ենք գցել, և հարցնում է, թե չի կարելի այնպես կազմակերպել, որ «հետքեր չմնան»:

Ես խորապես ափսոսում եմ, եթե ակամա անախորժ դրության մեջ եմ գցել, բայց ինձ մեղավոր համարել չեմ կարող: Այս մասին՝ ստորև: Նախ և առաջ ես կցանկանայի նշել, որ հետքերը վերացնել հիմա, ցավոք, արդեն անհնար է. եթե նույնիսկ ինձ հաջողվեր զանազան խորամանկությունների միջոցով դաշնակներից հետ ստանալ այդ «չարաբաստիկ» թղթի կտորը, ապա այդ դեպքում ևս «հետքեր» կմնային: Քանի որ այժմ արդեն չի կարելի բանակցությունները ոչնչացնել և դրանք միևնույն է՝ կմնան որպես փաստ, այսինքն՝ մի փաստ, որը թղթիկի ոչնչացման դեպքում անգամ կմնա և բանակցությունների ժամանակ ամբողջ ասվածը: Բայց ես մի անգամ ևս կրկնում եմ, որ

մեր բոլոր հայտարարություններն այստեղ մենք արել ենք **<u>բացառապես անձամբ մեր անունից.</u>** ինչը բազմիցս ընդգծվել է մեր կողմից, և ուստի դրանք ոչ մի պարտադիր ուժ չունեն: Այդ պատճառով էլ մենք այստեղ ոչինչ չենք ստորագրել: Եթե անգամ ընդունենք, որ իմ և անձնական հայտարարությունները, իրավական ուժ ունեն, ապա ես կաշխատեմ ստորև ցույց տալ, թե այդ անախորժ դեպքից կարելի է անել շահավետ կոմբինացիա: Իսկ այժմ ես ուզում եմ երկու կետով շոշափել գործի փաստական կողմը:

Բացարձակապես ոչ մի ինֆորմացիա և բոլորովին ոչ մի դիրեկտիվ կամ ցուցում ես ստացած չեմ եղել, և հենց այդ բանակցություններում ես, իհարկե, չէի կարող գիտենալ, թե ինչն է վնասակար և ինչը՝ օգտակար: Իսկ քանի որ բանակցությունների ժամանակ այնուամենայնիվ լռել չի կարելի, քանզի այդ դեպքում ոչ մի բանակցություն էլ չէր լինի, իսկ մեր արևելյան քաղաքականությունը շատ քիչ ու շատ վատ է հայտնի ինձ (ի դեպք նշեմ, որ հենց Մոսկվայի պայմանագիրն ինձ իմիջայլոց է հայտնի), - ապա իմ բոլոր ճառերում ու հայտարարություններում ես բնականաբար կարող էի ելնել մեր միջազգային քաղաքականության ընդհանուր նախադրյալներից: Կտրականապես պնդում եմ, որ դաշնակների հետ բանակցությունների ամբողջ ընթացքում ես այնպիսի բան հայտարարած չեմ եղել, ինչ որ մենք արդեն վաղուց ու բազմիցս ասել էինք: Դեռ Բրեստի ժամանակ մենք բոլորս (և ես անձամբ Հաքքի փաշայի հետ բանակցություններում) ասում էինք, որ մենք հայկական հարցի լուծումը չենք պատկերացնում առանց Թուրքահայաստանի հարցի լուծման, և պահանջում էինք ինքնորոշման իրավունք նաև հայ փախստականների համար,

նույն բանը ես բազմիցս հայտարարել եմ Բեռլինում՝ Թալաաթի հետ իմ ունեցած բանակցությունների ժամանակ, նույն բանը անցյալ տարի դաշնակներին հայտարարեցին Կամենևը և Լիտվինովը, ինչի մասին դաշնակների մոտ կան միանգամայն իրական «հետքեր», նույն բանը, վերջապես, կա նաև մեր կառավարության և Կոմինտերնի բազմաթիվ հայտարարություններում: Կրկնում եմ, Ռիգայում մենք ոչ մի նոր բան չէինք ասել, բայց բազմիցս վերապահում էինք անում, որ մենք ասում ենք անձամբ մեր անունից: Իսկ եթե այդ ամենը հարկավոր էլ չէր ասել, ապա հարկավոր էր մեզ զգուշացնել: Սակայն ես մինչև հիմա էլ համաձայն չեմ, որ հարկավոր չէր այդ բանն ասել:

Ես ելնում եմ ընդհանուր քաղաքական իրադրության իմ ըմբռնումից, և, գլխավորապես, իհարկե, իմ սեփական **եվրոպական** տեսակետից: Ինչպես միշտ, ես առանձնապես հաշվի էի առնում այն, թե բանակցություններն ու համաձայնությունը դաշնակների հետ ինչ տպավորություն կարող են գործել խոշոր կապիտալիստական երկրների պրոլետարական զանգվածների վրա: Որքան էլ կարևոր լինեն ամեն կարգի բանակցությունների գործնական արդյունքները ինքնին, ես, սակայն, միշտ առանձնապես հաշվի եմ առնում դրանց ագիտացիոն-պրոպագանդիստական նշանակությունը և երբեք չեմ ասում անգամ մեկ մի խոսք, որը այս տեսակետից կարող էի օգտագործված լինել մեր դեմ, ինչի պատճառով այնքան հաճախակի են կոնֆլիկտները Արտգործժողկոմատի հետ:

Ինքնորոշման հարցը մեր միջազգային ագիտացիայի ամենաարմատական հարցերից մեկն է: Իմպերիալիստական խառնակչությունը, որը հանգեցրեց համաշխարհային

պատերազմին և էլ ավելի է արվել դրանից հետո, քանի որ զանգվածներին մղում է **դեպի մեր կողմը**, քանի որ մենք այդ խառնակչությանը ոչ մի մասկացություն չունենք և **ոչ մի իմպերիալիզմ չենք ծածկում**, այլ հանդիսանում ենք **բոլոր** ճնշված ժողովուրդների միակ ու ճշմարիտ պաշտպանները: Հենց այժմ, երբ մեր **իրական** քաղաքականությունը Կովկասում որոշ հակասության մեջ է մտել այդ **իդեալական** քաղաքականության հետ, երբ ագիտացիան մեր դեմ կովկասյան սոցիալ-համաձայնողականների կողմից անկասկած խիստ վնասում է մեզ, իմ կարծիքով աննպատակահարմար կլիներ հայկական հարցը իբրև **մեր** հարցը ճանաչելուց հրաժարվելը և այդ հարցում գրավել այնպիսի դիրք, որը տարբերվում է այն դիրքից, որ մենք գրավում ենք Բրեստի ժամանակներից: Հենց հիմա, երրորդ ինտերնացիոնալի ճգնաժամի և արևմտյան բանվորների մտքերում ստեղծված անխուսափելի խառնաշփոթության պահին, նկատի ունենալով մեր այսպես կոչված «աջացումը» ներքին քաղաքականության մեջ, առանձնահատուկ ուղղագիծ մեր միջազգային քաղաքականությունը, այն խիստ կարևոր նշանակություն ունեցավ: Մեր ամենաղաղակող թշնամու՝ դաշնակների անցումը մեր կողմը ոչ միայն մահացու հարված կհասցներ Չխնիձեի ու ընկ. Ագիտացիային այլև կլուսավորեր որոշ չափով տատանվող բանվորների մտքերը Արևմուտքում, որոնց բոլոր կողմերից ջանում են համոզել, որ կոմունիստական փորձերը Ռուսաստանում կատարյալ անհաջողության են մատնվել, քանի որ Լենինը իբր ստիպված էր նահանջել ներքին քաղաքականությունում, որտեղ նա ընթանում է դեպի «ներքին կապիտալիզմ» և արտաքին քաղաքականության մեջ, որտեղ նա ստիպված է համաձայնության դիմել որոշ իմպերիալիստների

հետ, ավելի թույլերին հոշոտելու հանձնելով ավելի ուժեղներին (Անգլիայի հետ կնքված համաձայնությամբ նրան հանձնվեցին ինդուսները, աֆղանները և այլն, Քեմալի հետ կնքված պայմանագրով հայերի հանձնումը թուրքերին և այլն): Հենց Արևելքում ինքնորոշման պաշտպանության գնի ուղղվածությունը պետք է ունենա առանձնահատուկ կարևորություն, քանի որ Արևելքում ավելի, քան ուրիշ որևէ տեղ, ազգային ազատագրական շարժումը շարունակվում է և կընթանա կոմունիստական դրոշի ներքո, քանի դեռ մենք դրան հավատում ենք:

Ես ամենևին չեմ կասկածում, որ **եվրոպական տեսակետից մեր նման վարքագիծը և մեր համապատասխան պատասխանը դաշնակիներին միայն օգտակար կլինեին**: Եվ ես չեմ հասկանում, թե այս ամենը ինչպես կարող էր գանահատվել իբրև քեմալականների հետ կնքված Մոսկվային պայմանագրի խախտում: Չէ որ մենք պետք է և կարող էինք մեր պատասխանը հաղորդել դաշնակիներին՝ Անկարա, որպես ՌԿԿԿԿ-ի սկզբունքային կարծիք, այլ ոչ թե կառավարության կարծիք, և որ ՌՍՖԽՀ-ի կառավարությունը խստորեն պահպանելով Մոսկվայի պայմանագիրը, և չի ցանկանում միջամտել ոչ Թուրքիայի, ոչ Հայաստանի ներքին գործերին, Անկարայի կառավարությանը Խորհրդային Հայաստանի հետ բանակցությունների մեջ մտնել այն հիման վրա, որ իրենք՝ քեմալականներին արդեն բանակցություններ էին վարում դաշնակների հետ, այսինքն՝ Հայաստանի նախկին կառավարության հետ: Կրկնում եմ, չեմ կարող հասկանալ, թե դա ինչպես կարելի էր համարել պայմանագրի խախտում, բայց ես լիովին հասկանում եմ, որ Քեմալը անհարմար դրության մեջ կընկներ, քանզի չէր կարողանա մեզ պատասխանել, որ դաշնակներին առաջարկում էր

Թուրքահայաստանի մի մասը Ռուսահայաստանի ապախորհրդայնացման դիմաց, և միևնույն ժամանակ, երբ այժմ սիրախաղ է անում Անտանտի հետ, պարտավորություն ունենալով հայկական հարցում, չէր կարող պատասխանել մեզ, որ թքած ունենա հայերի վրա և ոչ մի բանակցություն էլ չի ցանկանում Հայաստանի հետ: Այսինքն՝ Քեմալը լավ դաս կստանար, որ հարկավոր չէ մեր թիկունքում վարել մեր դեմ թշնամական քաղաքականություն: Իսկ ես ենթադրում եմ, որ մեր բոլոր ակամա հովանավորյալներին հարկավոր է ժամանակ առ ժամանակ դասեր տալ:

Սակայն ես չեմ համարձակվում դատել, թե հարցն ինչպես է դրված **արևելյան** տեսակետից, մինչև որ տեղում չծանոթանամ արևելքի հետ: Ես ըստ երևույթին ինձ համար պատկերացնում եմ այնպիսի դրություն, երբ քեմալականների համար մեր կողմից ստեղծվող ամեն մի անհարմարություն անշահավետ է նաև մեզ համար: Ես հասկանում եմ նաև, որ որոշակի պայմաններում մենք կարող ենք ստիպված լինել վարել այնպիսի քաղաքականություն, որի դեպքում պաշտպանելով փոքր ժողովուրդներին, մենք փաստորեն ստիպված ենք նրան հանձնել քեմալիստական իմպերիալիզմի հոշոտմանը, ինչը կարող է ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ մեր լավ վերաբերմունքով իսլամիզմի հետ ամեն ինչ կարող է զոհաբերվել և երբ, հետևաբար, լավագույն դիվանագիտությունը կլիներ մեր բոլոր այդ մեղքերը սքողելու ու մեր ընդհանուր գծի խոտորումները սքողելու ունակությունը:

Եթե Արևելքում լիներ իրոք նման քաղաքականության անհրաժեշտությունը, ապա մենք այստեղ բազմաթիվ սխալներ կգործեինք: Դրա մեղքը ընկնում է նրանց վրա, ովքեր մեզ չեն

նախազգուշացրել, բայց, սխալներն ուղղել հարկավոր է: Հարց է, թե ինչպես:

Ես հիմա էլ ոչ մի ցուցում չունեմ: Եթե ես պարզապես հաղորդեմ դաշնակներին, որ երկրորդ կետը բացարձակապես անընդունելի է, ապա իմ կարծիքով կստացվի **<u>մի սխալ ևս</u>**: Դաշնակներն ու արտասահմանում ունեցած նրանց բոլոր օրգանները, որոնք ամենուրեք ճանաչված են նրանց կողմից, որպես հայկական հանրապետության պաշտոնական ներկայացուցչություններ, վայնասուն կբարձրացնեն և ամեն կերպ տհաճություն կպատճառեն մեզ, իսկ Քեմալի առջև մենք ոչինչ չենք շահի, քանզի բանակցություններն ու մեր այստեղի հայտարարությունները նրան հայտնի կդառնան: Ուստի դաշնակներին հարկավոր է ձգձգել: Ես նրանց կասեմ, որ ոչ մի պատասխան չեմ ստացել և Մոսկվայից պատասխան չեմ խոստանում: Երկուշաբթի կմեկնեմ, և կխոսենք ու կծրագրենք, թե ինչ պատասխանենք նրանց: Ինչ վերաբերում է քեմալականներին, ապա իմ, «սխալով» (եթե դա սխալ է) իմ կարծիքով դեռ շատ բան կարելի է շահել: Իմ կարծիքով, հարկավոր է ընդհանրապես այս դեպքում նացառեմուեվի(՞) միջոցով հաղորդել, որ դաշնակներն են խնդրել բանակցություններ ՌԿԿԿԿ-ի հետ՝ Հայաստանում համատեղ աշխատանքի հարցի մասին: Այդ բանակցությունների ժամանակ նրանք համառորեն պնդում էին հայկական հարցը: Կենտկոմի ներկայացուցիչները արտահայտվեցին սկզբունքորեն.... և այդ ժամանակ էլ շարադրեցին երկրորդ կետը, բայց ՌՍՖԽՀ կառավարությունը այն աստիճան լոյալ է Մոսկվային պայմանագրի իրականացման գործում, որ ներգործում էր ՌԿԿԿԿ-ի վրա՝ նրա ներկայացուցիչների այդ հայտարարությունը գրելու առիթի իմաստով: Եվ դա չնայած այն բանին, որ

դաշնակները պաշտոնապես հայտարարեցին Քեմալի կառավարության հետ իրենց բանակցությունների մասին, և որ վերջինս խոստացավ նրանց Թուրքահայաստանի մի մասը Խորհրդային Հայաստանի ապախորհրդայնացման դիմաց: Այսպիսով ոչ մի միջադեպ նույնիսկ այդ դեպքում չի կարող ծառայել մեր, բարեկամության, ամրապնդմանը Քեմալի հետ: Եթե իմ Արևելք մեկնելը նման բնույթ ունենա, ինչպես ես եմ ենթադրում, և ես լինեմ Անկալայում, և եթե նման քաղաքականությունը Քեմալի նկատմամբ, տեղում ծանոթանալուց հետո լինի նամական, ապա ես ինքս էլ Անկարայի կառավարության հետ կկարողանամ խոսել նույն ոգով: Ավելի հանգամանորն՝ անձնական զեկուցման ժամանակ:

Ռիգա, 28/VII, 1921 թ.

Կոմունիստական ողջույնով՝ Ա. Իոֆե

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշոտ Մանուչարյան – Պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դոցենտ (ashot.manucharyan.1959@mail.ru)

Աշոտ Ներսիսյան – Պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր (ashot-nersisyan@mail.ru)

Արամ Հովհաննիսյան - Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դոցենտ (ahov@mail.ru)

Արշակ Ներսիսյան – Պատմության բակալավր, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի բակալավրիատի 4 – րդ կուսի ուսանող (arshaknersisyan@mail.ru)

Գրիգոր աբեղա Խաչատրյան – Հայ առաքելական եկեղեցու Փարիզի թեմի հոգևոր հովիվ (stgregoire13@yahoo.fr)

Նոննա Խաչատրյան - Տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դոցենտ (nonnakhachatryan@yahoo.com)

Սուրեն Սարգսյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող (sargsyansuren@yandex.ru)

Վարդուհի Սիմոնյան – ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ (mher.ghazaryan1988@mail.ru)

Վալերի Թունյան – Պատմական գիտությունների դոկոտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող(tounyan@rambler.ru)

Ֆարնուշ Խոշբախտ - ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ (farnoosh_khosh@yahoo.com)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

1920 թ. հոկտեմբերի 28-ի հայ-ռուսական համաձայնագրի նախագծի քննական վերլուծություն ---------- 3

ВАЛЕРИЙ ТУНЯН

Армянский фактор: разлом имперской политики и глобализация ---------- 44

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ ժողովրդական կուսակցության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. --------- 68

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեությունը (1990-2001թթ.) --- 95

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Այլադավանության դեմ պայքարի անհրաժեշտության հիմնավորումը հայ առաքելական եկեղեցու պատմության ընթացքում ---------- 115

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Գևորգ Ա. Բյուրականցի կաթողիկոսի ծագման շուրջ ---- 143

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լևոն Մեծագործի և Գրիգոր Քարավեժի հարաբերությունների պատմությունից (12-րդ դարի 90-ական թվականներ) ------ 153

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Այլադավանության դեմ պայքարը՝ որպես ազգային և հոգևոր անվտանգության ապահովման կարևորագույն պայման ----------169

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

NONNA KHACHATRYAN, FARNOOSH KHOSHBAKHT
The philosophy of ethics presence in the management activity ---------- 188

ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ----------200

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ----- 212

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Պատմություն և քաղաքականություն» հանդեսում տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ: Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: Հոդվածի շարվածքը պետք է լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4: Հոդվածի սկզբում անհրաժեշտ է գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն և ազգանունը՝ մեծատառերով: Հղումները պետք է դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշելով աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը): Հոդվածի բանալի բառերը, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են: Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,

ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցեն (e-mail): Հոդվածներն ուղարկել **generalsepuh@gmail.com** էլեկտրոնային հասցեներով: Հանդեսն ունի իր համացանցային կայքը (**www.generalnews.am**), ուր զետեղված են նրա էլեկտրոնային տարբերակները, հոդվածների վերաբերյալ կարծիքները, տեղեկություններ խմբագրական խորհրդի կազմի և էթիկայի կանոնների մասին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
ԹԻՎ 2(3)

Հիմնադիր՝ «Զորավար Սեպուհ պատմաքաղաքական վերլուծական կենտրոն» ՀԿ

Գրանցման համար՝ 2111711003993, գրանցման ամսաթիվ՝ 02.02.2018
Հասցե՝ Երևան, Էրեբունի թաղամաս, Սարի թաղ 3 – րդ շարք, բնակարան 39, հեռ. 554508

Նյութերը գրախոսությունների հետ միասին ընդունվել և խմբագրական խորհրդի կողմից երաշխավորվել են տպագրության 2019թ. ապրիլ - հունիս ամիսների ընթացքում:

Համարի պատասխանատու՝ Ա. Ներսիսյան
Ստորագրված է տպագրության՝ 15.07.2019

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60X84/16:
Ծավալը՝ 14 պայմ. տպ. մամուլ:
Տպագրության եղանակը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 100:

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Երևան, Ա. Միկոյան փ., 2/2
էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com
Հեռ. (+374 94) 50 99 00